


Պրոֆ. Ա. Գ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՆԱՄԱԿՆԵՐ  
ՊԵՐԻՖԵՐԻԱԼԻ ԲԺՇԿԻՆ

Ի ՄԱՍ

Ա Ի Ֆ Ի Լ Ի Ս



ՊԵԶԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԱԿԱՆՔՆԵՐՆԵՐ  
ՑԵՐԵԿՆԵՐ

1038

14.08.2013

10 JUL 66

616.9

7-82

Գրահանություն Ե. Պ. ՀԱՅԱՍՏԱՆԻ

մայ.

ՆԱԾՈՎԿՆԵՐ  
ՊԵՐՄՖԵՐԵԱՅԻ ԲԺՇԿԻՆ


ՄԱՍ

1006 9672  
28033

ԱՒՏՈԼԻՍ

2150

ՊԵՏՏՐԱՍ - ԲԺՇԿԱՐԱԳԻՆ



1933

Հ Ե Գ Ի Ն Ա Կ Բ

Հայաստանի շրջանային բժշկին և նվիրում  
իր համեստ աշխատաքյալը:

Թարգմ. Ա. Մելիքյան Ցնի. Խմբագիր Գ. Զեմյան  
Սքամագրեց՝ և Արտյան Պետրատի տպաքան,  
Ցերեվան Պատվեր 2:30 Գլավիթս 8312 (բ.)  
Հրատ. 1790, Տիրած 1200

Հասնձնված և արտադրության 15 հոկտեմբերի 1933 թ.  
Ստորագրմած և տպելու 25 նոյեմբերի 1933 թ.

«Նամակներ պերիֆերիայի բժշկին» իմ  
աշխատությունը ուժերիս ներածին չափ մի  
ոգնություն ե, վոր ցանկանում եմ առաջարկել  
յերիտասարդ բժշկին՝ մաշկի և վեներական հի-  
վանդությունների բնագավառում կատարելիք  
աշխատանքում։ Բացարձակապես հավակնու-  
թյուն չունենալով լուծելու այն բոլոր տեսա-  
կան ու գործնական խնդիրները, վորոնք առա-  
ջարկել են իմ յերիտասարդ ընկերները, յես  
աշխատել եմ պատասխանել (ինչպես թվում և  
ինձ) ամենաակտուալ Հարցերին։

Այս գրածիցս շատ բան փորձառու աշխա-  
տողի համար, անկասկած, կարող ե թվալ չա-  
փազանց սովորական, հանրածանոթ։  
Բայց նկատի առնելով, վոր մեր աշակերտնե-  
րից շատ քչերն են կարողացնել խորացնել իր-  
ենց գիտելիքները մեր դիսցիպլինից, վոր նը-  
րանցից շատերը, բժշկականության ուրիշ բնա-  
դավառում աշխատելիս, ակամա, յերբեմն և  
հակառակ իբենց ցանկության, կարող են հան-  
դիպել մաշկի ու վեներական հիվանդություն-  
ներով տառապողների, իսկ ուրիշ մասնադեստ  
չլինելու պատճառով կկամենան ոգնության  
դալ այդ հիվանդներին, յես կարծում եմ, իմ  
«Նամակների» հասարակ ձևը հասկանալի կը-  
լինի։

Տարիների ընթացքում մշտական կառ պահանջման պահանջման աշակերտներիս հետ, վորոնք բժշկի պաշտոնով աշխատում են շրջաններում, յես նկատել եմ նրանց գժվարությունները, լսել եմ նրանց դանզատները և ստացել եմ նրանցից շտատ նամակներ:

Իմ «Ամակները» նրանց պատասխաններն են: Սա մի փոքր եղություն չէ զափով լուծել յերիտասարդ բժշկին հետաքրքրող հարցերը և դրանով ողնության դալ նրան հեռու պերի-Փերիայի ծանր աշխատանքում:

Առաջին մասում յես խոսում եմ սիֆիլի-սի մասին, հետեւյալ մասերում յենթադրում եմ խոսելու մաշկի հիվանդությունների (արհես-տակցական դերմատոզների), գոնոռքեայի, ինչպես և մի շարք մեթոդական խնդիրների մա-սին:

Պրոֆ. Ն. Գ. Հովսեփյան

1933 թ. նունիս  
Յերևան

## I. ԿՈՇՏ ՇԱՆԿՐԻ ԱԽՏՈՐՈՇՄԱՆ ՍԱՍԻՆ Թանկագին ընկեր

Մեծ հաճույքով պատասխանում եմ ձեր նամակին և այսու տալիս եմ ձեզ մի քանի գործ նական խորհուրդներ կոչտ շանկրի ախտորոշ-ման վերաբերյալ: Այս հարցը, անկաս-կած, չափազանց կարևոր է, վորովհետեւ հի-վանդին ասած ձեր այդ առաջին իսկ խոսքից շատ բան ե կախված—դուք վճռում եք չափա-զանց պատասխանատու խնդիր՝ հիվանդ ե նա արդյո՞ք սիֆիլիսով, թե վոչ:

Ապա ուրեմն ուշադիր, լուրջ և զգույշ յեղեք: Հին բժիշկները վարժվել ելին և մեծ հմտություն ելին ծեռք բերել շոշափել շանկրը, պար-զել նրա ձևերը, սերտությունը, ծավալը. Նը-րանք յերկար ժամանակ զբաղվել են նկարա-գրելով շանկրի բազմազան տեսակները, դասա-վորումը և այլն. այս բոլորը, անշուշտ, հիմա յել ունեն մեծ նշանակություն, և առանց նրանց չի կարելի վարվել, բայց և այնպես շանկրի ախտորոշման ծանրության կենարոնը փոխադրված ե լաբորատորիա: Ներկայումս անհրաժեշտ ե ախտորոշել շանկրը մանրե-դիտական կարգով, ուստի հասկանալի յե ձեզ, թե ինչու յուրաքանչյուր վեներական բժշկի համար, վորտեղ ել լինի նա, անհրաժեշտ ե

ունենալ մանրադիտակ: Առանց մանրադիտակի վեներաբանը չի կարող և չպետք է աշխատի: Գտնել դժգույն սպիրոխետը — ահա կոշտ շանկրի ախտորոշության խնդիրը: Յեթե զտել եք դժգույն սպիրոխետը, կնշանակի ախտորոշել եք կոշտ շանկրը, այսինքն առաջնակի սիֆիլիսը:

Մեր լաբորատորիայում ձեր ունեցած աշխատանքներից, հավանական ե, հիշում եք, վոր մենք մի քանի յեղանակով ենք փրնուրում դժգույն սպիրոխետը. հույսով եմ, վոր այդ յեղանակների մասին մանրամասնորեն զրել ձեզ կարիք չկա: Վեներաբանության ժամանակակից յուրաքանչյուր դասադրքի՝ մեջ դուք կդտնեք այդ յեղանակների նկարագրությունը, գուցե և նկարները: Ամենահարժար, հեշտ և արագ ձեվն ե՝ գտնել սպիրոխետը մըթնացրած դաշտում: Վորոշ հմտություն ունեցողը շատ հեշտությամբ կարող է ճանաչել կենդանի սպիրոխետները նրանց բնորոշ տեսքից, վորորտանման շարժումներից, կանոնավոր ու թեք վորորներից և այլն: Այս յեղանակը այնքան հեշտ ե, վոր հաճախ հիվանդներն անդամ կարողանում են ճանաչել ու գտնել «իրենց սպիրոխետները» բժշկի ուղղած պրեսկրիպտը մի քանի անգամ նայելուց հետո:

Յեթե հնարավոր չե մանրեադիտակի մըթնացրած դաշտ ունենալ, կարելի յե սարքել այդ պիսին, ներկելով շանկրի յեղից վերցրած շիճուկը սև ներկով (Բուրի-յի յեղանակը):

Այս յեղանակը նույնպես կարելի յե կատարել չափազանց հեշտ և արագ կերպով: Պլատինի կանթով վերցրած շիճուկի փոքրիկ կաթիլը պետք ե դնել առարկայական ապահով վրա և խառնել մի կաթիլ չինական սև ներկի (տուշի) հետ. այդ յերկու կաթիլը ջանքով խառնել միմյանց հետ և յերկրորդ առարկայական ապահով լավ քտել առաջնին այնպես, ինչպես վարդում են արյան կաթիլի հետազոտության ժամանակ: Պահելով մի քանի րոպե ողի մեջ, չորացնել այդ բարակ շերտը և հետազոտել իմմերսիայով:

Սկսնակի համար, իմ կարծիքով, այս յեղանակը փոքր ինչ վտանգավոր ե, վորովհետեւ սպիրոխետների պայծառ վոլորտներն այնքան պարզ ու բնորոշ չեն, շուտ չորացած պրեպարատի մեջ յեղած զանազան մանր շերտերն ու ճեղքերը կարելի յե սպիրոխետի տեղ ընդունել, ուստի Բուրի-յի յեղանակը կարելի յե առաջարկել ձեզ միայն այն ժամանակ, յերբ դուք վորոշ վորձառություն ձեռք կրերեք սպիրոխետըն այս ձեռով գտնելու մեջ: Ինչպես ձեզ հայտնի յե, լավ սպիրոխետներ են ստացվում Գիմզայով ներկելիս:

Մեր լաբորատորիայում, բացի պարտադիր մթնացրած դաշտից ովտվում ենք համարլա բացառապես Գիմզայի և Ֆոնտանայի ձեռով ներկելով:

Այս յերկու յեղանակն ել այնքան ել «ակնթարթային» չեն, վորոշ ժամանակ են պահան-

ջում պրեաբատը պատրաստելու համար (ամբացում, ներկում և այլն), բայց ըստ մեր դիտողությունների, չափազանց հուսաղրական են։ Շատ ու շատ միջոցներ են առաջարկված դժույն սպիրոխետի ներկման համար։ այդ միջոցներից մենք շատերն ենք կիրառել և ցույց տվել ձեզ, մեր լաբորատորիայում աշխատելիս, բայց դրանց մեջ մեր սիրածն այդ յերկուսն են։ Գիմզայի ներկման տեխնիկան գուք կզանեք համարյա բոլոր դասադրքերում, իսկ ֆոնտանայի, կամ ավելի ճիշտը ֆոնտանա—Կրաուց-ի ձեւը հետեւյալն ե. ույցսերու մի բարակ քսուկը չորացնել ողի մեջ, ածել վրան նեռսալվարսանի յերեք քառորդ տոկ. թարմ պատրաստած լուծույթ, տաքացնել կես բուլե մինչև գոլորշու յերեվալը, հետո լվանալ պրեաբատը ջրով և ածել վրան արձաթի ավշակային մեկ տոկոսանոց լուծույթ. դըրանից հետո նորից կես բուլե տաքացնել, ապա նայել իմմերսիայով։

Արծաթի ավշակային մեկ տոկոսանոց լուծույթը պատրաստել այսպես. բորակային արծաթի մեկ տոկոսանոց լուծույթին կաթիլ կաթիլ ավելացնել ավշակի 1:20 բացարած սպիրտ այնքան, մինչև վոր սուրճի գույնի պղտորություն ստացվի։ Ամեն անդամ խնամքով պատրաստեցեք քսուկը. վերցրեք ույցսերումը շանկրի յեղրից, քնքույց կերպով քերելով յեղրի մակերեսը պլատինի կանթով կամ թիակիկով. նախորոք լվացեք շանկրը բնախոսական լու-

ծույթով, իսկ յեթե շանկրն արդեն բուժած ե (փոշի, ոծանակ գործադրված և այլն), լվանալուց հետո մեկ որով տաք փաթեթ դրեք նույն լնախոսական լուծույթից և միայն դրանից հետո վերցրեք քսուկը։ Յեթե սպիրուխները չեք գտնում անդամ կրկնակի հետագրաւելիս, փորձեք ծակել գեղձը։ Գեղձի ծակման տեխնիկան բավականին հասարակ ե. ստեր ջած սրսկիչի վրա հաղցրած ասեղը թեք ուղղությամբ մացնել գեղձի մեջ, վորը պետք ե ամուր բռնել մատներով, և դուրս քաշել մի կաթիլ հեղուկ։ Անհաջողության դեպքում նախ որոք կարելի յե գեղձի նյութի մեջ ներարկել 1-2 խոր. ս.մ. բնախոսական լուծույթ, մի քանի բուլե մարձել գեղձը և հինգ կամ վեց րոպեցից հետո նորից դուրս քաշել հեղուկը։ Սովորաբար ստացվում ե բնախոսական լուծույթ, խառնված գեղձի հյութի հետ։ Հենց այդ խառնուրդը հետազոտել սպիրոխետների վերաբերյալ։ Յեթե ինչպես գրում եք, դուք մանրադիտակ չունեք, վորը շատ ցավալի յե, այն ժամանակ ձեր խնդիրը չափազանց դժվարանում ե։ Յեթե կլինիկական տվյալներն անդամ ամենաաննշան կասկածանք են հարուցում ձեր մեջ կոչտ շանկրի վերաբերյալ, իսկ նման կասկածանքի տեղիք կարող ե տալ սեռական դործարանների վրա յեղած ամենահասարակ ձանկովածքը կամ ամենասովորական քերծվածքը, աշխատեցեք ուղղել ձեր հիվանդին մոտակա լաբորատորիան։ Հիվանդության պատկերի

մթագնությունից խուսափելու պատճառով, շանկրի բժշկության համար վոչ մի փոշի կամ ոծանակ մի նշանակեք. դա կղթվարացնի սպիրոխենների վիճակումը. աշխատեցեք, վորքան կարելի յէ, շուտ ստանալ պատասխանը և շուտ յետ դարձնել հիվանդին: Դուք, անշուշտ հասկացաք թե ինչու յեմ այդպես պնդում— դա արորտիվ բուժման համար ե: Յեթե դուք այդ հընարավորությունից զուրկ եք, ապա ի՞նչ պետք ե անեք (յես շատ լավ եմ պատկերացնում ինձ ձեր կայանը ձմեռը կամ ուշ աշնան ժամանակ), յերբ ամեն ինչ ծածկվում ե ձյունով, ճանապարհները փչացած են, փոխադրական միջոցներ չունեք և այլն): Ակնհայտ ե, վոր դուք հենց այդ իմաստով ել դնում եք հարցը, վորովհետեւ միայն նման դեպքերը կարող են հարուցել տարակուսանք ու շփոթվածություն:

Կա յերկու յելք. կամ պետք ե սպասել, վոր անցնի յերկրորդ ինկուբացիոն շրջանը (մոտավորապես 4-6 շաբաթ), և սկսել բուժումը յերկրորդ շրջանի ընդհանուր յերեվույթների հայտաբերումից հետո, կամ ձեռնամուխ լինել հիվանդի բուժմանն անհամող, առանց սպասելու ընդհանուր յերեվույթներին: Վո՞րն ե ոգտակար հիվանդի և շրջապատողների համար:

Առաջին դեպքում, իհարկե դուք և ձեր հիվանդը անկասկած հավատացած կլինեք, վոր զործ ունեք սիֆիլիսի հետ և կակսեք բժշկել համաձայն կանոնների ու մի քանի տարի: Մերուսուցիչները վաղուց ի վեր այդպես եյին վար

վում և մեզ ել խորհուրդ եյին տալիս վարդել նման ձեռվ: Այս դեպքում վիճակադրությունն ել կլինի ճիշտ և ամեն ինչ կըլինի, ինչպես ասում են, «կարգին»: Յերկրորդ դեպքում դուք ձեռնամուխ եք լինում բուժման առանց հաստատապես համոզվելու, ունի արդյոք ձեր հիվանդը կոչտ շանկր, բայց... Բայց դուք վրկում եք նրան յերկարատես բուժումից յեթե իրոք նա կոչտ շանկր ունի, շրջապատողների համար անվտանգ եք դարձնում նրան և, ով գիտե, ապագայում նրա անկանոն բուժման դեպքում վրկում եք նրան սիֆիլիսի շատ ու շատ «անակնեալ պարզեներից»:

«Իսկ յեթե հիվանդը վոչ թե կոչտ շանկր այլ մի ուրիշ բան ունե՞ր: Ձեռնամուխ լինելով հակասիֆիլիսային բուժման, արդյոք չեմ յենթարկում յես հիվանդին վորեւե վտանգի, վնաս չեմ հասցնում նրան և իմ բուժումով չեմ ավելացնում սիֆիլիսների թիվը վիճակադրության մեջ»:

Այդ հարցին ահա թե ինչ կպատասխանեմ յես ձեզ. առաջին՝ այնքան ել շատ չեն դիմի ձեզ, յերբ շանկը նոր և յերեան յեկել: Այդ ե ցույց տալիս փորձը: Դժբախտաբար հիվանդները դիմում են մեզ չափազանց ուշ նըրանք դիմում են մեզ այն ժամանակ, յերբ համեմատաբար դժվար չե կոչտ շանկր վորոշելը նրա կլինիկական պատկերի, ուղեկցող յերկույթների (գեղձեր) կամ վերջապես անամնեսի, ինկուբացիոն շրջանի, կամ վարակման

աղբյուրի հետազոտման հիման վրա։ Յերկը բորդ՝ յեթե վերը նշածը ձեզ հնարավորություն չի տալիս յեղակացություն անել (իհարկե, դուք չպետք ե աչքաթող անեք ամենաչնչին բանն անդամ, պետք ե մանրակրիխ կերպով կատարեք բոլորը), և սկսեցիք բուժումը, ի՞նչ վնաս դուք կարող եք հասցրած լինեք ձեր հիվանդին։ Իհարկե, վոչ մի սարսափելի բան նրա հետ չի պատահի, յեթե դուք, հաշվի առնելով նման դեպքերում բոլոր անհրաժեշտ պայմանները, մի քանի հատ նեո ներարկեք արյան մեջ և կատարեք բիոխինոլի կամ սնդիկի վորյեվե պրեպարատի մի շարք ներարկումներ։ Չե վոր լաբորատորիայից ստացած դրական պատասխանի դեպքում կամ յեթե դուք անձամբ դնեյիք սպիրոետները, պետք ե սկսեյիք բուժումը։

Զեր հիվանդն անմիջապես վոչ մի վնաս չի ստանա ձեր բուժումից։ Իսկ վորպեսզի վիճակագրությունը «չփչացվի», քարտի մեջ ախտորոշումը նշանակեցիք «կոչտ խոց» (?)— հարցական նշանով։ Այս ամեն անգամ կհիշեցնի ձեզ, վոր դուք մոտիկ ապագայում պարտավոր եք վորոշակի կերպով վճռել՝ ունի սիֆիլիս ձեր հիվանդը, թե վոչ, այսինքն՝ առաջին հենց հնարավորության դեպքում հարցի պարզաբանման համար դուք շարունակելու յեք ձեր դիտողությունները, դուք կատարելու յեք լաբորատորական այս կամ այն հետազոտությունը և այլն։ Նախնա-

կան ախտորոշման ժամանակ դժուած հարցական նշանը կամ կջնջեք, կամ կփոխեք հիվանդության ամբողջ անունը — կղնեք վերջնական ախտորոշումը։ Յես հաստատապես պնդում եմ այս։ Անհրաժեշտ ե, վոր ձեզնից յերկար ժամանակով հեռացող հիվանդը ճիշտ իմանա՝ արդյո՞ք կոչտ շանկը ուներ, սիֆիլիսո՞վ եր վարակվել նա, թե մի այլ աննշան հիվանդությամբ։ Անշուշտ հասկանալի յե, վոր այդ հարցի պարզումը հիվանդի համար միենույնը չե, և դուք պետք ե տաք նրան լուրջ, լավ մտածած պատասխան — պետք ե շարունակի ապագայում բժշկվելը, թե վոչ։ Անորոշ դըրսության մեջ դուք նրան չպետք ե թողնեք։ Դուք պետք ե հաշվի առնեք այն մարդու հոգեկան վիճակը, վորը գուցե վոչ մի սիֆիլիս չե ունեցել, իսկ պետք ե առնքողջ կյանքում տառապի ու տանջվի, ան ու դողով սպասի սիֆիլիսի վորեւ արտահայտությանը կամ, ընդհակառակը, պետք ե անտարբեր վերաբերվի իր լուրջ հիվանդությանը։ Մտածեցեք, յեթե ձեր հիվանդը ամուրի յե, նա կարող ե ամուսնանալ, յերեխաներ ունենալ և այլն։ Կարճ ասած, նա պետք ե ճիշտ, վորոշակի իմանա՝ ունե՞ր նա սիֆիլիս, թե վոչ։ Այսպիսով, անձնական և հասրակական տեսակետից կասկածելի, բայց վոչ ճիշտ անխառորդված կոչտ շանկը ունեցող հիվանդին բժշկելը ավելի քան խելացի յե (անձնական — դուք նրան տալիս եք վաղ բուժման բոլոր առավելությունները), հասարակական

— յեթե իրոք նա հիվանդ է, դուք արագ կերպով նրան անվտանդ եք դարձնում, և նա շրջապատողների համար— արտելում, Փարբեկում, դործարանում և այլն վարակի աղբյուր չի հանդիսանում), բայց այս ունի իր սավերոտ կողմերը: Դուք ձեր բժշկելով կարող եք այնպիսի փոփոխության յենթարկել հիվանդության ընթացքը, վոր ապագայում հնարավորություն չեք ունենա վորոշելու՝ ուներ ձեր հիվանդը սիֆիլիս, թե վոչ:

Դրա համար յուրաքանչյուր անզամ, նման հարց վճռելիս, պետք ե լինել զգույզ և զգոն:

Յեթե դուք հնարավորություն չունեք վնատելու սպերոփիետը, յեթե դուք հընարավորություն չունեք ուղարկելու հիվանդին լաբորատորիա, այս բանը հարկադրում ե ձեզ առանձնապես հմուտ լինել կլինիկական ինդիրներում՝ ճանաչել կոչտ շանկը կլինիկա կան ախտանիշերը, նրան ուղեկցող յերելույթ ները և այլն, և բուժման խնդիրը վճռել միմիայն այն ժամանակ, յերբ այս յերելույթներն ու շանկը, շաղկապված նրա զարգացման ըրջանի, անամնեսի, իսկ յեթե հնարավոր ե, նաև վարակման աղբյուրի հետազոտման (կոն-ֆրոնտացիայի) հետ, տալիս են վստահելի հիմունքներ հիվանդի տկարությունը ընդունել, վորպես կոչտ շանկը:

Կ ու դ ա շ ե ք՝ (ուսուելու և զգոն)  
Հ. պրոֆ. Հոփֆման— Սիֆիլիսի պատճառախոռությունը  
նը. 1907 թ.

2. Պրոֆ. Պ. Ս. Գրիգորյեվ— Վեներական հիվանդությունների ձեռարկ. 1930 թ.
3. Պրոֆ. Պ. Վ. Նիկոլայիկի— Սիֆիլիս և վեներական ախտեր III հրատ. 1922 թ. (հջ 12-15, 19-22)
4. Դ-ր Ս. Յաննիկը— Մաշկի և վեներական հիվանդությունների ձեռարկ. II համ. (հջ 104-109)

## II. ՄԻՖԻԼԻՍԻ ԱԲՈՐՏԻՎ ԲՈՒԺՈՒՄԸ

### Թանկագին ընկեր

Ես զգում եմ, վոր այսորվա նամակս յերկար ե լինելու: Դուք ուզում եք, վոր յես իմ ունեցած, ինչպես զուք եք դրում, «հարուստ» փորձառության հիման վրա դրեմ ձեզ իմ տեսակետը սիֆիլիսի բուժման մասին: Ինձ համար այդ լսելը հաճելի յե, բայց կատարելը, ճիշտ ասած, շատ դժվար: Իմ, թե մի վորմե ուրիշի փորձառությունը կարող ե սիֆիլիսի բուժման ընդհանուր սիստեմի մեջ մտցնել մանրամասնություններ, կարող ե խորացնել բուժման այս կամ այն առանձին հացցը, բայց բուժման սկզբունքները, եյությունը յերկար ժամանակ կմնա անհողողող, մինչև վոր այս բնագավառում հեղափոխություն կատարվի: Մենք, ձեր ուսուցիչները, տեսանք այդ հեղափոխությունը (համեմատաբար քիչ ժամանակ ե անցել (այդ որից) և ավանդում ենք ձեզ հեղափոխության պառակները, տարաբախտաբար հաճախ առանց հիշելու անցյալը, առանց պատմելու ձեզ, թե ինչպես եր դրած բուժման դործը անցյալում:

Վորպեսզի ձեզ համար պարզ լինի, թե  
ինչի մասին ե խոսքը, թույլ տվեք սկսել մի  
փոքր հեռվից, վորովհետև ինձ քաջ հայտնի  
յե, վոր դուք ժամանակ չեք ունեցել առանձ-  
նապես խորանալու մեր մասնագիտության  
պատմական մասի մեջ:

Զափազանց կարեոր առաջին հարցը, վոր  
ծագում ե սիֆիլիսի բուժմամբ պարապող յու-  
րաքանչյուր բժշկի մեջ, մի հարց, վոր բժշկա-  
կանության ուրիշ շատ բնադպառներում յեր-  
րեմն դատարկ ե հանդիսանում — դա այն ե,  
թե յերբ պետք ե սկսել սիֆիլիսի բուժումը:


Յերբ մենք մտարերենք հոչակավոր Ֆուր-  
նիյելին և նրա ասած խոսքերը (բայց մի մո-  
ռոցեք, վոր առաջնակի սիֆիլիսի ախտորոշ-  
ման համար նա շատ քիչ հնարավորություն  
ուներ — միմիայն տեսնելու շոշափել), այն  
ժամանակ մենք կհիանանք նրա կլինիկական  
շրջանկատությամբ և հեռատեսությամբ:  
Ֆուրնիյեն ասում եր՝ «ավելի լավ ե դրոհ տալ  
սիֆիլիսի վրա չափազանց շուտ, քան շատ  
ուշ»:

Ինչպես հասկանալ «շուտ» և «ուշ»: Ֆուր-  
նիյեն բուժման աբորտիվ մեթոդը չեր ընդու-  
նում. նա վոչ մի առավելություն չեր տես-  
նում միայն կոչտ շանկրով սիֆիլիսի բուժ-  
ման մեջ, համեմատած բացահայտ ընդհանրա-  
ցած սիֆիլիսի հետ, յերբ կան վարդացան,  
պապուլաներ, շիթեր և այլն:

Ինչպես բացատրել նման հակասությու-

նը: Անցյալում վաղ սկսած բուժումը (յերբ  
կար միմիայն կոչտ շանկր, իսկ յերկրորդական  
յերեվույթներ չկային) հիվանդին չեր փրկում  
յերկրորդական սիֆիլիսի արտահայտություն-  
ներից, անգամ յերբ կտրում ելին շանկրը, հե-  
ռացնում գեղձերը և այլն: Յերկրորդական  
շրջանը, հիվանդության ընդհանրացումը, վո-  
րի արտահայտություններն են մաշկի սիֆի-  
լիզները, լորձաթաղանթների ցաները և  
այլն, անխուսափելի յեր, վաղ թե ուշ նա յե-  
րեվան եր գալիս: Այս հաստատել ե Ֆուրնիյեն  
շատ որինակներով՝ ականավոր Մորիակայի,  
Ժյուլիյենի և այլոց փորձերով, յերբ, չնա-  
յած ուշադրության առած բոլոր մոմենտնե-  
րին — (շանկրի հեռացնելը և վաղ սկսած բու-  
ժումը), յերկրորդական յերեվույթները, ինչ-  
պես արդեն ամացի, վաղ թե ուշ յերեան ելին  
դալիս:

Զարմանալի վոչինչ չկա, վոր թողեցին  
արորտիվ բուժումը, վորը վոչ մի առավելու-  
թյուն չուներ, համեմատած յերկրորդական յե-  
րեւույթների ժամանակ սկսած սովորական  
բուժման հետ, այս վերջինն ուներ այն առա-  
վելությունը, վոր սիֆիլիսի ախտորոշումը  
այլևս կասկածելի չեր: Այդ պատճառով, ըստ  
Ֆուրնիյելի, «շուտ» պետք ե հասկանալ՝ յերբ  
ախտորոշումը տրված ե ճիշտ: Անհապաղ  
դրոհ ավելի սիֆիլիսի վրա, յերբ հայտաբերել  
եք դուք: Հենց վոր պարզեցիք, վոր ձեր դի-  
մացինը սիֆիլիսոտ ե, անհապաղ սկսեցեք



բուժումը։ Սիֆիլիսի այդ ճիշտ ախտորոշումըն այն ժամանակ տարարազտաբար դրվում «շատ ուշ», վորովհետև, ինչպես ասացի, այն ժամանակ բժիշները հետազոտության ուրիշ յեղանակներ՝ բացի տեսնելուց և չոչափելուց չունեյին։ Ֆուբրիյեն առում եր, վոր ինքը անկարող ե վորոշել սիֆիլիսային շանկը նրա դուրս գալու առաջին որերը։ Նա առում եր — «յես տեղի յեմ տալիս այս կնդրի դժվարության, ավելի կասեմ, անհարության առաջ»։

Ահա թե վորտեղ եր թաղնված անցյալի արորտիվ բուժման անհաջողության առաջին պատճառը — սիֆիլիսային շանկը «շատ ուշ» էին վորոշում։

Երկրորդ պատճառը նրանումն եր, վոր այն ժամանակ չկար սնդիկից ավելի զորեղ և ավելի արագ նեղործող դեղ։

Ընկնելով պաշտպանողական ծածկոցից՝ վերնամաշկից զուրկ վորեւե որդանի մակերեւույթի վրա, սպիրոխետը հետզհետե սկսում է թափանցել հյուսվածքների ճեղքերով ու անցքերով դեպի խորը և շուրջը, ապա ավշատար անօթներով նա մտնում ե ավշային գեղձերի մեջ։ Վորոշ ժամանակից հետո հաղթահարելով այս արդելքը, սպիրոխետը, յալշատար անօթներով գնում ե առաջ և ընկնում արյան հոսանքի մեջ։ Սպիրոխետը արյան մեջ քիչ ժամանակ ե մնում, շատ շուտ նա անցնում է հյուսվածքներին, ամուր նստում նրանց թջիջ-

ների մեջ ու կատարում իր կործանարար գործը։

Ոչդանիզմի մեջ անգամ յենթամաշկային ներարկաւմներով մտցրած սնդիկը, վոր ֆուբրիյենի ուսուցիչ Ռիկորը և ինքը ֆուբրիյեն տալիս ելին հիվանդներին դլմավորապես իմելու ձեռվ, չեր կարող պահանջած արագությամբ տարածվել որդանիզմով։ Անցնում եր վորոշ ժամանակ, մինչև վոր հյուսվածքներում հավաքվեր սնդիկի այնպիսի քանակ, վոր ընդունակ լիներ դիմադրելու սիֆիլիսի թույնին. իսկ այս ժամանակամիջոցում սիֆիլիսի թույնը անցնում եր որդանիզմի բջիջներին և հյուսվածքներին. ուստի և արորտիվ բուժումը չեր կարողանում, ուժ չուներ արգելելու սիֆիլիսի թույնի ներդործությունը։ Այսպիսով, վաղ սկսած բուժումն անդամ դառնում եր «շատ ուշ»։

Ֆուբրիյեյից հետո յե սկսվում սիֆիլիսաբանության նվաճումների շարքը, սկսվում ե նրա «վոսկե դարը»։

1903 թ. Մեջնիկովին և Ռույին հաջողվում է սիֆիլիս պատվաստել բարձր և ստորին տեսակի կապիկներին։ Մինչ այդ միայն մարդն եր համարվում սիֆիլիսով վարակվելու ընդունակ, ուստի և արմատապես ժխտվում եր փորձնական սիֆիլիսի հարցը, վորովհետև Ռիկորի դարը, յերբ մարդկանց պատվաստում ելին սիֆիլիս, իրավացիորեն դատապարտված եր, արգելվում եր պատվաստել մարդուն սի-

Ֆիլիս: Ներկայումս, ինչպես գիտեք, անհամեմատ առաջ ե գնացել գործը, սիֆիլիս կարելի յեպատվաստել մեր լաբորատորիայի սովորական կենդանուն՝ ճաղարին, և այժմ ծաղկել ե սիֆիլիսաբանության մի նոր, չափազանց հարուստ բաժինը — փորձնականը:

1905 թ. Շողինն ու Հոֆմանը գտան սիֆիլիսի հարուցիչը — դժույն սպիրոխետը:

1906 թվին հայտնի դարձավ Վասսերմանի ու եակցիան:

1910 թ. յերևան յեկավ Երլիխի «606»-ը, 1921 թ. Լեադիտին և Զացերակը սիֆիլիսի բուժման համար առաջարկեցին բխոմուտը... Յես միայն չափազանց նշանավոր գյուտերի մասին եմ գրում, գյուտեր, վորոնք սիֆիլիսաբանության մեջ հեղափոխություն առաջցրեցին, վորոնք հուզեցին ամբողջ բժշկական աշխարհը, իսկ վորքան նորամուծություններ, կարեւոր որենքներ, կանոններ ծագեցին այդ գյուտերից ...

Ամբողջապես չընդունելով սիֆիլիսի բուժման արորտիվ մեթոդը, Ֆուրնիյեն, կոչտ շանկը հեռացնելու մասին պատմելիս, արորտիվ բուժման համար պատշաճ միայն մեկ դեպք եր ընդունում, յերբ կոչտ շանկը «թարմ եր, բոլորովին թարմ, վոչ ավել մի քանի ուրիշ, յերբ չանկը դեռևս կոչսացած չեր և չեր հարակցված գեղձատապով»: Ֆուրնիյեյի ժամանակ հնարավոր չեր վստահ կերպով ախտորոշել նման շանկը, իսկ ա՞յժմ:

Ներկայումս այդ հնարավոր ե, վորովհետեւ մենք ճանաչում ենք սպիրոխետը: Սպիրոխետ գտնելը հնարավոր ե շանկը յերեման հենց առաջին որերը, նրա կոշտացումից և նրան հարակցող գեղձատապից շատ ու շատ առաջ, անցյալում շանկը ախտորոշման անհրաժեշտ, համարյա միակ նշանը նշած կոշտացումը և գեղձատապն ելին: Անցյալում մնդիկով վաղ սկսած բուժումը բարեհաջող արդյունքներ չեր տալիս, չեր կանխում յերկրորդական յերեվույթները, իսկ այժմ անմիջապես արյան մեջ մուծելով հզոր պրեպարատ — սալվարսանը (նեսուլվարսանը), մենք կարող ենք ձեռք բերել այդ, վորովհետեւ սալվարսանը ներգործում ե սպիրոխետի վրա ավելի ուժեղ, ավելի արագ: Պետք ե յենթադրել, վոր հիվանդության սկզբում սպիրոխետի կապը հյուսվածքների հետ առանձնապես ամուր չե. քանի վոր սպիրոխետը դեռևս ուժեղ չի ամրացել հյուսվածքներում, մենք կարող ենք վորչընչացնել այդ կապը, սպիրոխետի և հյուսվածքների ու ամբողջ որդանիզմի մեջ յեղածվոչ հաստատուն հարաբերությունը. մենք կարող ենք սիֆիլիսի առաջն առնել: Պետք ե պատկերացնել գործն այսպես (կոպիտ ձեվով): որդանիզմի մեջ սպիրոխետի մանելուց և թույնի արտադրությունից հետո, մնդիկով չի հաջողվում արագ կերպով չեղոքացնել այդ թույնը. որինակի համար ասենք, մենք մուծում ենք հակաթույնի (մնդիկի) մի կաթիլ, իսկ

սպիրոխետն այդ ժամանակամիջոցում կարողանում է արտադրել յերկու կաթիլ թույն:

Որդանիզմի վրա սպիրոխետի գործած աղդեցությունը սնդիկի ներդործությունից անցնում է առաջ, և գերակշռում նրան: Հնարչկար հաղթահարել սպիրոխետի ազդեցությունը, վորովհետև սնդիկը ներդործում է վորոշութել և վորոշ արագությամբ: Զեռքի տակ ունենալով ներկայումս մկնդեղի պրեպարատները, վորոնց ներդործությունը սպիրոխետի վրա զգալի չափով ուժեղ է, և մուծելով այդպիսիներն անմիջապես արյան մեջ, մենք հնարավորություն ունենք արգելել «թույնին» անցնելու սպիրոխետի մտած տեղից (շանկրից) որդանիզմի մեջ. դրանով մենք, կարծես, պատճեց ենք կառուցում սպիրոխետի և նրա թույների առջեւ:

Անշուշտ, վորքան քիչ են այդ թույները, այնքան հեշտ են նրանց չեղոքացնելը, իսկ նըրանք այնքան քիչ են, վորքան կարճ ժամանակ ե անցել որդանիզմի մեջ սպիրոխետի մտնելուց:

Աբորտիվ բուժումը բացառապես հետեւանք է սպիրոխետի, վասսերմանի ռեալիզիայի, մկնդեղային պրեպարատների և այլն վերը հիշած մեծ գյուտերի, և հանդիսանում է մեր ժամանակի նվաճումը: Արդյո՞ք միշտ ել հաջողվում է արորտիվ բուժումը: Տարարախտաբար վոչ:

Այս խնդրի մեջ դեռևս շատ բան պարզ չէ.

Դա կախված է նրանից, վոր նախ մենք լիովին չդիտենք սպիրոխետի կենսաբանությունը (բիոլոգիան), յերկրորդ կա տարբերություն զանազան անհատների, նրանց հորինվածքի մեջ:

Սիֆիլիսի աբորտիվ բուժման հաջողության մեծ մասը կախում ունի նրանից, թե յեր և սկսվել բուժումը: Ինչպես դուք գիտեք, կոչտ շանկրի յերևան գալուց հետո մի վորոշ ժամանակ է անցնում, մինչև վոր արյունը ըստ վասսերմանի տալիս և դրական արդյունք: Կոչտ շանկրի ժամանակ, չնայած շանկրի մեջ սպիրոխետներ կան և ունենիսկ գեղձերն ել փոքր ինչ մեծացած են, վասսերմանի ռեալիզիան լինում է բացասական: Այդ շրջանը մոտավորապես 2—2 և կես շաբաթ ե (առավելագույնը) հաշվվում: Այդ ժամանակ մենք, կարծես, իրավունք ունենք ասելու, վոր հիվանդությունն առայժմ տեղական ե, վորովհետև մենք վոչ մի ծանրակշիռ տվյալ չունենք, ներկայումս մեր ունեցած գիտելիքների հիման վրա, հիվանդի սիֆիլիսը հաշվել ընդհանրացած: Սա կոչտ շանկրի ժամանակ տեղի ունեցող շիճուկը՝ բացասական փուլն ե, վոր չափազանց մեծ արժեք ունի արորտիվ բուժման համար: Կոչտ շանկրի դուրս գալուց 2—2 և կես շաբաթ անդ հիվանդի արյան Վ. Ռ. դառնում ե դրական թեև յերկրորդական շրջանի արտահայտությունները՝ վարդացանը, պապուլաները և այլն չկան, բայց մենք կարող ենք ըն-

դունել, վոր ալբոցեսի ընդհանրացումը սկսվել է. սա չիճուկ-դրական փուլն է: Այս փուլում ել անհրաժեշտ և սկսել արորտիվ բուժումը, բայց իհարկե, լիակատար հաջողության ցերաշխիք քիչ կլինի:

Ֆուրնիյեյի խորհուրդը — վորքան կարելի յե շուտ գրոհ տալ սիֆիլիսի վրա — մեզ համար համարյա որենքի ուժ ունի:

Բայց համեմատած ֆուրնիյեյի հետ, մենք չափազանց շուտ կարող ենք ախտորոշել շանկրը և կարող ենք ավելի շուտ քան յերկրորդական յերեսոյթների հայտնվելը վորոշել թույնի ընդհանրացման ժամանակը: Այն, ինչ անհնար եր մեծ ֆուրնիյեյի համար, դարձել ե հնարավոր մեզնից յուրաքանչյուրիս համար: Ինչպես բուժել սիֆիլիսը արորտիվ կերպով:

Եիճուկ-բացասական փուլում մենք սիֆիլիսը բուժում ենք յեռանդուն կերպով. բացի սնդիկի կամ բիսմուտի ներարկումներից, անարտնառ կատարում ենք նաև նեոյի միջյերակային ներարկումներ, և մեր նպատակն ե թույլ չտալ բացասական Վ. Ռ. փոխվելու դրականի: Եիճուկ-դրական փուլում մենք նույնպես յեռանդուն կերպով ենք բուժում Հիվանդին, աշխատում ենք դրական Վ. Ռ. դարձնել բացասական և հենց այս դրության մեջ ել պահել կայուն:

Սովարաբար այսպես ենք վարվում. ըսկըսում ենք նեոյի (0,3) միջյերակային նե-

բարկումից և միևնույն ժամանակ կամ մեկ որ հետո մկանի մեջ ենք ներարկում բիսմուտ կամ սնդիկ (մեզ մոտ սովորաբար 2,5 բիոխինով կամ 1,0 տաս տոկոսանոց սալիցիլատ սնդիկ): Միջյերակային ներարկումները կատարում ենք 4-5 որը մի անգամ, հետզհետե ավելացնեալով դոզան — 0,45, 0,6, 0,75 և աշխատում ենք հասցնել նեոյի ընդհանուր դոզան մեկ կուրսի ընթացքում 4,5—5,0 և ել ավել: Միջմկանացին ներարկումները կատարում ենք շաբաթական յերկու անգամ, ընդհանուր թվով 15—20:

Հիվանդի արյան չիճուկը պարբերաբար (մոտավորապես 10—15 որը մեկ անգամ) ստուգում ենք ըստ Վասսերմանի: Յեթե ամեն ինչ ընթանում ե նորմալ, արտինքն հիվանդը լավ և տանում բուժումը, և Վ. Ռ. ամբողջ ժամանակ մնում ե բացասական (կամ դրական Վասսերմանը շուտով փոխվում ե բացասականի), նկարազրած կուրսից հետո տալիս ենք ընդմիջում: Մենք ընդմիջում ենք անում 3—4 շաբաթ և այդ ընդմիջման ժամանակ տալիս ենք իմելու համար յոդ (4,5—6 տոկոս յոդատ նատրիուն): Ընդմիջումից հետո սկսում ենք յերկրորդ կուրսը, առաջինի նման, հետո նորից ընդմիջում 1 և կեսից—2 ամիս ու յերրորդ կուրսը:

Հետապայում, յերբ նշաններ չկան, պետք է ստուգել արյունը յուրաքանչյուր 6—8 շաբաթը մեկ անգամ: Յեթե 6—10 ամսվա ընթացքում ամեն ինչ ընթանում ե բարեհաջող,

յես գիտմամբ գրգռում եմ (սա կոչվում է պրո-  
վակացիա), սրսկելով նեռ (սովորաբար 0,3  
կամ 0,45) և 3—5 որից հետո վերցնում արյու-  
նը վ. Ռ. Համար:

Մեկ տարրուց հետո կամ փոքր ինչ ուշ  
պետք է քննել վողնուղեղի հեղուկը: Յեթե  
ամբողջ ժամանակ հիվանդի արյան Վ. Ռ.  
բացասական է, իսկ վողնուղեղի հեղուկը նոր-  
մալ, նրան առողջ ենք համարում — պետք ե  
ընդունել, վոր նրա սիֆիլիսը ընդհատված ե  
նախքան հիվանդության զարդանալը (դա կոչ-  
վում է «աբորտի յեն յենթարկված»): Այսպես  
ենք վարվում, շիճուկ-բացասական փուլում,  
իսկ շիճուկ-դրական փուլում յես անձամբ վար  
վում եմ այսպես. հիվանդին անել եմ տալիս  
4—5 կուրս, այսինքն՝ բուժում եմ համարյա-  
մեկ տարի:

Յես գիտեմ իհարկե, վոր կան շատ բժիշկ-  
ներ, վորոնք արորտիվ բուժման դեպքում բա-  
վականանում են յերկու, նույնիսկ մեկ կուր-  
սով: Յես գիտեմ, վոր կան բժիշկներ, վորոնք  
կողմանակից են բացառապես միայն սալվարատ-  
նով կամ միայն բիսմուտով բուժման:

Ճիշտն ասած, յես փոքր ինչ վախենում եմ,  
մի գուցե այդ համարձակություն լինի: Այս-  
տեղ ավելի լավ ե տալ շատ, քան տալ պակաս:  
Մինչեւ անգամ յես այսպես եմ վարվում. յեթե  
առաջին կուրսում բժշկել եմ բիոխիմելով,  
յերկրորդ կուրսում դորձադրում եմ սուիցի-

լատ սնդիկ և ընդհակառակը, այսինքն՝ աշ-  
խատում եմ բժշկել հիվանդին, ոգտագործելով  
սպեցիֆիկ դեղերի ամբողջ շտեմարանը: Ի-  
բոք, յես մեծ փորձառություն չունեմ այդ  
գործի մեջ, յես արորտիվ կերպով իմ բուժած  
մի առանցքական դեպք կարող եմ բերել, վորոնց  
յերկար ժամանակ հսկողության տակ եմ ունե-  
ցել (սա յե դիմավորը): Յես հսկել եմ նրանց  
վրա 4—6 և ավելի տարի:

Այս ամբողջ ժամանակվա ընթացքում իմ  
նախկին հիվանդները միշտ ել յեղել են առողջ,  
արյան շիճուկի և վողնուղեղի հեղուկի Վ. Ռ.  
միշտ յեղել ե բացասական, սիֆիլիսի վոչ մի  
արտահայտություն յերբեք չի յեղել նրանց  
վրա. այդ հիվանդներից յերկուսը ամուսնա-  
ցել են, նրանց ամուսինների և մեկի յերեխայի  
արյան Վ. Ռ. բացասական է. այդ հիվանդնե-  
րից մեկը — 18 տ. մի յերիտասարդ, առա-  
ջին շանկրից յերկու և կես տարի հետո վա-  
րակվեց կրկին ագամ և ուներ խսկական կոչտ  
շանկը հանդերձ սպիրոխետներով, գեղձատա-  
պով և դրական Վ. Ռ. Այս բոլորի հիման վրա  
յես կարծում եմ, վոր յես վարվել եմ զգուշ,  
բայց լավ:

Դուք կարող եք ասել, թե նման արորտիվ  
բուժումը վոչնչով չի տարբերվում բուժման  
խրոնիկ-ընդհատվող մեթոդից և նույնիսկ ան-  
ընդհատ ձևից: Այս, գուցե այդպես է: Բայց  
սիֆիլիսի ժամանակ ունենալ միմիայն կոչտ  
շանկը այնքան մեծ բարիք է, վոր արժե նախա-

զգուշության համար 1—2 ավելորդ կուրս կատարել:

Կարելի յէ արդյո՞ք ընդհատել սիֆիլիսը յերկու կամ մինչև անդամ մեկ կուրսով: Ինչո՞ւ չե: Դրա մասին գլուխ են շատ փորձված և պատվարժան բժիշկներ: Կարող ե պատահել: Իմ յերկու հիվանդի արյան Վ. Ռ. կայուն բացասական դարձավ միմիայն յերեք կուրսից հետո, թեև ճիշտն ասած, յես սկսեցի նրանց բժշկելը շիճուկ-դրական փուլում: Հենց դրա համար ել յես յուրաքանչյուրին հինգ կուրս արեցի. մեղնից ամեն մեկն ունի իր փորձառությունը, և այդ հարցը վերջնականապես լուծված չի կարելի համարել: Կարեռը այն ե, վոր պետք ե նկատի ունենալ հետեւալը. ներկայում բուժող բժշկի համար սիֆիլիսի արորտիվ ձեվով բուժումը պետք ե պարտադիր համարել: Հին ժամանակ մեզ այսպես ելին սովորեցնում. ախտորոշական սխալնեներից խուսափելու համար ավելի լավ ե սկսել սիֆիլիսի բուժումը առաջին ցանի (սովորաբար վարդացան) յերեալուց հետո, և սիֆիլիսի նման, տարիներ տեվող խրոնիկ հիվանդության համար բուժման 2—3 շաբաթով հետաձգումը վոչ մի նշանակություն չի կարող ունենալ: Բայց այժմ մենք պետք ե ասենք. ամեն միջոց ձեռք ոտեք անհասլաղ սկսելու սիֆիլիսի բուժումը շանկրի յերեան դալու բովելից հետո: Փնտուցեք սպիրոլիստը: Յեթե դունք, ձեռնամուխ յեղեք բուժման արորտիվ մեթո-

դին: Կհաջողվի ձեզ ընդհատել սիֆիլիսը, դա ձեր հիվանդի համար մեծ բաղադրություն կամ մինչև անդամ մեկ կուրսով է, չի հաջողվի — դարձյալ վատ չի, վորով-հետև յեռանդուն կերպով վաղ սկսած բուժումը շափաղանց բարերար ազդեցություն ե ունենում հիվանդության հետագա ընթացքի վրա:

### III. ԲՈՒԺՄԱՆ ԽՐՈՆԻԿ-ԸՆԴՀԱՏՎՈՂ ՄԵԹՈԴԸ

Թանկագին ընկեր

Հարկավոր ե արդյո՞ք յերկար կանգ առնել — արդեն ընդհանրացած սիֆիլիսի բուժման վրա: Դրա մասին այնքան շատ ե գրած և այդ, կարծես, լավ հայտնի յե յուրաքանչյուր բժշկի:

Ամենքին լավ հայտնի յե, վոր սիֆիլիսը բուժում են «կուրսերով», վոր կուրսերի միջև կա հանգստի վորոշ շրջան, վոր առաջին կուրսերի միջև յեղած հանգիստը 1—1 և կես — 2 ամսից ավելի չե, իսկ հետո այս ժամկետը յերկարացնում ենք և այլն:

Սա բուժման խրոնիկ-ընդհատվող մեթոդի միեման ե, վորը զեռ հաստատել ե ֆուրնիյեն: Յես չեյի ցանկանում գրել այս, ամենքին հայտնի բաների մասին ու պարծենալ ձեզ մոտ, զրելով մի քանի հազվագյուտ դեղատոմսեր. յես կուզեյի պատմել ձեզ այն դիտողությունների մասին, վորոնք հիմնված են յերակարատեն

փորձառության վրա: Յես արդեն գրել եմ ձեզ  
սիֆիլիսի արորտիվ բուժման մասին և առա-  
ջարկում եմ, վորքան կարելի յե, չուտ սկսել  
այն: Յեթե թույլ կտաք, այժմ մի ուրիշ խոր-  
հուրդ կտամ ձեզ, վորքան կարելի յե, յեռան-  
դուն կերպով բժշկեցեք սիֆիլիսը: Հիշեցեք,  
վոր հաջողության կեսը գուցե կախված ե նը-  
րանից, թե վորքան յեռանդուն և ուժեղ են կա-  
տարգած առաջին 2-3 կուրսերը: Ով յերկար  
ժամանակ պարապել ե սիֆիլիսուների բուժ-  
ման գործով, կասի ձեզ այդ: Մի բավականա-  
ցեք միայն մի վորես դեղով, այլ ողտագործե-  
ցեք ձեր ամբողջ շտեմարանը. ներարկեցեք ար-  
յան մեջ նեռ, ներարկեցեք մկանի մեջ բիոխինոլ  
և սնդիկ, տվեցեք յոդ: Բժշկեցեք այսպես կոչ-  
ած զուգորդած մեթոդով և բժշկեցեք հիվան-  
դին մինչև նրա դիմացկունակության սահմա-  
նը: Մի սփոփեք հիվանդին, ինքներդ ել մի հան  
գստացեք նրանով, վորսիֆիլիսի յերևույթներն  
ացել են, վոր Վ. Ռ. բացասական ե, և բեցիդիվ-  
ներ չկան, սովորեցրեք հիվանդին և ինքներդ  
ել հիշեք, վոր սիֆիլիսը շատ լուրջ հիվանդու-  
թյուն ե, վոր սպիրոխետը շատ խարդախ արա-  
րած ե: Վորքան ցավալի հետեվանքներ ենք  
տեսնում վատ սկսած բուժումից, թույլ կի-  
ստո բուժումից:

Սկզբում կուրսերի միջև յերկար ընդմի-  
ջումներ մի արեք, իսկ, յեթե կարելի յե, ընդ-  
միջումներ բոլորովին մի արեք, այլ վոխեցեք  
միայն բուժման ձեզ, ավելի ճիշտը, դեղը:

Սկզբում բժշկեցեք (յես չեմ վստահանում  
Ալիմէլիստի պես առաջարկել անընդհատ) հա-  
մարյա առանց ընդմիջման, ամեն կրեալ աշխա-  
տեցեք դբական Վ. Ռ. արագ կերպով դարձնել  
բացասական և պահել նրան նման կայուն դրու-  
թյան: Թրանսիացի ականավոր սիֆիլիսագետ  
Միլիանը մեր հակասիֆիլիսային դեղերը գնա-  
հատում ե այսպես. նեռարվարսանին դնում և  
10 թվանշան, բիսմուտին-7 և սնդիկին-3: Յեթե  
ուա փոքր ինչ անհատականորեն ե, բայց ընդ-  
հանուր առմամբ մտավորապես ճիշտ ե:  
Իհարկե, նեռն կանգնած ե առաջին տեղում,  
բիսմուտը համենայն դեղու, ներդործում ե  
սնդիկից ավելի արագ, և հիվանդները նրան  
սնդիկից ավելի լավ են դիմանում. ուստի սկըզ-  
բում ուժ տվեք զլիսավորապես նեոյին և բիս-  
մուտին, բայց չեք սիսալի, յեթե դուք ներար-  
կումների մի մասը (նույնիսկ հենց կուրսի ժա-  
մանակ) կատարեք սնդիկով: Անձամբ յես  
այդպես եմ վարկում և դեռևս սնդիկից չեմ  
հիասթափվել:

Անցյալում յեռանդուն բուժման արդելք  
հանդիսացող լնդատապերն ու բերմնատապները  
(սնդիկից) այժմ բիսմուտին զուգորդած նեռյով  
բժշկելիս, սակավ են պատահում, ուստի յեռան-  
դուն բուժումը պետք ե կատարել մինչև մաքսի-  
մումը:

Նեռն կարելի յե ներարկել յուրաքանչյուր  
հինգ որը մեկ անգամ, իսկ բիսմուտի վոչ լու-  
ծելի պրեպարատները (մեղ մոտ դլիսավորա-

պես բիյոիինով. և բիսմուտոդվիթ) ներարկել շաբաթական յերկու անգամ և ամեն անգամ 3,0-3,5 խոր. սմ: Այդ գեղերի ճիշտ քանակը, անշուշտ, դժվար է նշանակել, բայց համենայն դեպս սովորաբար բավական ելինում մի կուրսի համար 5-6 դրամ նեռ և 40-50 դրամ բիոխինով: Յեթե արյան Վ.Ռ. լավ չի կանոնավորվում, կարելի յե ավելացնել սնդիկի զանազան պրեպարատների ներարկումը (սովորաբար մենք ներարկում ենք 10 տոկոս առլիցիլատ սընդիկ, շաբաթական յերկու անգամ և ամեն անգամ մեկ խոր. սանտիմ.):

Կուրսերի մեջ ընդմիջման ժամանակ տվեք հիվանդին յոդային կալիոն կամ յոդային նատրիոն: Զմոռանաք այդ պրեպարատները: Զգիտեմ, ինչու մի քանի բժիշկներ նեռն և բիսմուտը դուրս գալուց հետո սկսել են արհամարհել յոդի նշած պրեպարատները, դա լավ չե: Այս պրեպարատները հիանալի յեն և, յեթե առաջինների պես չեն փայլում, համենայն դեպս սիֆիլիսի բուժման ժամանակ շատ են ոգնում: Նրանք դուցե «ոժանդակիչ» պրեպարատներ են, բայց չպետք է մնալ առանց նրանց: Կարիք կա՞ գրելու ձեղ, և չեք վիրավորվի արդյոք ձեր ուսուցչից, յեթե հիշեցնեմ, վոր յոդային կալիոնի և նատրիոնի լուծույթները պետք ե գրել 4, 5, 6 և այլն տոկոսներով, վոր 3 տոկոսը թույլ ե, և սովորաբար չենք նշանակում: Հոմեապաթիական դոդաներով մի հրապուրվեք, ինչպես այդ անում են մի քանի տեղերում: Հո-

մեապաթիայի հաղթանակի ժամը դեռ չի հասակ:

Յեթե ձեր հիվանդը վատ և տանում յոդը, նրա վրա ծանր ախտանիշեր են յերևան գալիս, ինչ վոր մենք յոդիզմ ենք անվանում— լորձաթաղանթների դում, մաշկի վրա ցաներ և այլն, փորձեցեք արյան մեջ ներարկել 10-20 առկ. յոդային նատրիոնի (վոչ կալիոնի) լուծույթից 5-10 խոր. սանտ. որընդմեջ: Այս յեղանակով յոդ մուծելուց յես, ինչպես կանոն, իմ հիվանդների մոտ յոդիզմի յերևույթներ չեմ տեսել:

Մի մոռացեք «չնչին բանը», սիֆիլիսային նշանների տեղական բուժումը. դուրս ցցված կամ թաց պապուլաներին մենք կալումել ենք ցանում. կալումել 0,8, մագն. կարբոն. 15,0 ՄՓՊԾփոշի: Յերբեմն, դուցե կարիք լինի քսել նրանց բորակային արծաթի 5-10 տոկոսանոց լուծույթ և այլն:

Շանկրին քսել սնդիկի ոծանակ կամ զնել վրան սնդիկի սպեղանի, կամ ներսփուանքի ծծվելու համար զնել տաքացնող փաթեթ: Այստեղ են բուն դրել սպիրոխետները, վորոնց մի մասը յերկար ժամանակ կարող ե մնալ ներսփուանքի մեջ և ուցիդիվի (մենառեցիդիվի), ինչպես և վարակման և այլոց աղբյուր ծառայել:

Զգիտեմ, ինչու այս ամենը մոռանում են, իսկ դրանից տուժում է հիվանդը և, վորն առանձնապես կարեոր է, բուժումն է ձգձգվում:

իսկ բերանը ողողուելու, նղերքին դեղ քսելու, ատամները լվանալու, ընդհանրապես սիֆիլիսութիւնի բերանի խոռոչի առողջապահության ժամանք չեմ վատահանում մի բան ասել, վորովհետև յերկյուղ եմ կրմում, վոր կծիծաղեք ձեր ուսուցչի մանրակրկտության վրա:

Այսորվա նամակիս յեղբափակման համար կցանկանայի ամել ձեզ և հետելյալը. բժիշկը յերեք չսկետք ե մոռանա, մանափանդ սիֆիլիսը սր բժշկելիս, վոր յուրաքանչյուր հիվանդ յուրահատուկ ձեվով ե տանում հիվանդությունը, վոր նա իր սիֆիլիսի վրա դնում ե մի առանձին կնիք : Յերբեմն այդ «կնիքը» կարող ե սուս կերպով փոխել հիվանդության բնույթին ու բնթացքը: Վերցնեք Հարբեցողի սիֆիլիսի, ընթացքը, թոքախտավորի, ծերունու և ծաղկած ու առողջ պատանու, համեմատեցնեք տղամարդու և կնոջ սիֆիլիսը, դիտեցնեք, վերջապես, բնածին սիֆիլիսը, դուք կտեսնեք, վոր համարյա չկա միատեսակ ընթացող և միատեսակ ու միորինակ բուժում պահանջող դեպք: Դուք տեսք ե հիշեք, վոր բժշկում են վոչ թե մի ինչ վոր վերացական սիֆիլիս, այլ սիֆիլիսութին, ձեր առջեվը կանգնած ե վոչ թե հիվանդությունը, այլ հիվանդը: Նրան պարբերաբար հարկավոր ե դադար և հանդսություն, և սառատորիա կամ կուրորտային բուժում. նրան անհրաժեշտ ե կանոնավոր սնունդ, մաքուր ոդ: Նա չպետք ե խիստ հոգնի աշխատանքից, բայց և չպետք ե բոլորովին աղատ լինի աշխա-

տանքից ու վարի անզուսակ և ցոփ կյանք: Մի կարծեք, վոր դուք կարող եք պայքարել ձեր հիվանդի սիֆիլիսի դեմ միայն սպեցիֆիկ դեղբով:

Բացի սպեցիֆիկ բուժումից, վորը գլխավորապես ուղղած ե լինելու կենդանի վարակի, սպիրոխետի դեմ, դուք պետք ե ողնեք որդանիզմին բարձրացնել իր բնական ուժերը պայքարելու այդ վարակի դեմ: Այդտեղ ամեն ինչ նշունակություն ունի՝ և՛ հիվանդի կանոնները, և՛ նրա առողջապահությունը, և՛ նրա աշխատանքի ու կենցաղի պայմանները, և՛ նրա ամբողջ կազմվածքը: Ահա թե ինչու սիֆիլիսի ժամանակ ասում են՝ բացի սպեցիֆիկ բուժումից, պետք ե կիրառել և վոչ սպեցիֆիկը: Այս բոլորը այնքան հին ե, դուք կասեք: Գուցե: Բայց յես իմ պարագն եմ համարում մի անդամ ևս կը կնել ձեզ, վոր դուք բժշկելու յեք վոչ թե սիֆիլիսը, այլ սիֆիլիսութին: Ֆրանսիական հոչակավոր մաշկագետ Բրոկը զուր չի ասել՝ «չկան հիվանդություններ, այլ կան միայն հիվանդներ»: Այդ են սովորեցրել մեզ, կյանքի մեջ մենք այդ սուսազել ենք և այդ ել պետք ե սովորեցնենք ձեզ: Այս կանոնը չկատարելը կարող ե ցավալի հետեվանքներ ունենալ ձեր հիվանդի համար, իսկ ձեզ համար դառն հիասթափումների պատճառ հանդիսանալ: Վո՞րքան կուրս պետք ե կատարել սիֆիլիսը բժշկելու համար: Քանի՞ տարի պետք ե բժշկել հիվանդին:

ՅԵթե դուք լավ ըմբռնեցիք այն բոլորը, ինչ ասացի ձեղ սիֆիլիսոտի և վոչ սիֆիլիսի (ինչպես նա կա) բուժման մասին, ոտարոտի թվականում ամենալավ յե ճշգրիտ և մասնաւոր թվականում, վոր անկարելի յե ճշգրիտ և մասնաւոր թվականում ամենալավ յե ճշգրիտ և մասնաւոր թվականում, վոր սիֆիլիսը դժվար է յենթարկվում բուժման, վոր «բժշկականությունը անզոր ե բուժել սիֆիլիսը», ինչպես շատերը կարծում են, և ամենեվին վոչ այն պատճառով, վոր դա միայն մեզ, հին բժիշկներիս հայտնի մի գաղտնիք ե, վորին չենք կամենում մասնակից անել ձեզ:

Սիֆիլիսով հիվանդի բուժման ժամկետը պետք է վորոշել շատ գործոնների հաշվառման հիման վրա, և ձեր դրած հարցին կարելի յե պատասխանել միայն մանրամասն ուսումնասաւում մի բժիշկից հետո: Մի առ մի թվել այս բոլորը յես չեմ կարող, բայց ահա ամենագլխավորութիւնների ընդհանուր ամփոփումը, վոր դրույթների ընդհանուր ամփոփումը, վոր լիակատար համարել ամենեին չի կարելի: 1. ինչպես ե ընթանում սիֆիլիսը, վորքան հաճախակի յեն նրա ռեցիդիվները, վերջիններիս ձեերը, ինչպես ե հակազդում դրանց հիվանդի որդանիղմը, ռեցիդիվները վորքան են յենթարկվում բուժման և այլն. 2. հիվանդի արյան (և վորոնուղեղի հեղուկի) Վ. Ռ., վորքան հեշտ ե յենթարկվում առողջացման և վորքան յերկար ժամանակ ե մնում այդպես առողջ դրության մեջ. 3. հիվանդի կազմվածքը

— Հաբբեցողություն, տուբերկուլյոզ, ներվային համակարգություն, ժառանգականություն, աշխատանքի և կենցաղի պայմաններն ամենալայն մտքով և այլն. 4. ինչպես ե բժշկվել և ինչպես ե բժշկվում սիֆիլիսով հիվանդը՝ կանոնավոր, անկանոն, յեռանդուն, թույլ, վորքան ընդմիջումներ ե արել, ինչ դեղերով և բժշկվել և այլն:

Ձեզ համար պարզ պետք է լինի, վոր այս թվարկումը կարելի յե համարյա անվերջ շարունակել: Այս բոլոր գործոնները կամ, համենայն դեպս նրանց մեծ մասը հաշվի առնելիս (յերբեմն ճիշտն ասած դժվար ե պարզել այդ), սովորաբար հեշտ ե լինում վորոշել, թե բուժման լարվածությունն ու ժամկետը և թե կուրսերի քանակը: Վորքան խորամիտ ու փորձառու յե բժշկը, այնքան շուտ նա կպարզի և ճշգրիտ կվորոշի: Ստորև բերած թվերը վոչ այլ ինչ են, յեթե վոչ սիսմա: Պետք ե միշտ նկատի ունենալ այդ թվերը, բայց ամեն անդամ ել համակերպվել յուրաքանչյուր հիվանդին, նայած այս կամ այն դրությանը, և վոչ յերբեք հիվանդին «ձգել» դեպի սիսման: Սիսման ե հիվանդի և վոչ թե հիվանդը սիսմայի համար: Նախքան սալվարսանը, ընդունված եր, վոր առհասարակ սիֆիլիսը պետք ե բուժել խրոնիկ-ընդհատվող կուրսերով, մոտավորապես 4—5 տարի: Առաջին տարում 3—4 կուրս եյին անում, յերկրորդում

Համարյա ելի նույնքան, յերբորդում՝ 2-3  
կուրս, 4-րդում 1-2 կուրս, նայած հիվանդու-  
թյան ընթացքին։ Հինգերորդ տարում սովորա-  
բար հետեւում եյին հիվանդին համարյա ա-  
ռանց բուժման։ Յերբ ուսցիդիվներ չեյին լի-  
նում, ու հիվանդի ընդհանուր դրությունը լի-  
նում եր լավ և այլի, համարում եյին նրան ա-  
ռողջացած։ Արձակելով նման հիվանդին ֆուր-  
նիցին հետեւյալ խորհուրդն եր տալիս նրան  
(ահա նրա առաջ իսկական կոսոքերը)։ «Դի-  
տությունը իրավունք ե տալիս ինձ համարել  
ձեզ առողջացած։ բայց ապագայում ինչ ել պա-  
տահի, ինչ խանդարում ել յերեա ձեր առող-  
ջության մեջ, հիշեցեք ձեր նախկին հիվանդու-  
թյունը և հաղորդեք նրա մասին բժշկին։ Ամե-  
նելին մի թագցնեք նրանից ձեր սպեցիֆիկ  
անցյալը։ Ռւզզակի ասացեք նրան, ավելի լավ  
ե, տաս անդամ էլունեցեք, վոր մի ժամանակ  
սիֆիլիս եք ունեցել։ Անշուշտ շատ հայանա-  
կան ե, վոր ձեր խոստովանությունը ավելորդ  
լինի, բայց բանը կարող ե այնպիսի ընթացք  
սատնալ, կարող են յերեան գալ այնպիսի հան-  
գամանքներ, վոր դա կարող ե նրա և մանա-  
գանդ ձեզ համար ունենալ չափազանց մեծ կա-  
րեվորություն, վոր ձեր խոստովանությունից  
կախված կլինի ձեր առողջացումը, ձեր կյան-  
քը»։ Սալվարսանի ապա և բիսմուտի յերե-  
քը։ Սալվարսանի ապա և բիսմուտի յերե-

3-3 տարի։ Առաջին տարում կատարում են  
3-4 յեռանդուն ու զուգորդած կուրսեր  
(ներ + բիսմուտ + անդիկ)։ Հանգստի ընդ-  
միջումներին տալիս են յող)։ Յերբ Վ. Ռ. կա-  
յուն կերպով բացասական ե, և յերկրորդ տա-  
րում ել համարյա այդքան կուրս են արել, կա-  
րելի յե առել, վոր յերրորդ տարին կմնա բացա-  
ռապես գիտողության համար։ Յեթե հսկո-  
ղության տարիա ընթացքում հիվանդի արյան  
շիճուկը և վողնուղեղի հեղուկը նորմալ են  
(առանց բուժման) և յեթե՝ այդ դրությունը  
գրդուելուց (պրովկացիայից) հետո յել չի  
փոխվում, ուրեմն կարելի յե բուժումը վերջա-  
ցած համարել, միայն հարկավոր կլինի կա-  
տարել ավարտական ևս մեկ կուրս։ Յես խո-  
տում եմ թարմ սիֆիլիսի մասին։ իհարկե, այլ  
պայմաններ կլինեն, յերբ զործ ունենք ուսցի-  
կիլ, յերկրորդական և այլ սիֆիլիսի հետ։  
Յուրաքանչյուր հեղինակ բուժման իր սին-  
ման ունի և այդ տեսակ սխեմաներ շատ կան։

Ինչեմիցե, գուք տեսնում եք, մենք սալվար-  
սանի և բիսմուտի յերեկան գալուց հետո յել  
բուժում ենք սիֆիլիսը տարիներով, ուշադրու-  
թյամբ և մանրամասնորեն ուսումնասիրե-  
լով բոլոր պայմանները։ Նման համառ կերպով  
բուժման գեպօրում անզամ, պատահում ե, վոր  
միշտ ել մեր սինման պետքական չի գուրս գա-  
լիս, և սոտիսլիքած բժշկում ենք հիվանդին ա-  
կելի ևս յերկար, փոփոխելով մերթ յեղանա-

իլը, ձերթ գեղերը, կամ սլայքարելով նրա որ-  
դանիզմի այս կամ այն պակասության դեմ:

Կարդացեք՝ ռուսերեն լեզվով

Պրոֆ. Ա. Ա. Բրէով, բժ. Ա. Յ. Գալուբին, բժ. Բ. Ն. Զիլ-  
բերման, բժ. Ն. Ս. Սմիւլչ, պրոֆ. Ն. Ս. նշրման, բժ. Վ. Վ. Պավլիկի բուժ-  
ման սիհման. 1932 թ.

#### IV. ՍԻՖԻԼԻՍԻ ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ԲՈՒԺՈՒՄԸ

Թանկագին ընկեր

Իմ նախընթաց նամակներում յես համա-  
ռոտակի նկարագրել եմ սիֆիլիսի բուժման յեր-  
կու մեթոդ — արորտիվ և խրոնիկ-ընդհատ-  
վող: Թույլ տվեք այսոր ձեր դրած հարցին ա-  
կելի լրիվ պատասխանելու համար պատմեմ  
ձեզ սիֆիլիսի ժամանակակից բուժման ևս յեր-  
կու մեթոդի՝ նախազգուշականի և անընդհատի  
ժամին: Հին բժիշկների յերկու մեթոդի փոխա-  
րեն մենք այժմ, ինչպես տեսնում եք, ունենք  
**4-ը:** Հին 2 մեթոդներից 1-ը ախտանիշայինն  
և (այսպես ասած ոպպորտունիստների մեթո-  
դը, վորի դեմ իր ժամանակին հանդես յեկավ  
ֆուրիյան), իսկ մյուսը — խրոնիկ-ընդհատվո-  
ղը: Կան հեղինակներ, վորոնք ընդունում են  
սիֆիլիսի բուժման համար հինգ մեթոդ, ավե-  
լացնելով չորսին նաև վաղ սկսած բուժումը:  
Բայց յես հույսով եմ, վոր ձեզ դրած իմ նամակը  
ներից դուք ըմբռնել եք, վոր միշտ ել պետք ե-  
կաղ սկսել սիֆիլիսի բուժումը, ինչ մեթոդով  
ել լինի, ուստի հինգ չենք հաշվի, այլ կրավա-  
կանանք չորսով:

Գուցե հետո, ելի մեկ անդամ առիթ կու-

նենանք խոսելու ձեզ հետ, թե միքանի հեղի-  
նակներ ընդհանրապես մեծ զգուշությամբ են  
վերաբերվում սիֆիլիսի արորտիվ, ինչպես և  
վաղ բուժմանը և կարծում են, վոր այդպիսի  
յեղանակներն արգելում են որդանիզմի պաշտ-  
պանողական ուժերին պայքարելու մարմնի  
մեջ մտած վարակի դեմ, վոր իրը վաղ բուժու-  
մրն ավելացնում և ներվային սիֆիլիսով հի-  
վանդների թիվը: Վերջապես, վոր մի քանի  
հիվանդների սիֆիլիսը բուժվում և առանց  
մեր սովորական սպեցիֆիկ միջոցների կիրառ-  
ման և այլն: Այս բոլորը հետաքրքրական ե,  
բայց այսոր յես կամ ենում եմ խոսել բուժման  
նախազգուշական և անընդհատ մեթոդների  
մասին, հետաձգելով առայժմ այդ հարցերը  
ապագայի համար:

Առաջին յերկու մեթոդը — արորտիվ ու  
խրոնիկ-ընդհատվողը, մանավանդ այս  
վերջինը, բավականին յերկար ժամանակ դի-  
տողության տակ յեն յեղել, իհարկե, յերկա-  
րատե փորձով ստուգված են և ստացել են քա-  
ղաքացիական իրավունք. այս բանը նախազգու-  
շական և անընդհատ մեթոդների մասին ասել  
չի կարելի. նախազգուշական մեթոդը, պետք ե  
ասել, դժվար ե յենթարկվում ստուգման և շատ  
դժվար ե ապացուցել, յեթե կարելի յե-  
այսպես արտահայտվել, նրա նպատակահար-  
մարությունը, ներզործությունը և ազգեցու-  
թյունը. ինչ վերաբերում ե յերկրորդին, հույ-  
սով եմ, վոր հետագա իմ պատմությունից

կհամոզվեք, վոր նրա տեսական նախադրյալը  
չատ տրամաբանական և և գայթակղեցուցիչ,  
բայց մենք դեռևս մեծ վործառություն չունենք  
գործնականում նրա կերպուման նկատմամբ,  
ուստի և նրա մասին վորոշակի արտահայտվել  
չենք կարող:

Այսուամենայնիվ յես վորոշեցի գրել ձեզ  
այս մեթոդների մասին, վորովհետև գործնա-  
կան տեսակետից նրանք չափազանց կարեվոր  
հետաքրքրականություն ունեն:

Նախադրուշական (պրեվենտիվ) կամ կան-  
իիչ մեթոդն այն ե, յերբ ձգտում են այս կամ  
այն կերպ կանխել այն անձնավորության սի-  
ֆիլիսը, վորը պետք ե հիվանդանար նրանով,  
պաշտպանել վարակման վտանգին յենթարկ-  
վածին; Ում պետք ե հաշվել այդպես: Իհար-  
կե առաջին հերթին նրանց պետք ե հաշվել,  
վորոնք մերձեցում, սեռական հարաբերու-  
թյուն են ունեցել վարակի շրջանի սիֆիլի-  
սով հիվանդի հետ: Յեթե մի վորեւե տղամարդ  
ունեցել ե սեռական, հարաբերություն ուժեղ  
արտահայտված կոնդիլոմատոզ շրջանի սիֆի-  
լիսով հիվանդ կող հետ, իհարկե,  
շատ տվյալներ կան յենթարելու, վոր  
այդ աղամարդը կվարակվի հիվանդ կնոջից և  
վոր ինկուբացիոն շրջանից հետո տղամարդու  
սեռական գործարանի վրա յերեան կդա սիֆի-  
լիսի շանկը: Պրեվենտիվ բուժման նպատակն  
ե կանխել այդ շանկը, թույլ չտալ վարակին

անցնել որդանիզմի մեջ, վոչնչացնել հիվանդ  
կնոջ հետ ունեցած սեռական հարաբերության  
վտանդը: Հանսիչ բուժումը, կարծես, փոխա-  
րինելու յե սիֆիլիսի դեմ տարաբախտաբար  
դեռ գոյություն չունեցող նախապաշտպանո-  
դական շիճուկն ու պատվաստը (վակցինան):

Ենթադրենք՝ դուք կասկածելի սեռական  
հարաբերություն ունեցած մեկին նախորոք  
բժկել եք և չնայած դրան 3—4 շաբաթ անց  
դուրս ե դակիս շանկը, պարզ ե, վոր ձեր բու-  
ժումն աղղեցիկ չի յեղել, նա իր նպատակին չի  
հասել: Վիճելու տեղ չկա այլևս: Իսկ յեթե  
շանկը չի յերեվա՞ս: Կարելի յե արդյո՞ք վերա-  
դրել ձեր կանխիչ բուժման:

Իհարկե վոչ, վորովհետև, թեև ձեր հիվանդը  
վարակվելու համար շատ նշաններ ուներ,  
բայց կարող եր չվարակել: Բարեբախտաբար  
բոլորն ել անպատճառ չեն վարակվում սիֆի-  
լիսով, անգամ հիվանդի հնտ ամենամոտ հը-  
պում ունեցած ժամանակ. և դուք մոտավորա-  
պես գիտեք՝ թե ինչու. եպիթելի ծածկոցի ամ-  
բողջությունը, մերձեցման կարճատեսությու-  
նը, վերջապես զուցե և անհատական դիմաց-  
կունությունը և այլն: Ահա թե ինչու համար  
յես վերն ասացի, թե դժվար ե յուրաքանչյուր  
առանձին դեպքում ապացուցել այդ մեթոդի  
նպատակահարմար լինելը, դժվար ե հաստա-  
տել, թե վորքան ձեր հիվանդի փրկությունը  
սիֆիլիսից կախված ե կանխիչ բուժումից և  
վոչ թե այլ մոմենտներից: Այսպես թե այն-

ակն կանխիչ մեթոդը գոյություն ունի և յնո՞ւ այս հավանաբար ձգձղված «նախարանից» հետո, այժմ կպատմեմ ձեզ:

1922 թ. կեադիտին և նավարբո-Մարտինը առաջարկեցին տալ հիվանդներին ներս ընդունելու համար ֆուրնյո-յի գոտած մըկնդեղային պրեպարատ ստովարութը: Այդ ժամանակից սկսած շատ հեղինակներ հետաքրքրվել են նշած պրեպարատով, վորպես ոիֆիլիսիդեմ դործածվող կանխիչ միջոցով: Այս պրեպարատի կանխիչ ազդեցությունը հաստատված եր կապիկների և ճաղարների վրա՝ վերը հիշած հեղինակների կատարած փորձերով:

Լեադիտին հաստատել եր, վոր յեթե ճակարին նշտարով սիֆիլիս պատվաստելուց 2 ժամից մինչև 2 որ հետո տալ ստովարութը: Այս վերջինը կպաշտպանի ճաղարին վարակումից: Նա յերկու յերիտասարդ տղամարդու, վորոնք իրենց բարի կամքով համաձայնություն եյին տվել փորձի յենթարկվելու, պատվաստեց սիֆիլիսի վարակը (ձեռքերին), իսկ ստուգման համար միենույն վարակիթ պատվաստեց նաև կապիկներին (վերհոնքային աղեղի վրա): Պատվաստված տղամարդիկ, վորոնք ստացել եյին 2-4 դրամ ստովարութը, տողջ մնացին, իսկ կապիկի վրա 10 որից հետո յերեվան յեկան հետզհետե աճող պապուլաներ: Մի շարք հեղինակներ ֆուրնիյե, ժենո, Շվարց, Վորմս, Կոլլե և ուրիշները, իսկ ուստաներից Կրիչելսկին, պրոֆ. Եֆրոնը,

կիպսկերովը և ուրիշները նույնպես ուսումնաս սիրել են ստովարովի ազդեցությունը ճակարների փորձական սիֆիլիսի, մկների հետաղաքածոինի վրա և քիչ թե շատ բարենպաստ տպավորություն են ստացել: Վերջապես յեղել են դիտողություններ, յերբ ստովարութը լավ ազդեցություն ե թողել այն կանանց վրա, վորոնք սեռական մերձեցում են ունեցել սիֆիլիսով հիվանդ իրենց ամուսինների հետ: Կան և մի շարք ուրիշ դիտողություններ: Հետագա դետողությունների ժամանակ զանազան հեղինակների մեջ տարածայնություններ ծագեցին ստովարովի վերաբերյալ: Այդ հեղինակներից մի քանիսը ստովարովի կանխիչ ազդեցությունը աննշան եյին համարում, ուրիշները, ընդհակառակը, շատ բարձրացնում եյին: Բացի այդ, հեղինակների մեկ մասից չվրիպեց պրեպարատի թունավոր ներգործությունը. ի գեպը ասած, այդ պրեպարատը հայտնի յեր հոչակապոր Երլիխին 594 №-ի տակ. Երլիխը հրաժարվել եր այդ պրեպարատից նրա նեվրաձիգ հատկության պատճառով, ինչպես և մըկնեղեղի հնդատում ուրիշ պրեպարատներից՝ ատոկսիլից, արսացետինից և այլն: Բացի ստովարություն կա նաև տրեպարսով, վորն առաջարկել և ֆրանսիական սիֆիլիսագետ Կլ. Սիմոնը: Կենդանիների, ինչպես և մարդկանց վրա կատարած փորձերով ստուգելուց հետո, այդ պրեպարատն ել ունեցավ իր կողմնակիցներն ու հակառակորդները: Մենք ունենք բուժպե-

տառի (Մոսկվա) 0,25 տարլետներով պատրաստած ուսարսով պրեպարատը (ուստական ստովարսովը):

Կանխիսլու համար նշանակում են հավանական վարակումից մեկ որից վոչ ուշ 0,5, որական 2 անգամ, ընդամենք պետք է տալ 10,0. Հինգ որից հետո հնդորյա ընդմիջում անել:

Հիվանդը պետք է ընդունի պրեպարատը թշկի հսկողության տակ: Այդ պրեպարատը ունի նույն հակադուցմունքները, վորոնք կան սալվարումի գործածման ժամանակ: Գույցե դուք զարմացել եք, վոր թշկականության մեջ սիֆիլիսի դեմ կան կենդանիների և մարդկանց վրա ստուգած այլպիսի կանխիչ միջոցներ և նրանք մինչև այժմ մասսաների մեջ չեն տարածված, նրանց մասին պրոպագանդա չեն մղում և բոլորին ու ամեն մեկի նրան չեն բաշխում:

Գերմանական սիֆիլիսազետ Բլաչկոն առաջինն առաջարկեց՝ նախքան մի վորեև կանխիչ միջոցի հանձնարարումը լայն գործածության համար, մենք պետք են պահանջենք նրանից, վոր այդ միջոցը բոլոր դեպքերում ել լինի ազդեցիկ և ամենեվին անվնաս: Այս պահանջը մինչև որս ել իր ուժի մեջ ե: Տարարախտարար մինչև այժմ ել այլպիսի իդեալական միջոց դեռևս չունենք: Բոլոր առաջարկած միջոցները կարող ենք կիրառել մեծ զգուշությամբ: Զպետք ե մոռանալ, վոր նման միջոցները սովորաբար գործ են ածում հաճա-

խակի, ուստի այստեղ անհրաժեշտ ե կրկնակի զգուշություն:

Ապագայում առաջարկվելիք ավելի կատարելագործված պրեպարատների կանխիչ ազդեցությունը ստուգելու համար չպետք է բավականանալ միայն փորձնական ձևով: Անգնաստիարության դեպքում պետք է ստուգել նման պրեպարատը, ուսումնասիրելով, թե ինչ ազգեցություն ե նա ունենում այնպիսի կոլիկատիվների վրա, վորոնց սեռական սիֆիլիսով հիվանդանալու մասին մենք վաղորոք ունենք վիճակագրական տվյալներ: Վարակման թվի ուժեղ անկումից մենք կարող ենք յեզրակացնել պրեպարատի, վորպես կանխիչ միջոցի պիտանիության մասին: Պետք ե ասել, վոր նման միջոցների գործածումը զարձյալ կմնա սահմանափակ: Զե վոր սիֆիլիսով կարելի յե վարակվել և վոչ սեռական ուղղով, յերբ կարող ե դժվար լինել, յերբեմն նույնիսկ անհնար վորոշել, թե յերբ ե տեղի ունեցել վարակումը, ուրեմն և յերբ սկսել կանխիչ միջոց գործածելը:

Բոլորովին հրաժարվել կանխիչ բուժումից, յեթե վոչ, վո՞ր դեպքերում կիրառել: Մեր առջև ծագեց ուրիշ հարց՝ սիֆիլիսից անձնական նախազուշության հարցը: Թույլ տվեք դրա մասին մանրամասնորեն խոսել ձեզ հետ հետո, իսկ այժմ խոսենք սիֆիլիսի բուժման շորորի՝ անբնդհատ մեթոդի մասին,

## V. ԲՈՒԺՍԱՆ ԱՆԸՆԴԻՍ ՄԵՅՐԴԸ

Թանկագին ընկեր

Սիֆիլիսի բուժման անընդհատ մեթոդն առաջարկել ե Ստոկհոլմի սիֆիլիսագետ Ալմկիստը։ Այդ մեթոդի եյությունը, ինչպես այդ շուրջ ե տալիս անունը, կայանում ե նրանում, վոր առանձին կուրսերի մեջ ընդմիջումներ չեն անում, այլ հիվանդին բժշկում են անընդհատ, փոխելով միայն հակասիֆիլիսային սպեցիֆիկ պրեպարատները։

Հիվանդի բուժումն սկսելով սալվարսանի միջերակային ներարկումներից, անմիջապես անցնում են սնդիկին, հետո բիսմուտին, այնուհետև նորից սալվարսանին,

Քննության յենթարկելով բուժման զանազան յեղանակներ վերջին հարյուր տարվա ընթացքում, Ալմկիստը կանդ ե առնում Ռիկորի մեթոդիկայի վրա։ Ռիկորը բարձրացող դոզաներով սնդիկ եր տալիս հիվանդին մինչև նրա որդանիդմի դիմացկունության սահմանը։ Վեց ամիս նման ձեռով բուժելուց հետո, յերեք ամիս շարունակ տալիս եր, յոդային կալիոն։ այսպիսով նա բուժում եր անընդհատ իննամիս։ Ռիկորի աշակերտ Ֆուրնիյեն ձևափոխեց այդ մեթոդիկան և մտցրեց բուժման խոռնիկ-ընդհատվող յեղանակը։ Ալմկիստի կարծիքով, Ֆուրնիյեի յեղանակը թեև տարածվեց ամենուրեք, սակայն մի քանի պակասություն-

ներ ունի՝ առանձին կուրսերի միջև ընկած ընդմիջումների պատաճառուվ, սիֆիլիսի վարակը զեղերի անընդահան ներգործության ազդեցությունից մնում է ազատ և նորից ուժ ե ձեռք բերում մինչև հետեւյալ կուրսն սկսելը. վարակը, կարծես, նորից ամրանում ե, ուստի և ստիգմած պետք ե կրկնակի աշխատանք կատարել, վորպեսզի հասցնենք նրան իր նախկին դրության, վորն ուներ նա ընդմիջումից առաջ։

Ռիկորը բացի սնդիկից ու յոդից ուրիշ միջոցներ չուներ և նա հնարավորություն չուներ կատարել յերկարատև անընդհատ բուժում (սնդիկով թունավորում, որդանիդմի անդիմացկունություն), իսկ մենք մեր տրամադրության տակ ունենք սալվարսան, բիսմուտ, ինչպես և հին պրեպարատներ—սնդիկ ու յոդ, ուրեմն համարձակ կերպով կարող ենք իրագործել Ռիկորի պլանը։ Այսպիսով, սիֆիլիսային վարակի անդադար թուլացման նպատակով կատարած անընդհատ բուժումը, հեղինակի կարծիքով, ավելի կատարելագործված մեթոդ ե, քան խրոնիկ-ընդհատվողը։ Բայց մեթոդ ամառ պետք ե վերցնել Ռիկորի ժամանակ յեղած պակասությունները, պետք ե հերթով կիրառել վոչ թե սնդիկ ու յոդ, այլ մեր բոլոր հակասիֆիլիսային միջոցները՝ սնդիկը, յոդը, բիսմուտը, սալվարսանը։

Բուժման ժամկետը պետք ե կրծատվի, վորովհետև Ֆուրնիյեի առաջարկած յերեք տարին, հակառակ Ռիկորի վեց ամսվան, ձըդ-

ձգմած և այն պատճառով, վոր ընդհատվող բուժումը թույլ ազդեցություն է ունենում հիվանդության վրա: Ֆուրնիյեյի այն նկատառումները, թե որդանիզմը կարող է ընտելանալ վորոշ պրեպարատների, կարող է թունավորվել նրանով, կրկնում եմ, ֆուրնիյեյի նկատառումները, վորոնք հիմք են ծառայել խրոնիկ-ընդհատվող մեթոդի համար, վերանում են, վորովհետեւ մենք հնարավորություն ունենք փոփոխել հակասիփիլիսային միջոցները, իսկ Ռիկորն ու նրա աշակերտ ֆուրնիյեն չունեյին:

Ալմկվիստը սիֆիլիսի անընդհատ բուժման չորս սխեմա յե առաջարկում.

1. արորտիվ բուժում—նեոյի 10 միջյերակային ներարկում մեկ ու կես ամսվա ընթացքում. բիսմուտի 10 միջմկանային ներարկում մեկ ամսվա ընթացքում, սնդիկի 10 միջմկանային ներարկում մեկ ամսվա ընթացքում (ընդամենը յերեք ու կես ամիս).

2. կարճատեւվ անընդհատ բուժում—7 ամիս.

3. միջին տելվականությամբ անընդհատ բուժում—տաս և կես ամիս.

4. Երկարատես անընդհատ բուժում 14 ամիս:

Ես մանրամասն և ճշգրիտ կերպով չեմ նկարագրում այլ սխեմաներն այն պատճառով, վոր ինքը հեղինակն ել անխախտ չի հաշվում, այլ լիակատար ազատություն և տակա ձեափոխելու, պահպանելով միայն սկըզ-

բունքը — բուժել առանց ընդմիջումների, փոփոխելով միջոցները բուրաքանչյուր մեկ—մեկ և կես ամիսը: Այս մեթոդի մասին դուք ավելի մանրամասնորեն կարող եք կարդալ «Մուս. Վեստ. Դերմատ.» Հանդիսի 1926 թ. № 4 գրքի մեջ, վորի խմբագրին ուղարկել եք հեղինակն իր հողվածը տպագրելու, մեծ նյութի վրա ստուգելու և մեծ փորձառություն ձեռք բերելու համար, վորպեսզի հնարավորություն լինի այս հարցի մասին վերջնական վճիռ կայացնելու:

Այդ հողվածի բովանդակությունը բառացի կերպով գրեցի յես ձեզ, և դուք, կարծում եմ, չեք կարող համաձայն չլինել, վոր հեղինակի տեսական նախադրյալը շատ հրապուրիչ է, նույնիսկ և համոզեցուցիչ: Հեղինակի անընդհատ մեթոդով բուժած հիվանդների հիվանդության պատմությունը տպած է հողվածում և վորոշակի կերպով խոսում ե հոգուտ այդ մեթոդի: յես կարող եմ խորձուրդ տալ ձեզ փորձել այդ մեթոդը, վորը շատ տվյալներ ունի տարածման համար: Հիշեցեք միայն մի բան, վորի մասին բազմից ասել եմ յես ձեզ, վոր դուք պետք ե բժշկեք վոչ թե սիֆիլիսը, այլ սիֆիլիսով հիվանդին, վոչ թե հիվանդությունը, այլ հիվանդին: Մեթոդի ստրուկ մի դարձեք, ձեր հիվանդին ուժասպառ մի արեք, յեթե նա անընդհատ, սուանց ընդմիջումների բուժման չի դիմումամ:

- Կարդացեք — ուստի բնին լեզվով:
1. Պ. Գ. Ի. անկետան աքորալիվ սիֆիլիսի մառին:
  2. Ֆուրնիե Սրբության բուժումը՝ 1898 թ.
  3. Գ. Ի. Մեշհերսկի Սրբության մասին:
  4. Պրոֆ. Ն. Ս. հիվան և բժ. Ն. Ս. Սաելով Սրբության բուժումը բիստուպով:
  5. Պրոֆ. Ա. Ա. Բըհչով, բժ. Ս. Յե. Գալլպերին, բժ. Բ. Ն. Զելլերը ման, բժ. Ն. Ս. Սմելչով, պրոֆ. Ն. Ս. Եփրոն — սիֆիլիսի բուժ ման սիեստմերը:
  6. Բժ. Ա. Ռ. Լիխարյով Տեղեկատումաջիկի յեկ գեներակ հիվանդություն մասին, 1929թ.

## VI. ՆԵՐՎԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒԹՅԱՆ ՈՒՇ ՍԻՑԻԼԻԱԾ Թանկագին ընթեր

Ինչպես դիտեք, Ֆուրնիյեն յերկու հիվանդություններում պրոգրեսսսիվ պարալիզը և վողակութեղի չորուկը — անվանել ե «պարասիֆիլիսային» կամ «հարասիֆիլիսային», վորովհետեւ վաղուց եր նկատել, վոր այդ հիվանդությունները կազ ունեն հիվանդի մի ժամանակ ունեցած սիֆիլիսի հետ։ Ներկայումս այդ կապը հաստատված ե. նման հիվանդների, մանականդ հարածուն (պրոգրեսսսիվ) պարալիզով հիվանդի արյան Վ. Ռ. Համարյա միշտ դրական ե լինում. բացի այդ ճապոնական գիտնական նոդուչին 1913 թ. հարածուն պարալիզով հիվանդի ուղեղի կեղեային նյութի մեջ գտել ե սպիրոխետներ։ Այսպիսով ներկայումս այդ հիվանդությունները անկառած պետք ե հաշվել սիֆիլիսի ներվային ուշ

արտահայտություններ, թեև նրանք մասին դեռ 1857 թ. միքանի հեղինակներ (Եսմարխ, Եսասեն) կարծիք եյին հայտնել, վոր նրանց պատճառը պետք ե փնտոել սիֆիլիսի մեջ։ Դոչերն ու Լեսսերն առաջարկեցին ընդունել սիֆիլիսի և չորրորդ շրջանը, վորին պետք ե վերադրել սիֆիլիսի այս (ինչպես և մի քանի ուրիշ) ուշ արտահայտությունները։

Դուք դիտեք նույնպես, վոր բարեբախտությար սիֆիլիսունների անշան տոկոսն ե հիվանդանում այսպես կոչված ուշ ներվային սիֆիլիսով, վոր հիվանդների մեծ մասը այդ չի ունենում։ Ասում եմ բարեբախտաբար, վորովհետեւ պրոգրեսսսիվ պարալիզը (պ.պ.) և վողակութեղի չորուկը — տարեսը — անբուժելի կամ, ավելի ճիստ ասած, համարյա անբուժելի հիվանդություններ են։ Մեր զորեղ հակասիֆիլիսային միջոցներն անզոր են նրանց դեմ և սակալ գեղքերում են տալիս նման հիվանդներին լավացում։

Ինչո՞վ բացատրել այդ հիվանդությունների յերեան գալը։ Ինչո՞ւ մի քանի հիվանդների սիֆիլիսը այդպիսի ցավալի վախճան ե ունենում, իսկ ուրիշներինը — վոչ։ Ինչո՞ւ մի քանի հիվանդների սիֆիլիսը բավականանում է միայն մաշկի կամ ներքին գործարանների յերելությներով, իսկ ուրիշների մեջ ախտահարում ե ներվային համակարգությունը։ Կան արդյո՞ք տվյալներ նախորոք վորոշելու,

թե հիվանդությունը յերբ կանցնի թեթև  
ու յերբ կընդունի նա սպառնալից բնույթ...  
Ահա ձեր տված հարցերից մի քանիսը, վորոնց  
յս կաշխատեմ, ուժերս ներածին չափ, պատաս-  
խանել: Այս հարցերը ծագել են և ծաղում են  
վոչ թե միայն ձեր, այլև յուրաքանչյուր սէ-  
ֆիլիսարանի մեջ:

Հիշում եք, մենք ձեզ սովորեցրել ենք,  
վոր ներվային համակարգության սիֆիլիսով  
հիվանդանում են ամենից հաճախ վատ բժըշ-  
կված հիվանդները, վորոնք բավականին յե-  
ռանդուն բուժում չեն ստացել, այն հիվանդ-  
ները, վորոնք ունեն ներվային լարված գոր-  
ծունեյություն, ունեն ներվային կառուց-  
վածք, վորոնց հոգեկան ներվային համակար-  
գությունը շատ ել կայուն չե, այն հիվանդ-  
ները, վորոնք չափաղանց զբաղվում են նրս-  
տակյաց մտավոր աշխատանքով, շուայլորեն  
վատնում են իրենց ներվային համակարգու-  
թյունը հարբեցողությամբ, անդադար գրգը-  
ռումներով, դեղին կյանքով, անքուն գիշեր-  
ներով և այլն, կարճ ասած, նրանք, վորոնք  
իրենց ներվային համակարգությանը անհրա-  
ժեշտ հանգստություն չեն տալիս և, մաշելով  
նրա հյուսվածքները, դարձնում են նրան սիֆի-  
լիսի թույնի հանդեպ նվազադույն ընդդիմա-  
դրության տեղ:

Վիճակդրությունը ցույց է տալիս, վոր  
թեծ քաղաքներում սիֆիլիսով հիվանդների  
մեջ պ.պ. և տաքես ունեցողների թիվն ավելի

շատ ե, քան գյուղերում, և այս հանգա-  
մանքը բացատրում են նրանով, վոր կյանքը  
քաղաքում ավելի յե հարուստ ներվային հա-  
մակարգության համար վնասակար մոմենտ-  
ներով, քան գյուղում:

Այնուհետև պետք ե ասել, վոր նուրբ  
«քաղաքակիրթ» կյանք վարող յեկրտպացի-  
ների մեջ ներվային սիֆիլիսը զգալի չափով  
ավելի շատ ե պատահում, քան վոչ «քաղա-  
քակիրթ» և պակաս կուլտուրական ժողո-  
վուրգների մեջ: Ականավոր կրաֆտ-Երին-  
քը 1897 թ. Մոսկվայում կայացած կոնգրե-  
սում (թշչական) շատ սրամիտ կերպով վո-  
րոշեց պ.պ. և տաքես առաջացնող պայման-  
ները: Նա ասաց.այս հիվանդությունների  
զարգացման համար անհրաժեշտ են յերկու  
պայման՝ «սիֆիլիզացիա և ցիվիլիզացիա»:  
Այս վերջին խոսքի տակ նա հասկանում եր  
կապիտալիստական յերկրների ժամանակա-  
կից կյանքը՝ անսահմանափակ հարբեցողու-  
թյամբ, ուժերից վեր լարված գործունեյու-  
թյամբ, աղքատների չափից դուրս աշխա-  
տանքով և հարուստների բախտախաղով բոր-  
սայում ու թղթախաղով, հաճույքների հա-  
մար վարած անքուն գիշերներով՝ մեկը մյու-  
սի հետ մըցումով, շահի հետապնդումներով:  
Այն սիֆիլիսունները, վորոնք ստիպված են  
յերկար կանգնել կամ աշխատել վոտներով  
պահպանել հավասարակշռությունը, որինակ՝

վագոնավարները, նամակատարները, վոտի  
մեքենայով աշխատող դերձակները, ծովային-  
ները և այլն, ավելի հաճախ են տարեսով հի-  
վանդանում, ինչպես և հարածուն պարավիզն  
ավելի հաճախ և պատահում սիֆիլիսով հի-  
վանդ հարթեցողների, ցոփ ու զեղիս կյանք վա-  
րողների, ուժեղ հույզեր ունեցողների (բախ-  
տախաղ, շահի հետապնդում և այլն)մեջ։ Այս  
պիսով, մեր դասավանդությունից հետեւում եր,  
վոր սիֆիլիսի բոլոր դեպքում ել սիֆիլիսա-  
յին թույնը մեկ ե, բայց նա ավելի հաճախ  
ախտահարում ե հիվանդի որդանիզմի այս  
կամ այն պատճառից թուլացած հյուսվածք-  
ներն ու նրանց համակարգությունները։ Յերբ  
հոգնած ու թուլացած ե հիվանդի ներվային  
համակարգությունը, նա վատ ե ընդդիմա-  
դրում սպիրինետին, որդանիզմի մեջ գտնված  
սիֆիլիսային թույնին և հիվանդանում ե հար-  
ածուն պարավիզով, գլխի ուղեղի ախտահա-  
րության դեպքում, իսկ վողնուղեղի ախտա-  
հարության դեպքում — տարեսով։

Բայց Ֆուրնիեն, վորի անունը հաճախա-  
կի կրկնում եմ (սիֆիլիսադիտության մեջ չկա  
մի բնադրախռ, վորի մեջ այդ մեծ բժիշկը  
հետք չունենար), նկատել եր, վոր յերկրոր-  
դական շրջանի յերեվույթներով աղքատ սի-  
ֆիլիսն ավելի հաճախ ե վերջանում պ. պ. և տա-  
րեսով, քան հյութեղ յերեվույթներով առատ  
սիֆիլիսը։ Ֆուրնիեյի այս հայտարարությու-

նը շատ հեղինակներ են հաստատել, առանձնա-  
պես Մ. Կոլլենը։

Յեղել են գեպքեր, յերբ ամուսնուց սիֆի-  
լիսով վարակված կինը հետո հիվանդացել ե,  
ինչպես և ամուսինը, պ. պ., այսինքն ներվա-  
յին սիֆիլիսով։ Գրականության մեջ կա մի  
նկարագրած դեպք, յերբ տղոմբարդը սիֆիլի-  
տով վարակել ե իր կնոջը և նրանց հետ միատեղ  
սպրող քենուն, հետո յերեքն ել ունեցել են  
պ. պ. այրը վարակումից վեց տարի հետո, քե-  
նին յոթ և կինը ութ։

1884 թ. Ալժիրում չորս զուավներ միաժա-  
մանակ միևնույն կնոջից վարակվեցին սիֆի-  
լիսով, վորը հենց սկզբէց սաստիկ ծանր ըն-  
թացք ընդունեց. հիվանդներից յերկուսը մե-  
ռան վարակումից յերկու տարի հետո, յերրոր-  
դը մեռավ պ. պ. ից վարակման յերրորդ  
տարին, իսկ չորրորդը մեռավ վարակման չոր-  
րորդ տարին ախտահարված տարեսով և կու-  
րությամբ։

Բրոսաիյերը պատմում ե ապակի փչող յոթ  
ընկերների դեպքը. նրանք բոլորն ել վարակվել  
եյն սիֆիլիսով իրենց մեկ ընկերոջից. յոթից  
յերկուսը հիվանդացան պ. պ., իսկ մյուս յեր-  
կուսը — տարեսով։ Վերջապես պատմեմ ևս  
մի դեպք, վորը տպագրել ե Մորեյլ Լավեյլը  
1893 թ. «Խեվյու դը Մեղիսոն» հանդիսում։

1870 թ. մի ինչ վոր աղջիկ Մարթա և. աղ-  
ջանունով վարակվում ե սիֆիլիսով և իր հեր-  
թին վարակում մի բժիշկ ուսանողի Ա., միե-

նույն տարում նա վարակում ե առաջին ուսանողի ընկերոջը՝ ուսանող Բ-ին, մի քանի ամսից հետո ամուսնանում և վարակում ե Գ-ին մի առ ժամանակ անց նա վարակում ե դեղադործ Դ-ին և խնձեներ Ե-ին։ Մարթա Խ-ի զոհերի վիճակը յերկար տարիների հսկողությունից հետո ցույց տվեց, վոր նրանք բոլորն ել վաղթե ուշ վախճանվել են պ. պ-ից, այսինքն ներվային սիֆիլիսից։ Նման բոլոր դեպքերը (իհարկե բոլորը չեմ պատմում) ե այն հանդամանքը, վոր արևադարձային յերկրների (աֆրիկական արարների մասին ե խոսքը) սիֆիլիսն ընթանում ե առանց ներվային յերեվույթների, բայց առատ մաշկի նշաններով, այսպես կոչված տաք յերկրի (եկզոտիկ) սիֆիլիսը, իսկ յերրոպացիների սիֆիլիսն ունենում ե ներվային հետեվանքներ։ ասում եմ, այս բոլորը առիթ եյին տալիս մտածելու, վոր արդյոք տարբերություն չկա սիֆիլիսի զանազան վարակների մեջ, յերկու տեսակ չե արդյո՞ք սիֆիլիսը, հենց սկզբից մեկը մյուսից ջոկ, կամ յերկու տեսակ չե արդյո՞ք սպիրոնիտը, վորոնցից մեկը առաջացնում ե մաշկի արտահայտություններով սիֆիլիս, իսկ մյուսը — ներվային։

Այս նոր «յերկվության», նեվրածիդ թեորիայի կողմնակիցներն եյին (սպիրոնիտի դյուտից շատ առաջ) Երրը, Նոննեն, Մոտտը և ուրիշները։ Վերջին ժամանակներս Փրանսիական յերկու գիտնական՝ Լեվադիտին և Մարին

այս հարցը դարձրին ուսումնասիրության առարկա։

Հիմնվելով սիֆիլիսի ընթացքի մի շարք վերը բերածներին նման դեպքերի վրա, սիֆիլիսի, վորը ծագել եր միևնույն աղբյուրից և ավել բացառապես ներվային նշաններ, բացի այդ, նկատի առնելով, վոր պ. պ. և տարեսը չեն յենթարկվում սովորական հակասեիֆիլիսին դեղերի աղղեցության, և յելնելով մի շարք այլ նկատառումներից, վորոնց մասին գրել շատ յերկար կլիներ, և վաղիտին և Մարին յեկան այն յեզրակացության, վոր սիֆիլիսային վարակը յերկու տեսակ եւ մաշկածիդ վորն ախտահարում ե մաշկն ու ներքին որդանները, և նեվրածիդ, վորն ախտահարում ե ներվային համակարգությունը։

Նշած գիտնականները սիֆիլիսային վարակի յերկվության թեորիան ստուգել են ճաղարների վրա, պատվաստելով նրանց մերթ մաշկածիդ (վերցրած կոշտ շանկրից), մերթ նեվրածիդ վարակ (վերցրած հարածուն պարակով հիվանդի արյունից) և իբր թե ստացել են թեորիան հաստատող տիլյալներ։ ճաղարներին պատվաստած շանկրները մեկը մյուս սից տարբերվել են գաղտնի շրջանով, ձեվագիտական պատկերով, թունալիությամբ և այլն։

Այս գիտնականների աշխատանքները, վորոնք սկսված են դեռևս 1919 թ. վերջերքից և շարունակվել են մինչեւ 1923 թ., զանազան

յերկրների սիֆիլիսաբանների վեճի նյութ դարձան. այս վերջինները ժխտում եյին սիֆիլիսային վարակի յերկվությունը:

Սիստ քննադատության յենթարկեցին հեղինակների թե տեսական հիմունքները և թե ձագարների վրա նրանց կատարած փորձերը, վորոնք հիմնականում այնքան ել անթերի գուրս չեկան: Հնարավոր ե, վոր ապագայում այդ փորձերը կիրկնվեն, բայց հավանական ե, վոչ թե ձագարների վրա, վորոնք խճճում են հարցը, այլ կապիկների վրա: Այսպես թե այսպես, նշած թեորիան բավականաչափ հերքված սկզբք ե համարել, և մեզ համար ընդունելի չե: Ինչ վերաբերում ե թեորիայի առանձին յենթադրություններին, անհրաժեշտ ե ասել, վոր նրանց մի մասը, շատերի կարծիքով, հաստատուն հիմունքներ քիչ ունեն: Արինակ՝  
1) ներվային սիֆիլիսը սակայ ե պատահում արեվադարձային բնիկների մեջ. դա բացատրվում է Կրաֆտ-Եբինդի աֆորիզմով, ինչպես և նրանով, վոր քիչ չեն այն յեվրոպացիները, վորոնք վարակվել են նշած յերկրներում սիֆիլիսով (հետևապես համաձայն թեորիայի—մաշկածիդ վարակով) և, հայրենիք վերադառնալուց հետո, հիվանդացել պրոդրեսսիվ պարալիզով (պլ.պլ.) կամ տարեսով: Բացի այդ արեվադարձային յերկրների բնիկների ներվային սիֆիլիսի հազվադյուտությունը զեռնս կարուտ ե ստուգման. ներվային սիֆիլիսը պատահում ե հարավային չինացիների և

Պոչ յեվրոպացի ուրիշ ազգությունների մեջ: Յաղասոնը ասում է, վոր մոնղոլների մեջ ներվային սիֆիլիսը յեվրոպացիներից քիչ չե: 2) Մաշկի յերեվույթների աննշան քանակը պ. ոլ. և տարեսի դեսքեր, յերբ պ պ. ին և մանավանդ տարեսին զուղակցել են մաշկի թե յերկրորդական և թե յերրորդական յերեվույթներ: Յես ինքս, ինչպես և ուրիշները, շատ հիվանդներ եմ տեսել տաքեսով, վորոնք մաշկի վրա միեւնույն ժամանակ ունեցին պարզ ու խիստ արտահայտված գումմաներ:

3) Տարբեր հյուսվածքներ և տարբեր համակարգություններ տարբեր վարակով են ախտահարվում:

Դա ամենելիին պարտադիր չե. մենք գիտենք այնպիսի հիվանդություններ, վորոնք առաջանում են շատ զանազան հյուսվածքներում միեւնույն միկրոբից. Վերցրեք, որինակի համար, տուրերկուլյոդի ցուպիկը, վորն առաջանցում ե մաշկի յերեվույթներ (յուպուս), յերեվույթներ ներքին գործարաններում (թոքեր, աղիքներ և այլն) և յերեվույթներ ներվային համակարգության մեջ (ուղեղապատենատապ). բորի ցուպիկը, վորն առաջանում է թե մաշկի և թե ներվային տեսակը: Ինչ վերաբերում ե ընտանեկան տեսակների նմանությանը, պետք ե ասել, վոր այդ դեպքերը ավելի շատ բան կապացուցեյին, յեթե

Հիմնական կերպով լինելին բժշկված, մինչդեռ  
դրանց բուժման հարցն այնքան ել պարզ չե և  
այլն:

Ներկտյին սիֆիլիսի սկզբնապատճառի մասին  
կա մի քանի թեորիա: Մենք նրանց մասին ըս-  
տորելվ կխոսենք ձեզ հետ: Իսկ այժմ պետք ե  
ընդունենք, վոր մինչև այժմ տվյալներ չկան,  
վորոնք կարողանային փոխել մեր ունեցած  
հայացքն այդ կարեռը ու հետաքրքրական հար-  
ցի մասին: Միկորի հին կանոնը, թե յուրա-  
քանչյուր հիվանդ իր ձեռք և տանում սիֆիլի-  
սը, մինչև որս ել մնում ե իր ուժի մեջ: Ներկա-  
յումս մեր ունեցած գիտելիքների համաձայն  
մենք տվյալներ չունենք ընդունելու սիֆիլիսա-  
յին վարակի յերկվությունը:

## VII. ՎՈՂՆՈՒՂԵԼԻ ՀԵՂՈՒԿԻ ՀԵՏԱԶՈՅՈՒԹՅՈՒՆԸ

### Թանկագին ընկեր

Ի հարկե, յես չպետք ե դրեյի ձեզ պրո-  
դրեսսիվ պարալիզի և վողնուղեղի չորուկի  
մասին, դրանք ներդախտազետի բնագավա-  
ռից են, և մասնագետ նեվրախտազետը այս  
հարցերն ավելի լավ կլուսաբանի ձեզ, քան  
յես, ինչպես և ներքին հիվանդությունների  
մասնադետն ավելի լավ կրացարի ներքին գոր  
ծարանների սիֆիլիսը: Յես համարձակվում եմ  
խոսել ձեզ հետ այս հիվանդությունների մա-  
սին այն պատճառով, վոր այդ տեղեկություն-  
ներն անհրաժեշտ են մեզ, սիֆիլիսազետի գոր-

ծունեյության համար, վորպես նախաղրյալ  
վորոշելու կանխման և բուժման մի քանի հար-  
ցերը:

Քանի վոր մենք չենք կարող ընդունել  
սպիրոխետի 2 տեսակը՝ մաշկաձիղը և ներա-  
ձիղը, ակնհայտ ե, մենք կարող ենք որդանիզմի  
մեջ սպիրոխետի տարածման պրոցեսը պատ-  
կերացնել հետեւյալ կերպ. մտնելով առաջնակի  
բացվածքից (ֆորամեն կոնտազիոզում), նա  
ավշատար տպա և արյունատար անոթների հա-  
մակաղբության միջոցով հետզհետե հասնում ե  
բոլոր հյուսվածքներին ու բջիջներին. նա  
(սպիրոխետը) մտնում ե նաև ներվային հյուս-  
վածքի գլխի ուղեղի և վողնուղեղի բջիջների  
մեջ: Հավանական ե, անշուշտ, վոր, գտնվելով  
վերջինիս մեջ, սպիրոխետը ձեռք ե բերում ինչ  
վոր սպիրիֆիկ հատկություններ, ինչպես կար-  
ծում են մի քանի հեղինակներ, բայց դա կախ-  
ված է վոչ թե սպիրոխետից, այլ այն հողից,  
վորտեղ նա բնակություն և հաստատել, վոչ թե  
սպիրոխետների տարրեր տեսակներից, այլ գո-  
յության պայմաններից: Մենք հնարավորու-  
թյուն ունենք մեր բուժումից հետո ավելի կամ  
պակաս չափով ճշգրիտ վորոշելու, թե վորքան  
հիվանդի որդանիզմը «մաքրվել ե» սպիրոխե-  
տից և նրա վարակից: Հիվանդի արյան կայուն  
բացասական Վ. Ռազմից կրկնած յերկար  
ժամանակի ընթացքում, հիմք ե տալիս յեն-  
թաղթելու, վոր հիվանդի որդանիզմի մեջ, գոնե-  
մոտ ապագայի համար, սպառնալից բան չկա:

Հիվանդի արյան շիճուկի բացասական Վ. Ռ. հիման վրա կարող ե՞նք արդյոք ասել, վոր նըստան հիվանդին չեն սպառնում պ. պ. ու տարեսը: Վոչ: Չե՞նք կարող: Քիչ չեն այնպիսի դեպքեր, յերբ հիվանդների արյունը մշտապես (համենայն դեպք յերկար ժամանակ) տվել ե բացասական արդյունք, բայց նրանց մեջ զարկացնել ե ներվային սիֆիլիս: Դլայ և վողնուղեղի խորշերի շրջափակվածությունը, գուցե, խոչընդոտ ե հանդիսանում անցնելու արյան մեջ պյան ճարպանման նյութերին, այն, կասենք մենք, «թույներին», վորոնք հիվանդների արյան հետազոտության ժամանակ տալիս են դրական արդյունք: Կարճ ասած, հիվանդի արյան շիճուկի բացասական, անդամ կայուն բացասական Վ. Ռ. դեպքում, հիվանդի գլխի ուղեղում և վողնուղեղում կարող են լինել սպիրոխետներ և սիֆիլիսային վարակ. նրանց ներկայությունը կարող է չաղղել արյան ուղեղիային: Կենտրոնական ներվային համակարգության դրությունը պարզելու համար հետազոտության ուրիշ մեթոդներ են անհրաժեշտ:

Այդ հետազոտությունները վողնուղեղի հեղուկին են վերաբերում:

Վողնուղեղի հեղուկն ստանալու տեխնիկան այս ե. նստեցնել հիվանդին բարձր աթոռի կամ սեղանի յեզրի վրա, առաջարկել նրան թեքվել դեպի առաջ և իսկատ կուացնել մեջքը: Գոտկասեղի 4 ու 5 վողների միջև ծակել վող-

նուղեղի պատյանները և վերցնել յերկար ու սնամեց աստղով դուրս հոսող հեղուկը: Մակելու տեղը ճիշտ վորոշելու համար՝ յերկու զիստոսկրների ամենաբարձր կետերի մրջե, մեջքի լայնությամբ գիծ են քաշում (որինակ յոդով): այդպես մի գիծ ել քաշում են վողնաշարի յերկարությամբ, յերկու գծի խաչաձևումից քիչ ցած գտնվում ե գոտկատեղի 4-5 վողների միջև ընկած տարածությունը: Տեղը մաքրելուց հետո (սպիրտ, յոդ), լավ յեռացրած հատուկ բարակ ասեղը մանդրենի հետ խրել վողների փշավոր յելուղների միջև, զդուշությամբ մանդրենը հանել, վորից հետո, յեթե ուղիղ ե ծակած, ասեղի միջով կաթիլ կաթիլ սկսում ե հոսել վողնուղեղի թափանցիկ հեղուկը: Պետք է հավաքել հեղուկը ասեղի տակ պահած 10-12 խոր. ս. մետրանոց փորձանոթի մեջ: Այս քանակը լիովին բավական ե անհրաժեշտ հետազոտություններ կատարելու համար:

Ի՞նչ հետազոտություններ են դրանք: Նախ վասսերմանի ռեակցիան, վորը կատարվում ե նույն ձևով, ինչ արյան շիճուկի հետ: Հեղուկից ստացած արդյունքը կարող ե չհամապատասխանել արյան շիճուկից ստացած արդյունքին: Մի քանի որ սրանից առաջ յես ցույց տվեցի ձեր ընկերներին յերկու հիվանդ, վորոնց արյան շիճուկի վասսերմանը կայուն բացասական եր, իսկ վողնուղեղի հեղուկը տվեց չորս պլյուս: (Յերկուան ել ունեյին ներվային ձեվի

սիՓիլիս) : Այնուհետև պետք ե ասել, վոր վող նդւղեղի նոր թողած թարմ հեղուկի հետ կատարում ենք հետևյալը .

1. վորոշում ենք մեկ խոր. միլիմ. մեջ, վորքան լիմֆոցիտներ կան հենց այսպես, ինչ պես համարում են արյան կարմիր գնդիկները թումա-ջեյսի հաշվիչ կամերայում : Վողնուղեղի նորմալ հեղուկում նրանց թիլը լինում ե 1-2, մաքսիմում 5, իսկ ախտաբանական փոփոխված հեղուկում 15-20 և ել ավելի : Յերբեմն ամբողջ տեսադաշտը լի յե լինում լիմֆոցիտներով, և ճիշտ հաշվելու համար նույնիսկ հարկավոր ե լինում վողնուղեղի հեղուկի կաթիլը մի քանի անգամ թուլացնել, լուծելով նրան բնախոսական լուծույթի մեջ.

2. կատարում ենք սպիտների և գլոբուլին-ների ռեակցիաները, Պանդիյի և Նոննե-Ապրելտի ռեակցիան :

Պանդիյի ռեակցիան կատարում են այսպես. փոքրիկ փորձանոթի մեջ 3-4 խոր.սանտ. տաս տոկ. կարբոլ. թթվի լուծույթին ավելացնել վողնուղեղի հեղուկի 2-3 կաթիլ և թափահարել : Յերեք բույկ փորձանոթը պահելոց հետո, նայում են, չունի՝ արդյոք հեղուկը սպալի գունավորում : Հեղուկի սպալանման դունավորումը, ինչպես և վերջինիս աստիճանը կախված է վողնուղեղի հեղուկի գլոբուլիների չառությունից : Վողնուղեղի նորմալ հեղուկը այդքան կարճ ժամանակամիջոցում ուղալի գունավորում չի ստանում :

Կան ևս մի չարք ռեակցիաներ, Գողսոլի բենդոյան ռեկացիան և ուրիշները. բայց բավականանա՞ք բերածով:

ՅԵՐԵՎԱՆ պետք ե հետազոտության յենթարկել հիվանդի վողնուղեղի հեղուկը : Քանի վոր յենթաղբում ենք, թե սպիրոխետը ներլային հյուսվածքի մեջ ե մտնում սիֆիլիտով վարակման հենց սկզբից, ապա ուրեմն պետք ե վողնուղեղի հեղուկն ել հետազոտել այնքան հաճախակի, վորքան և արյունը, բայց, իհարկե, դա անկարելի յե : Վեննայի հոչակավոր սիֆիլիսաբան կիրլեն, իր ձեռքի տակ ունեցած մեծ նյութի հիման վրա, պարզաբանեց այսպես. հիվանդ վողնուղեղի դրության վերջնական վորոշման ժամանակը սովորաբար յերկրորդական ուշ շրջանն ե, կամ նրա վերջը, վորը, հեղինակի կարծիքով, համապատասխանում ե վարակման յերկրորդ տարվա վերջին : Այդ ժամանակ կամ մի փոքր դրանից ուշ, պետք ե հետազոտության յենթարկել սիֆիլիտովի վողնուղեղի հեղուկը : Մինչեւ այդ ժամանակ հեղուկի դրական կամ բացասական արդյունքը կայուն չե, մշտական չե և ախտորոշման ու նախազդուցացման համար մեծ նշանակություն ունենալ չի կարող : Միայն վարակման յերերորդ տարվա վերջից սկսած, բացասական ռեակցիան մնում է կայուն, յերբ հեղուկը նորմալ է, իսկ դրականը հասնում է ծայր աստիճանի, յերբ հեղուկը ախտաբանական փոփոխության ե յենթարկված :

Սիֆիլիսաբանի համար վողնուղեղի հեղուկի ռեակցիան ունի մեծ նշանակություն։ Ֆրանսիական բժիշկ Պ. Ռավոյի հավաքած տեղեկությունները (1903-1929 թ.) հանգան հետեւյալ յեզրակացության։ 1) յերկրորդական սիֆիլիսով այն հիվանդները, վորոնց վողնուղեղի հեղուկը փոփոխություններ չի ունեցել, հետագայում նեյրոսիֆիլիս չեն ստացել. 2) յերկրորդական սիֆիլիսով այն հիվանդները, վորոնց արյան Վ.Ռ. բացասական ե յեղել, իսկ հեղուկն ունեցել ե պլեոցիտոզ և սպիտ, բայց դրանցից մաքրվել ե բուժումից հետո, հետագայում մնացել են առողջ. 3) այն հիվանդները, վորոնց վողնուղեղի հեղուկը ունեցել ե դրական Վ.Ռ. և բենդոյան նույնպես դրական ռեակցիա, բայց դրանցից մաքրվել ե բուժումից հետո, մնացել են առողջ։ Իսկ այն հիվանդները, վորոնց վողնուղեղի հեղուկը վերականգնել ե դանդաղ և վոչ լրիվ կերպով, հիվանդացել են նեյրոսիֆիլիսով։

Ճիշտ ե պ. պ. և տարեսով հիվանդներին մենք չենք բժշկում, այդ հիվանդները հետանում են մեր դիտողությունից, նրանց բուժում են ներախտագետներո, բայց յեթե մենք կարող ենք վորոշել հիվանդի վողնուղեղի դրությունը և ազդել նրան, մենք պետք ե անենք այդ, վորպեսզի ոգնած լինենք ազատվելու ապագայում գալիք պ. պ.-ից և տարեսից այն հիվանդներին, վորոնց կենտրոնական ներվային

համակարգության մեջ բուն ե դրեւ սպիրոխետը։

Կիրլեն այսպես ե ասում. «Վողնուղեղի հեղուկի հետազոտությունն ունի կանխիչ նըշանակություն»։

Իհարկե, վոչ բոլոր հիվանդներին ե սպառնում ներվային սիֆիլիսը, հիվանդներ, վորոնց վողնուղեղի հեղուկը ախտաբանական փոփոխություններ ունի. բայց յեթե կա ամենաչնչին անգամ վտանգ, մենք պարտավոր ենք ձեռք առնել ամեն միջոց այդ հիվանդությունների դեմ, վորոնք (պ.պ. և տարեսը) չափազանց ծանր են ընթանում և համարյա չեն յենթարկվում սպեցիֆիկ բուժման։

Սպիրոխետը տեղ ե դրավում կենտրոնական ներվային համակարգության մեջ՝ պ. պ.-ի և տարեսի յերելվալուց շատ առաջ (այդ հիվանդությունները յերեվան են դալիս սիֆիլիսով վարակումից 10-15 տարի անց). պայքար մղելով սպիրոխետի զեմ, սիֆիլիսի յերկրորդական շրջանի ընթացքում, մենք իրոք կանխիչ պայքար ենք մղում այդ հիվանդությունների դեմ։ Յեվ մեր կանխիչ միջոցառումն ե—հակասիֆիլիսացին յեռանդուն բուժումը։

Կարգացեք՝ առօհերեն լեզվով։

Քրույլը. Վողնուղեղի հեղուկի հետազոտությունը։

Դ. Բ. Կիրլեն. Սիֆիլիսը և նրա ախտաբանության ուժկություն ուսմունքի ժամանակակից վիճակը, 1923 թ։

VIII. ՊՐՈԳՐԵՍՍԻՎ ՊԱՐԱԼԻԶԻ ՅԵՎ ՏԱԲԵՒԻ  
ԲՈՒԺՈՒՄԸ ՄԱԼԱՐԻԱՅՈՎ,

Նախորդ նամակումս գրած պրոգրեսիվ պարալիզն ու տաքեսը վերջերքս առանձնապես դրավել են սիֆիլիսագետների և ներվախտագետների ուշադրությունը։ Մեր սովորական հակասիֆիլիսային դեղերով այս հիվանդությունները բժշկելիս, ցանկալի արդյունք չեր ստացվում, դրա համար ել փնտռում եյին և փնտռում են բուժման նոր մեթոդներ։

Հոգեբուժները վաղուց եյին նկատել, վոր նման հիվանդների իսկական հիվանդությունը ժամանակալորապես լավանում ե (հիվանդությունը թեթևանում և, հիվանդների քաշը բարձրանում, տրամադրությունը լավանում), յերբ նրանք վարակվում են վորեւ տեհնդային վարակիչ հիվանդությամբ՝ տիֆով, կարմեր քամով և այլն։ Ցելնելով սրանից, մի քանի բժիշկներ սկսեցին փորձել բժշկել պ.պ.-ով

հիվանդներին պրոտեյինով, պատվաստով, տուբերկուլին սրսկելով, և ոժանդակ վոչ սպեցիֆիկ միջոցներով աշխատում եյին լավացնել իրենց հիվանդների վիճակը. պետք ե ասել, վոր յերբեմն լավ արդյունքներ եյին ստանում։

1917 թ. Վեննայի հոգեբան Վագներ Յառա-  
րեզը հրապարակեց յերեք որյա մալարիայի պատվաստումով բուժած պրոգրեսսիվ պարա-  
լիզով հիվանդների վրա կատարած դիտողու-  
թյունները. բուժման հաջողությունը այնքան իրախուսիչ եր, վոր դրանից հետո շատ բժիշկ-  
ներ սկսեցին մալարիայով բժշկել ներվային ուշ սիֆիլիսը, մանավանդ պրոգրեսսիվ պարա-  
լիզը, և ներկայումս հարասիֆիլիսի մալարիա-  
բուժման հարցը բժշկականության համարյա-  
ամենաակտուալ խնդիրներից մեկն ե: Թե Միու-  
թյան և թե արտասահմանյան շատ ու շատ բը-  
ժիշկների հաղորդումների համաձայն, նման  
բուժումը կամ բոլորովին առողջացնում ե հի-  
վանդիչ վամ, համենայն դեպս, զգալի չափով  
լավացնում։

Դատապարտված համարվող հիվանդնե-  
րը քիչ թե շատ ընդունակ են դառնում ապրելու  
մասնավոր հասարակական կյանքով, կարողա-  
նում են կատարել վորոշ պարտականություն-  
ներ, նորից ձեռք են բերում իրենց աշխատու-  
նակությունը և այլն։ Մի քանի հեղինակներ  
հիվանդի առողջացման և լավացման տո-  
կոսը 30-40 են հաշվում, ուրիշները 50-60, իսկ  
ենքը Վագներ Յառարեզը նույնիսկ 83 տոկոս։

բանից դուրս ե գալիս, վորքան շուտ ե սկսված  
 մալարիայով բուժումը, այնքան շատ յերաշ-  
 խիք կա լվակատար բուժման կամ հիվանդների  
 վիճակի կայուն ու նկատելի լավացման համար:  
 Մալարիաբուժում կիրառող հեղինակները հա-  
 մարյա անվնաս են համարում այդ մե-  
 թողը, իսկ նրա տեխնիկան բավականին հասա-  
 րակ: Անշուշտ նման բուժումը պետք ե կատա-  
 րել հատուկ հարմարություններ ունեցող բու-  
 ժական հիմնարկում և պետք ե կատարի մաս-  
 նագետը: Պրոգրեսսիվ պարալիզով հիվան-  
 դին սրսկում են մաշկի տակ կամ արյան մեջ  
 յերեքորյա մալարիայով հիվանդի արյունից  
 5 խոր. սանտիմետր. արյան մեջ ներարկելիս,  
 իբր թե մալարիայի նոպաները լինում են ավել-  
 լի ուժեղ և ավելի խիստ, իսկ մաշկի տակ մը  
 փոքր թեթև: 8-10 որ տեղող գաղտնի շրջանից  
 հետո պատվաստած հիվանդը սկսում ե դողաց-  
 նել և տաքացնել. մալարիայի նոպաների ըսկ-  
 սելուց հետո, կարելի յե, նայած դեպքին, ընդ-  
 հատել նրանց, կամ հասցնել 8-ից մինչև 12-ը:  
 Ըստհատելու համար հիվանդին տալիս են խի-  
 սին, վորը նման դեպքերում ներդործում ե  
 առանց վրիպելու: Պետք ե ասել, վոր մալարիա  
 պատվաստելու տեխնիկան ավելի ու ավելի կա-  
 տարելագործվում ե:

Հեղինակների մեծ մասն առաջարկում ե  
 զուգորդած բուժում մալարիայով և հակասի-  
 ֆիլիսային միջոցներով, բայց ուրիշները, ի

թիվս վորոց և ինքը Վագներ-Յառուբեդը, բա-  
 վական են համարում միայն մալարիա-բու-  
 ժումը:

Վողնուղեղի չորուկի բուժումը մալա-  
 րիայով այնպիսի աղդու հաջողություն չունի,  
 ինչ պարալիզի, բայց այս հանդամանքն ամե-  
 նեին չպետք ե նսեմացնի մեթոդի արժեքը.  
 տարեսր այնքան ել անհուսալի չե մեր սպեցի-  
 ֆիկ մեթոդներին ցուցաբերած դիմադրակա-  
 նության տեսակետից, մանավանդ հիվանդու-  
 թյան սկզբում: Հակասիֆիլիսային համառ  
 բուժմամբ կարենի յե ինում մորոշ հաջողու-  
 թյուն ձեռք բերել: Պ.ա.-ի վրա մալարիայի  
 թոռած ազդեցության բաղատրման համար ա-  
 ռաջառիւած են մի քանի հիպոթեզներ. կան  
 հեղինակներ, մորոնք ռազատրում են մալա-  
 րիան ռարձր ջերմությամո, ուրիշներո կար-  
 ծում են, վոր որանիզմի մեջ դոյանում են վա-  
 րակամերժ դարձնող նյութեր, իսկ մոմանք  
 մալարիանի ներդործությունը համեմատում  
 են տորոտեյինառուժման ներդործության հետ.  
 Վերջապես եան և ալ հեղինակներ, մորոնք  
 հաստատում են, թե մորոնուղեղի հեղուկի վրա  
 ազդում են այսում ինների քայլքայումից ա-  
 ռաջադած ամինաթթվուտաներո և այն...

Առայժմ ալդ հարցը մերժնականապես  
 լուծված չե: Ներեաւումս սիֆիլիսի բուժման  
 բոլոր վոչ սպեցիֆիկ մեթոդներո մատրիա-  
 բուժումը համարվում ե ամենից ներդործա-  
 կանը. քանի վոր պր. պարալիզի բուժման հա-

մար առայժմ մի ուրիշ լավ մեթոդ չկա, կարելի յե ասել, վոր մալարիա-բուժումը հանդիսանում է միակը: Գիտական միտքը շարունակեց աշխատանքն ավելի հեռուն, չի կարելի արդյո՞ք կիրառել մալարիա-բուժումը, վորպես կանխիչ մեթոդ, և բժշկել մալարիայով նրանց, ում սպառնում է պր. պարալիզը: Ում ե սպառնում — հարց ե տալիս Վագներ-Յանց-Յառաջակա և պատասխանում՝ «Հայտնի յե, վոր պ. պ.-ով բոլոր հիվանդների վողնուղեղի հեղուկը Վ. Ռ. դրական ե, հեղուկի սպիտներն ավելացած են, նա ունի պլեոցիտոզ և այլն: Այդ դրական ռեակցիան և փողնուղեղի այլ փոփոխությունները՝ սիֆիլիսի գաղտնի ուշ շրջանում կատարած սպեոիֆիկ բուժումից, դժվար են փոփոխության յենթարկում: Ահա այդ տեսակ հիվանդների մեջ հենց մենք կասկածում ենք պ. պ.-ի ապագա թեկնածուներին»:

Իհարկե, կան և բազառություններ. յերեմն նախքան պ. պ.-ով հիվանդանալը սիֆիլիսոտի վողնուղեղի հեղուկը ունենում է բացասական ռեակցիա, բայց, Վագներ-Յառաջակա կարծիքով, այդ չպետք է նետի առնել: Կիրլեն բժշկել ե նման հիվանդներին, այսինքն գաղտնի ուշ շրջանի այն սիֆիլիսոտներին, վորոնց վողնուղեղի հեղուկը դրական ռեակցիա ուներ, և բժշկել ե մալարիայով ու հակասիֆիլիսային միջոցներով (զուգորդած մեթոդով). Փոփոխման դժվար յենթակա վողնուղեղի հե-

ղուկը առողջացել եր: Այդպիսով, պետք ե ընդունել, վոր նման բուժումը մեծ մասմբ առողջացնում է սիֆիլիսոտների վողնուղեղի հեղուկը: Ասել՝ թե նման ձեվով բուժված հիվանդներն ապագայում ապահովված են պ. պ.-ից, իհարկե, դժվար ե. Դրա համար անհրաժեշտ են չատ յերկարատև դիտողություններ, բայց, Վանդներ-Յառաջակա տվյալների համաձայն, նրա բժշկած հիվանդներից առ այժմ վոչ վոք չիվանդացել ներվային ուշ սիֆիլիսով: Հիշեցեք անցյալ նամակում ս բերած Պ. Ռավոյի վիճակագրական տեղեկությունները և չեք կարող չհամաձայնվել, վոր սիֆիլիսաբանությունը, կարծես, կանչնած ե անառիկ բերդի առաջ. նա գրոհ ե տափս այդ բերդի վրա, և հաղթության կասկած չկա:

Մալարիաբուժումը կիրառում եյին նաև Յարմ սիֆիլիսի դեմ. այս գեպքում հարկավոր աղղեցությունը չտվեց. նկարագրված են ռեցիտիվներ, հիվանդության ծանր ընթացք և այլն, և հազիվ թե այժմ գտնվի մեկը, վոր բժշկի թարմ սիֆիլիսը մալարիայով: Մեր սպեցիֆիկ դեղերը լիովին ցուցաբերում են այստեղ իրենց ուժը:

Ծագում է մի չատ հետաքրքրական հարց, տաք յերկրների սիֆիլիսի (Եկղոտիկ) գեպքում պ. պ.-ի և վողնուղեղի չորուկի հազվագյուտությունը չի կարելի արդյո՞ք բացատրել նրանով, վոր այդ յերկրների բնակիչների մեծ մա-

սըն անցյալում ունեցել ե մալարիա: Ինչպես  
գիտեք, այդ յերկրներում առանձնապես տա-  
րածված ե մալարիան, և բնակիչների մեծ տո-  
կոսը տառապել ե կամ տառապում ե նրանով:  
Տվյալ դեպքում չի ներգործում արդյո՞ք ինք-  
նարուղին (բնական, չպատվաստված) մալա-  
րիան վորպես կանխիչ, ինչպես և պատվաստա-  
ծը: Արդյո՞ք դրանով չի բացատրվում եկզո-  
սիկ և յեվրոպական սիֆիլիսի, քաղաքի (քս-  
ղաքներում սովորաբար արմատախիլ ե արված  
մալարիան) և գյուղի սիֆիլիսի տարբերու-  
թյունը կամ քաղաքակրթված և նախնական  
դրության մեջ գտնվող անկուլտուրական ազ-  
դությունների սիֆիլիսի տարբերությունը:

Շատ հետաքրքիր հարցեր են— չե՞: Նրանք  
գրավել են սիֆիլիսաղետների ուշն ու միտքը՝  
տարաբախտաբար առ այժմ մենք հնարավորու-  
թյուն չունենք վորոշ պատասխան տալ այդ  
հարցերին:

Գրականության մեջ կան նկարագրված դեպ-  
քեր, յերբ մալարիայով հիվանդացած սիֆիլի-  
սուները հետազում հիվանդացել են պ. պ.  
ով և տարեսով. գրականության մեջ քիչ չե՞ն  
նաև այն դեպքերը, յերբ պ. պ.-ով և տարեսով  
հիվանդացել են խիստ տարածված մալարիա  
ունեցող տաք յերկրների բնակիչները: Այստեղ  
անհրաժեշտ են մանրամասն և յերկարատեղ  
դիտողություններ: Պետք ե հուսալ, վոր մո-  
տիկ ապագան կլուծի սիֆիլիսաբանության

այդ, առ այժմ անմեկնելի մնացած, հարցերը:  
Կարդացեք՝ ուս սերեն լեզվով.  
Ի սատուրացած և նոզասը. Սւֆրիսի բուժումը մաւարկայով  
Պրոֆ. ե. Գ. Հայսեփյան. Սրվելս և սաւաւելատ

## IX. ՍԻՖԻԼԻՍԻ ԲՈՒԺԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ Թանկագին ընկեր

Դուք դեռ շատ անդամ կլսեք ու կկարդաք  
այն, ինչ գրել եք ինձ այսոր: Առանց աղբյու-  
րը հեշտակելու գրում եք, վոր կարդացցել եք  
Վեննայի ականավոր սիֆիլիսաբան Ֆինդերի  
արտահայտած կարծիքի մասին՝ թե սի-  
ֆիլիսը մեր սպեցիֆիկ դեղերով բու-  
ժելի չե. միենույն ժամանակ հարցեր  
եք տալիս, ինչպես համաձայնեցնել այդ  
կարծիքը ձեր դասավանդության ժամանակ  
ասած խոսքերին — սիֆիլիսը բուժելի յե:  
Յես չեմ կասկածում, վոր դուք յերբեքիցե  
կկարդաք ու կիմանաք, վոր սիֆիլիֆների  
բժշկելուց շատ ժամանակ անց, նրանց տե-  
ղում զանազան հեղինակներ (Նեյման, Ռևնա,  
Պազինի, Արնինդ, Կլեյն, Զոֆման և ուրիշները)  
դտել են սպիրոխետներ. կկարդաք ու կիմանաք,  
վոր սրսկելով նման սպերոխետների ներսը-  
ռանքը կապիկներին, ստացել են դրական ար-  
դյունք. կկարդաք ու կիմանաք, վոր Պազինին,  
Զոֆմանը և ուրիշները նշագեղձերի և լորձա-  
թաղանթի մեջ սպիրոխետներ են գտել այստեղ  
յեղած պլակ մուկյոզի բժշկելուց շատ

ամիսներ հետո, մի հանդամանք, վոր առիթ տվեց Պաղինի-ին հարց հարուցել սիֆիլիսուների թքի վարակիչ հատկության մասին:

Ավելին կամեմ — դուք հետո կիմանաք (յերբ կկարդաք), վոր կլինիկական և շիճուկաբանական տեսակետից լիակատար առողջացած հիվանդի մաշկի մի կտորը, վեցրած յոթ տարի առաջ յեղած շանկրի տեղից, ճագարին պատվաստելուց հետո առաջացրել ե իսկական սիֆիլիմա, այսինքն ցույց ե տվել, վոր պատվաստած մաշկի մեջ յեղել ե կենդանի վարակ (Արց, Կերլ). Դուք կիմանաք, վոր, Պինկուսի կարծիքով, սիֆիլիսով կրկնավարակումը (ռենֆեկցիա) դեռևս ապացույց չե, վոր սիլֆիլիսը բուժվելե. վոր Շաերնն ու Յաղասոնը նոր վարակման դեպքեր են տեսել յերրորդական յերեսյթների բուժումից շատ քիչ անց. այդ բանը տեսել են նույնիսկ առաջնակի սիֆիլիսի խոցերի ներկայությամբ: Դուք կիմանաք, վոր նկարագրված են «ժառանգական» սիֆիլիսուների այնպիսի դեպքեր, յերբ գումաների հետ միասին յեղել են նաև թարմ սիֆիլիսի յերեկույթներ, ինչպես և կիմանաք, վոր արյան բացասական վ. Ռ. ունեցող սիֆիլիսուն մաշկի առողջ, յերբեք չհիվանդացած կտորների մեջ անզամ գտել են լիովին վարակիչ սպիրոլիսետներ և վերջապես, վոր Վիլլի Պիկը արտահայտվել ե թե նա չդիտե մեկ մեթոդ, վորով յերբեկցե կարելի լիներ վորոշել, բժշկվել ե արդյոք սիֆիլիսը: Յես կարող եմ շատ

յերկար չարունակել գրել ձեզ սիֆիլիսի բուժելության դեմ արտահայտված «Հերքումներ»:

Հենց այս քանի որը ստացա «Սով. Վեստն. Դերմատ.» հանդիսի ուշացած համարը, վորտեղ Մոսկվայի վեն. և մաշկաբ. ընկերության տըպած հաշվետվության մեջ բերած են Միության նշանավոր սիֆիլիսաբան պրոֆ. Գ. Ի. Մեշչերսկու խոսքերը: Բայց դրա մասին հետո: Իսկ այժմ թույլ տվեք ինձ խոսել ձեզ հետ պարզորեն, առանց թվերի առանց հատվածներ բերելու, առանց հիշատակելու հեղինակների անունները: Մի՞թե մենք ամեն որ, համարյա ամեն ժամ չենք տեսնում սիֆիլիսով նախկին մեր հիվանդներին. մի՞թե մենք չենք տեսնում, վոր նրանք խողոտումներ չունեն, Վ. Ռ. դրական չե, վոչ մի բանից չեն դանդատվում, վոչ ընչով չեն տառապում: Միթե՞ մենք չենք տեսնում, վոր բուժումից յերկար ժամանակ անց, նրանք ամուսնացել են և ունեն յերեխաներ: Ի՞նչ ենք մենք նկատում: Այն, վոր լավ, նույնիսկ բավարար բուժվածների մեծ մասի մեջ մենք վոչ մի տվյալ չենք գտնում կասկածելու նրանց առողջացումը. առողջ ե ինքը, կինը, առողջ են յերիսաները: Յեվ առողջ են, իհարկ ե, վոչ թե արտաքուստ, այլ ժամանակակից մեր բոլոր ավյալների հիման վրա: Շատ տարիներ, յերբեմն ամբողջ կյանքն ե անցնում այդպիսի բարորության մեջ:

Բայց, իհարկե, վոչ բոլորն են այդպես անց

կացնում, դրա համար ել յես ասում եմ «մեծ մասի մեջ»: Մենք տեսնում ենք և վատ բուժվածներին: Մենք այստեղ տեսնում ենք և ոեցիդիներ, և կնոջ հիվանդություն, և փիծումներ, և թույլ ու նվազ սերունդ: Յես չեմ կասկածում, վոր գուշ ևս յերեար, տանսւակ տարիներ ձեր բժշկած հիվանդների մոտ հսկողություն ունաւուց հետո, կասեք միենույնը: Նըսման պայմաններում կարող ենք արդ տօք չասել, վոր սիֆիիսուրը գործնականում առողջացել ե: Կենդաղային, սովորական խմասով նա առողջացել ե. և առողջացել ե բուժման մեր մեթոդներից, մեր դեղերից, մեր նախակած կանոններից և այլն: Նայեռք, թե վորքան պակասել են գումազող տեսակները, վորքան քիչ են ռեցիդիվները: Յես շատ լավ եմ հիշում նախասարկարսանյան ժամանակը, հիշում եմ նրա սկիզբոր և համեմատում ինչ այժմ ունենք: Ծնորհիվ վեներաբանների բանակի կատարած սանուուս աշխատանքների, Հոկտեմբերից հետո մասսաներն, տնկառակած, սկսել են լավ բժշկվել, և մենք նկատում ենք ծանր ուշ տեսակների խիստ նվազում, «կենդաղային», հաշմանդամ դարձնող տեսակների պակասում և, համեմատելով այս բոլորը անդյալի հետ, յես չեմ կառող չուտենել բուժման հաջողությունու: Իհարեկ, սիֆիիսի բուժումը դեռ իր վերջին խոսքը չի ասել: Գիտությունը միշտ առաջ է ընթանում, հայտնագործվում են ավելի լավ մեթոդներ,

բայց հիմա յել չենք կարող չընդունել, վոր արդի մեր մեթոդներով ևս հաջող ենք բուժում և առողջացնում սիֆիլիսուտին: Անշուշտ հիվանդների աննշան մասը չի յենթարկվում մեր ներգործաւթյան, և նրանց թիվը, պետք ե ասել, որեցոր ավելի ու ավելի կրծատվում է: Դրանից յեզրակացնել, վոր սիֆիլիսը անբուժելի յե, իհարեկ, չի կարելի:

Մոսկվայի Վեն. և մաշկ. ընկ. վերը նշած նիստին պրոֆ. Ա. Պ. Յորդանի «Սիֆիլիսի աբորտիվ բուժում» գեկուոման առթիվ առած յեղբափակման խոսքի մեջ պրոֆ. Գ. Ի. Մեշչերսկին բավականին լրիվ և հեղինակավոր կերպով արտահայտեց այն ամենը, ինչի մասին մեղնից շատերը մտածում են: Քանի վոր այդ ձեր տված հարցի պատասխանն ե, ապա ուրեմն թույլ տվեք բերել նրա խոսքերը բառ առ բառ:

«Արդի սիֆիլիսաբանների և ախտաբանների ուղեղի մեջ ի՞նչպիսի բեկում ե ստացել սիֆիլիսի աբորտիվ բուժման գաղափարը: Մի կողմից Ե. Հոֆմանի նման լավատեսները պնդում են 100 տոկոսով հաջողության մասին, մյուս կողմից Գուտերոյի նման հոռետեսներն առաջարկում են 10-12 տարի հսկողություն ունենալ հիվանդների վրա, կատարել նրա վիճակի կրկընակի ստուգումներ, իսկ չափաղանց հոռետես Ե. Ֆինդերը—փրկության խարիսխը գտնում է վոչ թե սպեցիֆիկ, այլ վոչ սպեցիֆիկ և գրւխավորապես մալարիաբուժման մեջ: Ախտաբանականատում արան Ռուրտինը դիահերձման

ժամանակ՝ կլինիկական տեսակետից առողջացած սիֆիլիսուների լյարդի հյուսվածքում, մայր զարկերակի պատի մեջ գտել և սպեցիֆիկ ներսփուանք, լի տրիպոնեմներով. յելնելով սրանից, նա յեղբակացնում ե, վոր սիֆիլիսն անբուժելի յե, իսկ առողջացումը հեղնորեն վորոշում, վորակես հավասարակշռություն, վարակի ներխուժած ուժերի և որդանիզմի պաշտպանողական ուժերի մեջ, մի հալվասարակշռություն, վոր անշուշտ կարող ե ամեն ըովե խախտըվել մի շարք կենսարանական գործոններից՝ վարակումից, տրավմիդ, հողեկան ուժեղ ցընցումիդ, կյանքի պայմանների փոխվելուց և այլն: Սրանից ինչ՝ հետեւում: Այն, վոր սիֆիլիսը բուժելի յե վոչ բոլոր դեպքերում, ելուրիշ վոչինչ: Ուորտինը բույր առողջացած սիֆիլիսուներին չի հերձե, Պազինին և ուորիշները տրեպոնեմներ գտել են մի քանի շանկը ների մնացորդներում. հետադարձ շանրոսիֆիլիսուներից շատ քիչ անճանց ե վիճակվում.

Այս բույրը մերաբերում ե փոքրամասնությանը և վոչ մեծամասնությանը: Խինինը, հրաշալի միջոց և մալարիայով հիվանդների մեծ մասի համար, փոքրամասնության համար՝ թույլ: Բերինգի գտած միջոցը հիանալի միջոց և դիֆտերիայով հիվանդների մեծամասնության համար, բայց փոքրամասնության համար անբավարար. արսենորենդուլլ սիֆիլիսուներից մեծ մասին և փրկում և չի ողնում փոքր մասին: Իսկ մենք պետք ե ոքենք ընդու-

նենք այն, ինչ մեծամասնությանն ե վերաբերում, և բացառություն այն, ինչ փոքրամասնությանը և վոչ թե հակառակը: Ամեն ինչ, նույնը և բժշկականությունը, անշեղ կերպով առաջադիմում ե. լաբորատորիաները աշխատանք են թափում նոր սպեցիֆիկ դեղերի՝ տելլուրի, վանադիյումի և այլոց վրա. սանիտարա-առողջապահական տեղեկություններն ավելի, ու ավելի խորն են թափանցում աղղամակության մեջ: Յեկ յեթե բժշկականությունը այնպես արագ չի հառաջադիմում, ինչպես այդ մենք ենք ցանկանում, համենայն դեպս մենք գեպի ապագան կարող ենք կայտակերպով դիմել: Հակասիֆիլիսային շտեմարանը լցվում ե, հետազոտության մեթոդներն ավելի վորոշ են դառնում. աղղաբնակությունը կհասկանա, վոր առողջությունը կախված ե վոչ միայն միջերակացին ներկարկումների թվից, այլև առողջապահության կանոնների պահպանումից, բարիս լայն մտքով, և այն ժամանակ այն լուրջ հարվածը, վոր ստացել ե սիֆիլիսը նույնիսկ հիմա, կդառնա նրա համար մահացու»:

## X. ԻՆՉՊԵՍ ԵՆ ԲԺՇԿՎՈՒՄ ՍԻՖԻԼԻՍՈՒՆԵՐԸ Թանկագին ընկեր

Իմ նախընթաց նամակներից ձեղ համար պարզ յեղալ, վոր չափազանց կարեռը նշանակություն ունի, թե ինչպես են բժշկվում սիֆիլիսայով հիվանդացածները: Այդ կարեվոր ե հենց իրան հիվանդի համար, վորը խելացի

ռարած բուժումով պաշտպանում և իրեն սիր Փիլիսի գալիք ծանր արտահայտություններց այդ կարևոր ե ըրջապատողների համար, զորովճառակ վատ բուժված հիվանդը վորով շրջանում հանդիսանում է հիվանդության տարրածող դա նույնակես կարևոր և հիվանդի սերնդի համար — վորովճառակ վիժումները, վաղաժամ ծնունդը, շուտ մեռնող յերեխաները, վերջապես հիվանդ, նվազու պակասավոր յերեխաները — սովորական յերեխույթ են սիր Փիլիսով հիվանդ ծնողների համար: Յեթե ներկայումս սիֆիլիսի բուժման շատ «սխեմաներ» կան, վերջի վերջո նրանք բոլորն ել հիմնականում միանման են: Մեր գիտության արդի տվյալների հիման վրա այդ հիմնականը կարելի յեւ հետեւյալ կանոններով ձեվակերպել: 1) Վորքան շուտ սկսել բուժումը, այնքան շատ յերաշխիք կա առողջացման համար. 2) սիֆիլիսի բուժումը պետք է լինի յերկարատեւ և յեւսանդուն. 3) վերջնական առողջացման հավաստիության համար անհրաժեշտ ե՝ թե արյան և թե վողնուղեղի հեղուկի շիճուկաբանական կայուն բացասական ռեակցիա ստանալուց հետո ևս մի առժամանակ բուժել «ապագայի համար». 4) այս բոլորից հետո անհրաժեշտ ե վորոշ ժամանակ հիվանդին պահել հակողության տակ:

Այսոր յես նպատակ ունեմ քննարկել սիր Փիլիսի բուժման մեթոդները, բայց, կարծում եմ, ձեզ համար պարզ ե, վոր վաղ բուժու

կնշանակի բուժել կոչտ շանկը միջոցին, շինուկ-բացասական փուլում, ծայրահեղ դեպքում — շիճուկ-դրական փուլում, բայց առանց յերկրորդական շրջանին հատուկ արտահայտությունների, յերբ կա յերաշխիք վիժեցնել սիֆիլիսը: Յերկարատեւ ու յեռանդուն բուժում նշանակում ե բուժել զուղողորդած կուրսերով միքանի տարի տեղողությամբ՝ սնդիկով, բիսմուտով, սալվարսանով, յոդով և այլն:

Թեև հիվանդի առողջացման համար այդ կուրսերի միակերպ թիվը չի կարելի վորոշել, ինչպես քանիցս դրել եմ ձեզ, (մենք վոչ թե սիֆիլիսը, այլ սիֆիլիսով հիվանդին ենք բժշկում), բայց և այնպես յուրաքանչյուր հիվանդի համար, առանձին վերցրած, գոյություն ունի վորոշ սահման, վորից պակաս մենք չենք կարող պատկերացնել նրա առողջացումը: Յեկ պետք ե ասել, վոր ներկայումս մեր պահանջներում այդ «նորման» վոչ թե պակասում ե, այլ բարձրանում, վորովհետեւ մենք չենք կարող բավարար համարել սնդիկի ոծանակ քսելու կամ սնդիկի դեղհատներ խմելու ձեռվ տարած 3-4 կուրս բուժումը: Մենք այժմ պնդում ենք խառ և ուժեղ բուժում: Պրոֆ. Պ. Վ. Նիկոլյանին ասում ե, վոր մինչեւ սիֆիլիսի թե կլինիկական և թե շիճուկաբանական բոլոր յերեվույթների անհետանալը սարած յեռանդուն և պարբերաբար կուրսերից հետո, անհրաժեշտ ե ելի 4-5 կուրս կատարել, վորից հետո միայն պետք ե դադարեցնել:

բուժումը և առաջարկել հիվանդին մնալ յերկու տարի բժշկի սիստեմատիկ հսկողության տակ: «Արձակելով հիվանդին — ասում ե պրոֆ. Պ. Վ. Նիկոյակին — մենք իրավունք չունենք ասելու, վոր չատ ծանրակշիռ տվյալներ ունենք պնդելու, թե հիվանդն ապահովված է հիվանդության վերադարձից, արշապատողներին վարակելու հնարավորությունից»: Տեսնում եք, թե վորքան լուրջ մոտեցում ենք ցուցաբերում սիփիլիսոսի առողջացման հարցին, վորքան խիստ են մեր պահանջները: Կարելի յերրովին հաստատված համարել (բացառությամբ սիփիլիսի վիֆեցման դեպքերից, յերբ, ինչպես գրել եմ ձեզ, մի քանի հեղինակներ բավարար են համարում սպեցիֆիկ բուժման 1—2 կուբում), վոր սիփիլիսը կարելի յերբ բժշկել միայն բազմապատիկ և յեռանդուն տարած կուրսերով, այն ել մի քանի տարվա ընթացքում, և մեզ համար կասկածից դուրս ե, վոր սիփիլիսի ուշ ու ծանր պրոցեսները (հիվանդ սերունդ, յերրորդական յերեվույթներ և այլն) կախում ունեն հիվանդի նախընթաց բուժումից: Մենք նման պահանջներ ենք անում, ապա տեսնենք, թե ինչպես են բժշկվում սիփիլիսով հիվանդները: Համապատասխանում ե արդյո՞ք նրանց բուժումը մեր պահանջներին:

Սրանից չորս տարի առաջ ձեռքիս տակ ունեյի սիփիլիսով հիվանդների յերեք հազար պատմության թերթ. դրանք բժշկվել են ուժտարկա ընթացքում 1920—1928 թ: Այս 3000

հիվանդներից 1560 (52 տոկոս) արակ. սեռի յերև և 1440 (48 տոկ.) իգական. յերթելիք հաճախողների տոկոսը՝ 76,5, գիշերովթյաներինը՝ 23,5: Սլքիլիսի տեսակների պատկերը.

### ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ

Մ I	6,0	տոկոս
Մ II (թարմ և ռեցիդիվ)	49	»
Մ III (գաղտնի)	21,4	»
Մ III (ակտիվ և գաղտնի)	17,7	»
Մ բնածին	2,3	»

### Կ Ա Ն Ա Ն Ց

Մ I	1	տոկոս
Մ II (թարմ և ռեցիդիվ)	45	»
Մ III գաղտնի	15	»
Մ III (ակտիվ և գաղտնի)	26	»
Մ բնածին	13	»

Յերթելիք հիվանդների մեջ քաղաքացիները կազմում եյին համարյա կեսը, իսկ գիշերովթյա հիվանդները բոլորն ել գյուղացիներ եյին:

Հիվանդության պատմության թերթերի վերլուծման ժամանակ յես նպատակ եյի դրեւ պատասխան ստանալ հետեւյալ հարցերին.

1. վորքան հիվանդներ վոչ մի կուրս մինչև այդ չեն ընդունել.

2. վորքան հիվանդներ ունեցել են բուժման մեկ, յերկու, յերեք և այլն կուրսեր.

3. վորքան հիվանդներ բժշկվել են սիփի-

Ամսի արտահայտված տեսակի դեպքում և վորքանը գաղտնի տեսակի:

Վերլուծելիս, նկատի յե առնված ուրիշ քաղաքում, ուրիշ բուժհիմնարկում յեղած բուժման հիշատակումները և այլն... առհասարակ ութ տարվա ընթացքում վորեւե տեղ կատարած սպեցիֆիկ բուժման մասին տեղեկությունները:

Դրածս հարցերի պատասխանները չափանց անմխիթարական եյին:

Ահա նրանք.

Հիվանդների հսկայական գանդվածը — 1029 անձ (33 տոկ.), ընդհանուր թվի մեկ յերրորդը, վոչ մի կուրս չի ընդունել. սրանց թըզվում կային սիֆիլիսի թե ակտիվ և թե դաղտնի տեսակներ: Նրանք բոլորն ել կամ վոչ մի կուրս չեն ընդունել, կամ ստացել են մեկ միջյերակային ներարկում, 1—2 միջմկանային սրսկում և անհետացել: Հիվանդների մեծ մասը 1341 անձ (43 տոկոս) միայն մեկ կուրս և ընդունել: Յերկու լրիվ կուրսը ընդունել են հիվանդների 12 տոկոսը: 3, 4, 5, և այլն կուրսերի թիվը գնալով ավելի ու ավելի իջնում ե:

Ընդունել են	3 կորս	— 4,7 տոկոս
4	»	— 2,7 »
5	»	— 1,5 »
6	»	— 1 »

Ութ կուրսից ավել ընդունել են յեղակի անհատներ — 3000-ից միայն 12-ը: Այսուհետեւ պարզվեց, վոր հիվանդների ընդհանուր

թվի միայն 10 տոկոսն է բժշկվել գտղոնի տեսակի դեպքում, իսկ ամբողջ մասան բժշկվում և միմիայն սիֆիլիսի արտահայտված դեպքում:

Այդ են ասում իմ տվյալները:

Ավելի մխիթարական չեն կենինդրադիպոֆ. Երլիսի տեղեկությունները: Հիվանդության պատմության 10.000 թերթերի քընությունները տվյալ հետևյալ արդյունքը.

Կանոնավոր և բժշկվուա 1 տոկոս

Ըսդունել են ակ կուբ 17 »

Բժշկվու են ակ կուպ 21 »

Բոլորը ին չեն բժշկվու 61 »

Սիֆիլիսոտնը անբավարար բուժումը հաստատում են նաև պրոֆ. Պ. Յ. Յորդանի, բժ. իժեվակու և Բորտնյանի տվյալները:

Ֆրանսիական հեղինակներ ժանսելմը և Բուրնիյերն ասում են, վոր կանոնավոր են բըշչկվում սիֆիլիսոտների միայն 32,12 տոկ., իսկ Լորտատ Յակոբը և Ռոբերտին ասում են, վոր կան 54 տոկ. չբուժված կամ անբավարար բժշկված սիֆիլիսոտներ, վորոնք տարածում են սիֆիլիսը առողջ տղղաբնակության մեջ: Մոտավորապես նույն բանն են հաստատում և մի շարք այլ հեղինակների տվյալները:

Հաջող բուժման համար ամենաթանկագին շղանում, առաջնակի սիֆիլիսի դեպքում շատ քչերն են բժշկվում, 6-ից մինչև 25 տոկոսը (իմ և ուրիշ հեղինակների տեղեկությունների համաձայն):

Այս բոլորից գուշ տեսնում եք, վոր սի-  
ֆիլիսոտների հսկայական զանդվածը բժշկվում  
և ակնհայտնի անբավարար, և այս հանգա-  
մանքը չի կարող ձեզ չանհանգստացնել ու չը-  
հուզել:

Մենք չենք կարող անտարբեր նայել, թե  
ինչպես բուժման 1000 կարոտից բժշկվում են  
միայն միավորները: Ել ինչո՞ւ համար են մեր  
նվաճումները, յեթե մասսաներն այն չեն ոգ-  
ասադործում:

Ակներև ե, կան ինչ վոր պատճառներ, վոր,  
չնայած հակասի Փիլիսոային միջոցների մեր  
շոեմարանին, սիՓիլիսը բուժելու և առողջաց-  
նելու մեր ունակության, ժամանակին «չառ  
շուտ» ախտորոշման, վերջացման, գուցե և  
կանխման մեր ունակության, մեր հիվանդնե-  
րըն այդպես վատ են բուժում իրենց ծանր ցա-  
վը: Վորո՞նք են սիՓիլիսի նման չափազանց  
անբավարար բուժման պատճառները:

Այդ հարցին թույլ տվեք պատասխանել հե-  
տեւյալ անդամ:

Կարգացեք՝ ոռուերեն լեզվով.

Վ. Ռուների անվան Մաշկավեներաբանական խմբակի  
աշխատությունները. 1929 թ.

## XI. ՍԻՖԻԼԻՍԻ ԱՆԲԱՎԱՐԱՐ ԲՈՒԺՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

ՍիՓիլիսի անբավարար և վոչ բավականա-  
չափ բուժման պատճառները բազմաթիվ են, և,  
հավանական ե, տարբեր կլինեն յուրաքանչյուր

յերկրի, յուրաքանչյուր բնակավայրի, մինչև  
անդամ գուցե և ազգաբնակության յուրաքան-  
չյուր առանձին խմբերի համար: Յուրաքան-  
չյուր գեպքում պետք ե դրսեվորել այլ ոլատ-  
ճառները և արմատախիլ անել: Ստորեվ յես  
կբերեմ նրանցից, իմ կարծիքով, ամենից հա-  
ճախ պատահողները:

Նախ և առաջ հիվանդների հսկայական  
զանդվածն իր հիվանդությանը թեթևամիտ  
կերպով և վերաբերվում: Մի հիվանդություն,  
վոր կարող է յերբեմն տարիների ընթացքում  
անցնել առանց արտահայտությունների, ա-  
ռանց ծանր, տանջալից զգայնությունների,  
հիվանդին յերկյուղ ու տաղնապ չի ներշնչում:  
Սկզբնական արտահայտություններն ել մեծ  
մասամբ վոչ մի անհանգստություն չեն պատ-  
ճառում՝ շանկը, յերկրորդական յերեւյթ-  
ները (վարդացանը, պապուլաները), վորպես  
կանոն, ցավ չեն պատճառում, քոր չեն գալիս  
և այս բոլորն անգիտակից հիվանդի համար  
ավելի շուտ «անախորժ մի բան ե», քան վորեն  
լուրջ վատանդ առողջության համար: Դրանով  
պետք ե բացատրել, թեթևվամիտ վերաբեր-  
մունքը գեպի սիՓիլիսը և բուժումը գաղաքեց-  
նելը, արտահայտությունների անհետանալուց  
հետո: Այնուհետև մենք չպետք ե մոռանանք,  
վոր սիՓիլիսի բուժումը, համենայն դեպս, հի-

գանդի համար «դժվար» գործ ե: Բժշկվել տարիներով, տանեւ ներարկումների ու սրսկումների այս կամ այնչափ, թեկուղ և չնչին, ցավերը, կորցնել ահագին ժամանակ բժշկի ու բուժհիմնարկի այցելության համար և վերջապես ապրել զգոնությամբ և յերկյուղով՝ մի գուցե չվարակել մեկ ուրիշ և այլն-շատ քչերն այնքան կամք ու համբերություն կարող են ունենալ, վոր տանեն այս բոլորը մինչեւ վերջը,

Յես դեռ չեմ խոսում վճարումի բուժման մասին, յերբ բոլոր մերը բերածին ավելանում են նաև դրամական հոռակոր: Իհարկե, առ բանը մեզանում չկա, ամեն մի հիմանդ ունի բոլոր հնարավորություններն իր համար ամենահարմար ձևով բոլորովին առանց վառձարության բժշկվել, ուայց կապիտալիստական յերկրներում սիֆիլիսի բուժման ինչաղի գործը քիչ չի արգելակում վարձատրությունը: Բայց ամենաուխափորն, իմ կարծիքով, այն ե, վոր հիմանուների ահագին մեծամասնությունը տեղեկություն ունի սիֆիլիսի և առհասարակ վեներական հիմանդությունների մասին: Դուք մի զարմացեք: Յես դիտեմ, վոր դուք հարցուրավոր դասախոսություններ եք կարդագետ, գործարաններում և ֆարբիկներում, անվերջ զրույց ներ եք ունեցել, շատ մեծ սան-լուս աշխատանք եք կատարել և, յեթե հայվենք, վորքան նման աշխատանք են կատարել վեներաբանները Հոկտեմբերից հետո 16 տարվա ընթացքում, կստանանք վիթխարի գործ: Յեվ մենք չը-

պետք ե գանդատվենք— վորոշ արդյունք ստացել ենք. սիֆիլիսը մեղանում պակասում է և մասսաները բժշկվում են զդալի չափով լավ, քան առաջ: Բայց միթե՝ մենք պետք ե բավականանք դրանով և ասենք՝ «մենք ամեն ինչ արել ենք». իհարկե վոչ:

Յես նույնպես դիտեմ, վոր յերեմյան դուք անհարմար եք զգում ձեզ, յսարակում յերություննալիս: Ինչ՝ ասել, ինչի՞ մասին խոսել: Միթե՝ հարկավոր և տասերորդ, հարյուրերորդ անդամ կրկնել, վոր սիֆիլիսը վարակիչ հիվանդություն ե, առաջ և զարիս տրեպոնեմայից, ունի վորոշ բնթագք, յերեմյանդամ և դարձնում հիվանդներին, յերեմյան խելագարության պատճառ դառնում, տալիս ե հիմանդ սերունդ... Զե՞ մոր այս բոլորի մասին ասած ու խոսած ե: Ամենքն ել դիտեն այս բոլորը: Արժե արդյոք նորիզ ասել այն, ինչ յուրաքանչյուրին բավ հայտնի յեւ... Այս՛ արժե: Արժե, վորովհետեւ այդ լավ հայտնի յի ձեզ և վոչ ձեր յսարանի բոլոր ունկնուրներից յուրաքանչյուրին, յեթե հայտնի յի մինչև անգամ շատերին, կարող ե մեկն ու մեկն հայտնի ըլինել, միթե՝ դուք պարտավոր չեք խոսելու: Զանազանություն մտցրեք ձեր դասախոսությունների մեջ, հետաքրքիր նյութ վեռդրեք և այդ Փոնի մոա նորից նկարեցեք սիֆիլիսի պատկերո: Մի հոգներ անվերջ ուսուցանեաց: Այդ ե մեր նպատակը և, առանց դրան, սիֆիլիսից փրկություն չկա:

Համակերպվեցեք ձեր ունկնդիրներին։ Պատանիներից, մեր յերիտասարդությունից բաղկացած ունկնդիրներին դասախոսեցեք սեռական հարցի մասին, դաստիարակեցեք սեռական տեսակետից, խոսեք սեռական ժուժեկաբության, սեռական ուժի փոխակերպման, մեր անծիլած ժառանդականության—պոռնըկության մասին և այլն։

Պատմեցեք, թե վորքան վտանգավոր ե սիսիիսվ վարակվելը, վորքան յերկար ե տեղում նրա բուժումը, վորքան կարեռը ե նրանից խուսափելը։ Հայատ ներշնչեցեք դեպի ձեզ, աշխատեցեք, վոր նրանք վերաբերվեն ձեզ իբրեւ իրենց ընկերոջը, մերձավորին, վոր միշտ դիմեն ձեզ այս Հարցերում խորհրդի ե ոգնության համար։ Իհարկե, այս բոլորը ձեզ հայտնի յե, և յես քաջ դիտեմ, վոր դուք այդ աշխատանքը չափաղանց հաջող կերպով կատարում եք. յես հավատացած եմ, վոր դուք առողջներին մի բան եք ասում, իսկ հիվանդներին ուրիշ հիարկե, այդպես ել հարկավոր ե։ Առողջների հետ առավելապես նախադուշության մասին պետք ե խոսեք, իսկ հիվանդներին խորհուրդ պետք ե տաք, ինչպես պահել իւրեն և ինչպես բժշկվել։ Բայց և այնպես այս բոլորը շատ քիչ ե։

Այս աշխատանքը կատարելու համար յես ձեղ մի խորհուրդ կտամ, վորը յերիտասարդ բժիշկներդ հաճախ աչքաթող եք անում. դա այն ե, ինչ մենք անվանում ենք հիվանդի «ան-

հատական մշակում»։ Այս «մշակումը» հաճախ մենք չենք անում կամ անում ենք չափաղանց թույլ, մակերեսորեն, յենթադրելով, վոր բավական ե մասսայական կատարած աշխատանքը, վորը միշտ կարելի յե հաշվի տակ առնել։

Այդ աշխատանքին յես մեծ նշանակություն եմ տալիս, և, յեթե հիշում եք, միշտ ել հրավիրել եմ սրա վրա ձեր ուշադրությունը։ Սիֆիլիսով հիվանդը համարյա ամեն որ ե այցելում բժշկին և այցելում ե ամիսների ընթացքում, բժիշկը հնարավորություն ունի լավ ուսումնասիրել նրան, ուսումնասիրել թե նրա հիվանդությունը, և թե հենց նրան. բժիշկը հնարավորություն ունի աստիճանաբար և որեցոր բացատրել հիվանդին, թե ինչով ե նա հիվանդ, ինչպես ե ընթանում նրա հիվանդությունը, ինչ պետք ե նա անի ապագայում և այն և այլն... Բժիշկը պետք ե պատմի նրան վոչ թե ընդհանրապես սիֆիլիսի մասին, ինչպես մասսայական դասախոսությունների և զրույցների ժամանակ, այլ հիվանդի սիֆիլիսի մասին։ Վերջի վերջո դրանից հիվանդն ավելի շատ ե զգացվում, քան սիֆիլիսի մասին ընդհանրապես տարած խոսակցություններից՝ ի՞նչ արած։ Դրա համար բավական ե հիվանդանոցում, ինչպես և դիսպանսերներում. և այլն, որական 5-10 ըոպե նվիրել հիվանդին, և դուք կհամոզվեք, թե վորքան լավ արդյունքներ կստանաք։

Այսուղ շատ բան ե կախված ձեր խոհեմու-

թյունից և նրանից, թե ինչպիսի մոտեցում  
 կունենաք դեպի հիվանդը։ Զի հարկավոր ա-  
 մենքի հետ ել մի ձևով խոսել։ Դուք գիտեք  
 նրանց, ձեր հիվանդներին, և կտեսնեք, վոր  
 նրանց մեջ կան այսպիսիները, վորոնք իրենց  
 առողջությանը վերաբերվում են թեթևամտո-  
 րեն և անտարբեր, նրանք թեթեվուլիկներ են.  
 այստեղ անհրաժեշտ ե ձեր ծանրակշիռ խոս-  
 քը, վոր ապագայում կարող են լինել ծանր  
 հետեւանքներ, այստեղ գուցե և տեղին ե,  
 իհարկե, առանց հիվանդին վախեցնելու, նկա-  
 րագրել սիֆիլիսի մռայլ տեսակները, վորպես-  
 զի գիտակցություն ներշնչվի հիվանդին, վոր  
 անհրաժեշտ ե կանոնավոր կերպով բժշկվել։  
 Յերբ տեսնում եք, հիվանդը սաստիկ ազդ-  
 ված ե իր դժբախտությունից, ընկճված իր  
 հիվանդությունից, քաջալերեցեք նրան, ցույց  
 տվեք, վոր նրա վատ տրամադրության համար  
 բոլորովին հիմք չկա, յեթե նա ապագայում ի-  
 րեն լավ պահի. որինակներով ապացուցեցեք  
 սիֆիլիսի բուժելիությունը. նրա կյանքի ծանր  
 վերապրումների պահին յեղեք նրա բարեկա-  
 մը, բացատրեք նրա պարտավորությունները  
 հանդեպ յերկրի, վորպես մի աշխատավորի, և  
 հավատացնում եմ ձեղ՝ ձեր աշխատանքները  
 դուր չեն անցնի։ Յեթե դուք նման մոտեցում  
 ունենաք, հիվանդները կանոնավոր կրթշկվեն  
 և կատարեն ձեր պատվերները։ Լուրջ ուշա-  
 դրություն դարձրեք և ուսումնասիրեք նը-  
 րանց կենցաղի և աշխատանքի պայմանները։

Գիտակից հիվանդներին ճնշում են մերձավոր-  
 ների զզվանք զբացն ու արհամարհական վերա-  
 բերմունքը։

Յերբեմն սիֆիլիսուն իր շրջապատողների  
 և հենց իրեն համար անառակի, շվայտ ցոփա-  
 կացի, անպիտան մարդու հոմանիշն է։ Այս  
 բոլորը պետք ե նկատի առնել։ Յեթե ձեր հի-  
 վանդն ընտանիք ունի, խոսեցեք նրա ընտանի-  
 քի հետ, իհարկե նրա համաձայնությամբ,  
 հայտաբերեցեք յեթե ընտանիքում կա ուրիշ  
 հիվանդ ևս, առանձնազրեք նրան, իսկ յեթե  
 այլևս հիվանդ չկա, ձեռք առեք բոլոր միջոց-  
 ները, վոր չլինի։ Հետազոտության յենթար-  
 կեք բոլոր նրանց, ով շրջապատում ե ձեր հի-  
 մանդին գործարանում, Փարբիկում և այլն։  
 Նման մոտեցման դեպքում բժշկին դիմողների  
 թիվը կավելանա, և սիֆիլիսուն ել կանոնա-  
 վոր կրթշկվի։

Հարկավո՞ր ե ասել ձեզ այն, վոր գուք  
 չպետք ե նստած սպասեք հիվանդներին, այլ  
 պետք ե փնտռեք և դրսեռը նրանց։ Հետազո-  
 տություն կատարել զործարաններում, Փար-  
 բիկներում, կազմակերպված յերիտասարդու-  
 թյան, կոլտնտեսականների, խորհրդային  
 տնտեսականների մեջ, Մեք. Տրակտորային  
 կայաններում և այլն... այս բոլորը մըտ-  
 նում ե ձեր, իբրև վեներաբանի պար-  
 տականությունների մեջ։ Սովորաբար նման  
 հետազոտությունները կատարում են նախորոք  
 կազմակերպված դասախոսությունից կամ բա-

յատրությունից հետո, դրա համար ել ներկաներից հազվագ ե գտնվի մեկը, վոր հրաժարվի քննությունից: Յեթե հետազոտության ժամանակ հայտնաբերեցիք վորևե հիվանդի, ամեն կերպ աշխատեցեք առանձնացնել նրան և սկսել բուժումը: Մի հապաղեք: Ուշադրություն դարձրեք սեղոնային բանվորների վրա: Համապատասխան մարմինների հետ համաձայնության յեկեք նախորոք քննության յենթարկելու բանվորներին աշխատանքի ընդունելուց առաջ: Այս առանձապես նշանակություն ունի գարնանը և ամրանը, յերբ մեզանում տեղի յեռնենում շինարարության, ցանքի, բերքահավաքան և այլն բանվորների մեծ հոսանք: Սյստեղ, չորհիվ միաժեղ ապրուստի, ընդհանուր կեր ու խումբ, մեկը մյուսի հետ ակամաշատ մոտ շփում ունենալու, մեկ հիվանդը կարող ե առաջ բերել տաս հատ նորը:

Այսպիսով, հնարավորություն չունենալով ցույց տալու ձեզ յուրաքանչյուր առանձին դեպքում, թե ինչու այս կամ այն հիվանդը անկանոն ե բժշկվում, յես մատնանշեցի միայն ընդհանուր սլատճառներից մի քանիսը, վորոնք, իմ կարծիքով, ունեն մեծ նշանակություն: Բժիշկը շատ հնարավորություններ ունի հիվանդին բուժման յենթարկելու, նույնիսկ նա կարող ե վարակիչ շըջանում ստիպողական կարգով յենթարկել հիվանդին բուժման: Պետք ե ոգտագործել բոլոր հնարավորությունները: — Խորհրդային յերկիրը կարիք ունի յե-

ռանդուն ու առողջ աշխատավորների և վոչ ուժապատ ու հիվանդ և այն ել ըջապատողների համար վտանգավոր սիֆիլիսուներէ:

## XII. ՅԱՐԵՇ - ԼԵՐՔՍԼԵՅՄԵՐՅԱՆ ՌԵԱԿՑԻԱՆ Թանկագին ընկեր

Զեր հիվանդի մասին նկարագրած դեպքը վոչ մի առանձին բան չի ներկայացնում, և դա միայն պատիվ ե բերում ձեր ուշադրությանը: Միթե՞ մեր կլինիկայում դուք չեք հանդիպել նման յերեվույթների: Թեև մեր կլինիկայում գործնական պարապմունքներին հատկացրած կարծ ժամանակամիջոցում նման դեպք վոչ մի հատ չի յեղել, և մենք ել հհնարավորություն չենք ունեցել ցույց տալու ձեզ, բայց յես դրա մասին, իհարկե ասել եմ, և դուք մոռացել եք:

Նեռալվարասանի միջյերակային ներարկումից հետո ձեր հիվանդի վարդացանը ավելի պայծառ ե դարձել, ինչպես դուք եք գրում, և այս հանգամանքը մի վաքր շփոթեցրել ե ձեզ. սպասում եյթք, վոր վարդացանը կկորցնի իր փայլը, դժողովն կդառնա: Դուք արդարացի յեք բոլորովին. իհարկե, սովորաբար մեծ մասմբ այդպես ել լինում ե. արտահայտված սիֆիլիսի բոլոր նշանները բուժելուց սկսում են աստիճանաբար նսեմանալ և անհետանալ: ինչպես դուք եք գրում, այդպես ել յեղավ հետո: Բայց լինում են դեպքեր, յերբ բուժումը սկսելուց անմիջապես հետո յերկրորդական նը-

շանները կազմ ժամանակով դառնում են ավելի  
ուժեղ գունավորված, սկսում են ավելի ցայ-  
տուն դրսեվորվել, ավելանում են րանց թիվը,  
այտուցից նրանց ծավալն ել մեծանում է: Այս  
յերեվույթը կոչվում է Յարիշ-Հերքսհեյմեր-  
յան ռեակցիա, այն հեղինակների անունով,  
վորոնք առաջին անդամ նկարագրել են այդ:  
Այս յերեւույթի ծավալն մեխանիզմը զանազան  
ձեվով կարելի յե բացատրել:

Գուցե այդ յերեվույթի հիմքը կազմում է  
այն, վոր սպիրոխետների մասսայական քայ-  
քայումից առաջացած թույներից բորբոքման  
պրոցեսն ուժեղանում է: Գուցե հիվանդի ա-  
նոթների համակարգույթյան մեջ տեղի յեն ու-  
նենում Փունկցիոնալ այնպիսի փոփոխություն-  
ներ, վորոնք հնարավորություն են տալիս  
հյուսվածքների հեղուկներին տեղափոխե-  
լու և առաջացնելու նշան ռեակցիան. գուցե  
և սպեցիֆիկ միջոցի փոքրիկ քանակը, ի վիճա-  
կի չիննելով սպանել սպիրոխետը, ավելի ևս  
դրագում են րա գործունեյությունը. այս հար-  
ցը մինչեւ այժմ դեռ իր լուծումը չի ստացել:

Այս յերեվույթին շատ մոտ է կանգնած  
նաև սիֆիլիսի վերաներգործությունը (ռեակ-  
տիվացիան): Մենք այս վերջինն ողտագոր-  
ծում ենք, ինչպես գիտեք, այսպես ասած գըր-  
գործան (պրովոկացիայի) համար. հենց դրա  
մասին ել յես այսոր ցանկանում եմ դրել ձեզ:

Վաղուց եր հայտնի այս կամ այն բնույթ  
ունեցող գրգորիչ գործոնի ազդեցությունը սի-  
ֆիլիսին: Դեռևս նախասալվարսանյան շրջա-

նում այդ յերեվույթը խոշոր սիֆիլիսաբաննե-  
րի ուսումնասիրության նյութ եր դարձել:  
Դժգույն սպիրոխետի և սալվարսանի դյուտից  
հետո այս յերեվույթի վրա ավելի ևս սկսեցին  
ուշաղբություն դարձնել. աշխատում եյին  
տալ դրան գիտական բացատրություն: Մի  
քանի հեղինակներ յենթադրում են, վոր ընդ-  
հանրացած սիֆիլիսի դեպքում, չնայած յերե-  
վույթների անհետանալուն, սպիրոխետները  
մնում են որդանիզմի մեջ «սապրոֆիտների»  
փուլում: Նման սպիրոխետներ կան հյուս-  
վածքներում և, իրը թե համաձայն կատարած  
փորձերի, նրանք գերազանցապես դանվում են  
փուկրածուծի մեջ: Յերբ որդանիզմը կորցնում  
է իր հավասարակշությունը — տրամա, կամ  
մի վորեւե գործոնի պրդիո, — սպիրոխետները  
զուրս են գալիս իրենց ընիդ և տարածվում մո-  
տակա հյուսվածքներում: Այսպիսով գաղտնի  
սիֆիլիսը դառնում ե արտահայտված: Սալ-  
վարսանի դյուտից հետո սիֆիլիսի վերաներ-  
գործությունը հաճախ է պատահում, և դա շատ  
հեղինակներ բացատրում են անբավարար  
բուժմամբ: Սալվարսանի սկզբնական ըրջա-  
նում բոլորն ել այն կարծիքին եյին, վոր սալ-  
վարսանի 1—2 ներարկումով կարելի յե բու-  
ժել սիֆիլիսը (թերապիա մագնա ստերիլի-  
զանս). այդ ըրջանում հաճախակի պատահող  
նեյրոուեցիդիվները պետք ե բացատրել վոչ թե  
պրեապարատի թունալիությամբ, այլ նրա վերց-  
րած անբավարար չափով: Ներվային, ընդե-  
րային կամ մաշկի հաճախակի ռեցիդիվները,

վորոնք առաջ են գալիս բուժումից անմիջա-  
պես հետո, պետք ե բացառութել անբավարար  
բուժմամբ. քնած, «ասպրոֆիտ» սոլիրոխու-  
ները, վորոնք մնացել եյին որդանիզմի դանա-  
զան տեղերում, կարծես, զարթնում են քնից,  
անբավարար բուժումից նորից ուժ են ստա-  
նում. անբավարար բուժումը փոխանակ սպա-  
նելու, ավելի շուտ դրդում ե նրանց: Հենց  
այս հիսութեղի վրա յեն հիմնված արսենորեն-  
գոլների գրգռիչ միջերակային ներարկում-  
ները, վոր առաջարկել են Գեններին ու Մի-  
լիանը 1910 թ., մեծ ժողովրդականություն են  
ձեռք բերել, վորպես գաղտնի կամ առողջացած  
սիֆիլիսութիւն ախտորոշման մեթոդ: Հիվան-  
դի արյան շիճուկն ել գրգռիչ ազդեցություն և  
ունենում — վասօներմանի դրական ռեակցիան  
գառնում ե բացասական: Պետք ե հիշատակել,  
վոր մի քանի հեղինակներ այդ բանը չեն ը-  
դունում:

Պետք ե յենթառքել, վոր այն բոլորը, ինչ  
կարող ե, բառիս լայն մտքով, հարված հասց-  
նել, ինչ կարող ե գուրս բերել որդանիզմն իր  
սովորական վիճակից, կարող ե և պատճառ  
հանդիսանալ սիֆիլիսի վերաներգործության  
— թող լինի դա վորոշ հյուսվածքի վիրավո-  
րում, ունտենյան ճառագայթներով գրգռ-  
ում, վարակիչ հիվանդություն, պատվաստ,  
սեփական կամ ոտար սպիտի սրսկում (պրոտե-  
յինաբուժում, ինքնարյունաբուժում), վեր-  
ջապես սպիրոխետի վերջնական վոչնչացման  
համար վոչ բավարար չափով վերցրած սպի-

ցիֆիկ միջոց — այս բոլորը կարող են ներգոր-  
ծոն դարձնել սիֆիլիսը:

Մի քանի հեղինակներ շատ ծանր յերե-  
վույթներ են նկատել բուժման ընթացքում,  
յերբ, իհարկե, հնարավոր չեր յեղել ներմուծել  
դեղի հարկավոր քանակը, այլ մուծել են մաս-  
մաս արած. նրանք նկատել են՝ տեսողության  
ներփի ախտահանություններ, մենինդոմիյելի-  
տից մահվան դեպքեր, գաղտնի սիֆիլիսի ժա-  
մանակ յերկրորդական և յերրորդական յերե-  
վույթներ և այլն: Յեկ այն ել վոչ միայն սալ-  
վարսանից, այլև ուրիշ պրեալարատներից՝  
բիամուտից (Կ. Սիմոն, Բ. Ռուբեր) և այլն: Յես  
անձամբ տեսել եմ վերաներգործությունը —  
սիֆիլիսի նկատելի նշանների խիստ ուժեղա-  
ցումը — յողային կալինի փոքր չափերից:  
Յերկար ժամանակ չբուժած և շատ տարիների  
ընթացքում առանց արտահայտությունների  
մնացած սիֆիլիսը այս ձեկով կարող է բուժ-  
ման սկզբում «բոնկվել», մինչև վոր որդանիզ-  
մի մեջ մուծվի սպեցիֆիկ միջոցի՝ բավարար  
քանակ, վորից և կանհետանան այս յերեւյթ-  
ները: Ուրեմն բուժման ընթացքում գաղտնի  
սիֆիլիսը դառնում է արտահայտված, վոր-  
պեսզի հետադայում նորից դառնա գաղտնի:  
Պրոֆ. Գ. Ի. Մեշերսկին նկարագրել ե  
ամուսինների վարակման մի դեպք. այրը վա-  
ղոց չեր բժշկվում և գաղտնի շրջանում եր  
դանիվում. բուժումն սկսելուց հետո վարակեց  
եր կնոջը, վորի հետ շատ յերկար ապրել եր և

մինչև այդ չեր վարակել։ Պետք ե յենթաղբել,  
վոր զաղտնի սիֆիլիսը դարձավ ներդործոն,  
դրսեվորեց այնպիսի յերեվույթներ, վորոնք և  
կնոջ համար վարակման աղբյուր հանդիսա-  
ցան։

Ահա թե ինչու, յերբ մենք կասկածում ենք  
հիվանդի զաղտնի սիֆիլիսը, իսկ վ. Ռ. բա-  
ցասական արգյունք ե տալիս կամ յերբ սի-  
ֆիլիսոտին առողջացած ենք համարում ու նրա  
շիճուկաբանական բոլոր ուեակցիաները բացա-  
սական են, ավելորդ չենք համարում մի փորեկ  
գրգորիչ (ալբովոկացիոն) փորձ կատարել՝ յե-  
րակի մեջ ներարկել փոքր չափով նեռ, սրս-  
կել 2—3 անգամ բիսմուտ կամ սնդիկ, կամ  
վերջապես նշանակել խմելու համար մի քանի  
սրվակ յողացին կալիոն, և դրանից 3—5 որ  
անց, նորից վերցնել արյունը հետազոտության  
համար (իհարկե, յերբ սիֆիլիսի վոչ մի ար-  
տաքին նշան չկա)։ Թեև կրկնակի ստացած  
բացասական պատասխանը վճռական նշանա-  
կություն չունի, բայց և այնպես հոգուտ հի-  
վանդի մի ավելորդ փաստ ե։

### XIII. ԱՐՅԱՆ ՆԵՐԱՐԿՈՒՄԻՑ ԱՌԱՋԱՑԱՌ ՍԻՖԻԼԻՍԸ Թանկագին ընկեր

Դուք դիտեք, վոր սիֆիլիսով հիվանդի  
որդանիդմի արտադրած բոլոր նյութերն եւ  
հավասար չափով վարակիչ չեն համարվում։  
Մի ժամանակ այդ հարցը խիստ զբաղեցնում

եր սիֆիլիսաբանների միտքը, և շատ առողջ  
մարդիկ բազմից յենթարկված են յեղել չա-  
փազանց վտանգավոր փորձերի այն պատճա-  
ռով, վոր մինչև այդ հայտնի չեր, թե կա սի-  
ֆիլիսի ախտընդունակ կենդանի։ Թունալիու-  
թյան աստիճանը վորոշելու համար առողջ  
մարդկանց սրսկում եյին սիֆիլիսոտների ար-  
տադրած նյութերը՝ մեզը, օրտինքը, արտա-  
սուքը, թուքը և այլն... Դիլայը սրսկում  
եր սիֆիլիսոտների արտասուքը, Պաղովան  
— սիֆիլիսով հիվանդ ծծմայրերի կաթը,  
Պրոֆեն ինքն իրեն պատվաստեց բացահայտ  
սիֆիլիսով հիվանդի թուքը, բայց հիվանդի  
բերանում սիֆիլիսի վոչ մի նշան չկար... Այս  
բոլոր փորձերը ընդհանուր առմամբ բացա-  
սակայն արդյունք տվեցին — սիֆիլիսը չեր  
պատվաստվում, և, շատ բնական ե, դրանցից  
յեղրակացնում եյին, վոր այդ նյութերը — ար-  
տասասուք, օրտինք, թուք, կաթ, մեզ և այլն  
— թունավոր չեն։

Ներկայումս դրան պետք ե չսփազանց  
զգույշ վերաբերվել, վորովհետեւ՝ 1) հետազո-  
յում կենդանիների վրա կատարած փորձերով  
կարելի յեղավ ապացուցել առդ նյութերի մի  
քանիսի պատվաստունակությունը. որինակ՝  
Ֆինգերն ու կանդշտեյները սիֆիլիս պատ-  
վաստեցին կատահիկն սիֆիլիսոտի սերմից,  
իսկ Վուսոր կաթից և այլն. և 2) այդ նյութե-  
րը կարող են վարակ հպարտունակել, բայտ սպի-  
րիսետները կարող են, վորպես լորձաթաղան-

թի սիֆիլիսային ախտահարության խառանուրդ, հեշտությամբ ընկնել նրանց մեջ և այդպիսով վոչ վարակիչ նյութը կարող եղաւնալ վարակիչ։

Այլ բան ե սիֆիլիսոտների արյունը։ Պրագա քաղաքի բժիշկ Վալերը 1850 թվին սիֆիլիսով հիվանդ կող արյունը պատվաստեց գայլուկով հիվանդի նախորոք նշտարած աղդըին և դրական արդյունք ստացավ։ 1854 թ. բժիշկ Բետիգերը (այսպես կոչված հոչակավոր Պֆայլցյան անանունը), վոր ապրել ե 19-րդ դարի միջին) սիֆիլիսով հիվանդի արյան մոտավորապես 6 պատվաստումներից (առողջ մարդկանց), յերեք դեպքում ստացավ դրական արդյունք։ Մեղ հայտնի յեն իտալացի ամենաժողովրդական սիֆիլիսաբան Պելլիցարի-յիփորձերը կատարած 1860 թ. . . Նա յերեք բժիշկ-ուսանողների՝ Բորջիոնի-յին, Ռոսսին-ին և Պասսիլյի-յին նրանց հոգար կամ քով սլատվաստեց սիֆիլիսով հիվանդ հղի կող արյունը, յերբ այդ կինն ուներ ծաղկած վիճակում յերկրորդական յերեվույթներ։ Ուստանողներից յերկուսը մնացին առողջ, իսկ յերրորդի վրա սովորական գաղտնի շրջանից հետո յերեան յեկավ կոչտ շանկը, հանդեմ հաջորդող յերկրորդական յերեվույթներով։ Դրական արդյունքներով արյան պատվաստման փորձեր կատարել են Լինդվուրմը, Ֆիբերը և այլն։

Ներկայումս սիֆիլիսոտների արյան վա-

րակելիությունը կենդանիների վրա կատարած բազմաթիվ փորձերով ապացուցել են Հոֆմանը, Ռուբենհուտը, Մյուլցերը և մի շարք ուրիշ հեղինակներ։

Ինչպես տեսնում եք, անկասկած կարելի յէ սիֆիլիսով վարակվել արյան միջոցով։ Բայց կյանքի մեջ այդ այնքան ել հաճախ չի պատահում։ Սովորաբար սիֆիլիսոտների արյան մեջ սպիրոխետներ քիչ կան։ Սպիրոխետը զերազանցապես հյուսվածքերի մակաբույժ ե, և արյունից վարակվելու համար, ակնհայտ ե, շատ բարենպաստ հանգամանքներ են հարկավոր, որինակ, յերբ սիֆիլիսոտի արյան մեջ պատահմամբ շատ մեծ թվով սպիրոխետներ կան (սիֆիլիսոտ նորածիններ — մանկաբարձուհիների վարակումը), վերքեր, կտրածներ, ասեղի ծակածներ և այլ վնասվածքներ առողջ մարդկանց վրա, յերկարատև շիում սիֆիլիսոտի արյան հետ, վորի պատճառով կարող են մեծ քանակով սպիրոխետներ մտնել առողջի որդանիզմի մեջ և այն։

Այս բոլորը յես գրում եմ ձեզ նրա համար, վոր ներկայումս արյան միջոցով վարակումը շատ մեծ գործնական նշանակություն ունի։

Դուք գիտեք, վոր վերջին ժամանակներս թե խիբուրգիայում և թե ներքին հիվանդությունների բժշկականության մեջ լայն ծավալ ե ընդունել արյան փոխներարկման ձեռվ բուժումը, առողջից արյունը ներարկում են հիվանդի յերակի մեջ։ Այս մեթոդը առանձնա-

պես տարածվեց Հ. Ա. Միացյալ Նահանգներում իմակերիալիստական պատերազմի ժամանակ և այժմ այնտեղ կան ահազին թվով արդյունատուներ, այսպես ասած դռնորներ, վորոնց արյունը ներարկում են հիվանդներին: Միայն խիբուրք Մայոյի կլինիկան իր տրամադրության տակ ունի 1000-ից ավելի արյունատուներ, վորոնցից յերկու հարյուրին կարելի յետ ամեն բուք կանչել: Այս մեթոդը մեզ մոտ ել ե սկսել ժողովրդականություն ստանալ, ինչարկեամեն կերպ պետք ե աշխատել նպաստել դրան: կապիտալիստական յերկրներով շրջապատված մեր Միությունը միշտ պետք ե պատրաստ լինի նրանց հարձակման, պատերազմի դեմ: Վոչ մի տեղ այնքան կարիք չի լինի արյան փոխներարկման, վորքան պատերազմի ժամանակ:

Քանի վոր հիվանդին փոխներարկում են առողջի արյունը, ասլա ուրեմն ակնհայտ ե, վոր անհրաժեշտ ե մանրակրկիտ կերպով հետազոտել առողջի — արյունատվի — արյունը, վորեպսզի նա չալրունակի այս կամ այն հիվանդաբեր տարրեր, վորպեսզի մենք, հիմնական ցավից հիվանդին բժշկելիս, չպատվաստենք նրան, արյուն փոխներարկելիս, մի վորեւ այլ վարակ:

Ներկա դեպքում մեզ հետաքրքրում ե արյունատվի սիֆիլիսը, վորովհետեւ կան նկարագրած դեպքեր, յերբ, «առողջից» արյուն փոխներարկելիս, հիվանդին տվել են սիֆի-

լիս: Նման դեպքեր նկարագրել են՝ Սպիլմանը, Մորելը, Դյուֆուրը, Կոստանտինեսկուն, Ֆրանկը, Ֆեյլդմանը և այլն: Ամերիկական բժիշկներ Պոլայեցը և Լեդերերը 1917 թ. հաշվել են արյան փոխներարկումից սիֆիլիսով վարակման 12 նման դեպք: Հավանական ե, վոր շատ դեպքեր նկարագրված չեն, թեև կարծում են, վոր ընդհանրապես դրանք շատ չպետք ե լինեն:

Իհարկե, արյան փոխներարկման ժամանակ սիֆիլիսի տարափոխման համար կան շատ բարենպաստ հանդամանքներ, յերբ արյունատուն հիվանդ է սիֆիլիսով. մեծ քանակով արյուն փոխներարկելը, համեմատաբար յերկարածեւ ուղիրացիան և այլն: Այդ պատճառով արյունատուներին յենթարկում են մանրակրկիտ քննության, հսկողության տակ են պահում նրանց և սխտեմատիկ կերպով հետազոտում են նրանց արյունը: Քննությունը կրկնում են յուրաքանչյուր 10—15 որը, իսկ վաստերմանի և այլ ռեակցիաների համար արյունը վերցնում են մոտավորապես այն հաշվով, վոր արյունատվի ողտագործումից 2—3 շաբաթ առաջ արյունը լինի հետազոտված. Կարծ առած — ամեն կերպ աշխատում են բացանել սիֆիլիսը: Այսուեղ մեծ զգուշություն ե հարկավոր, և արդարացի յետելդմանը, վորն ընդունում ե, թե վոր շրջանում ել լինի սիֆիլիսութը, ինչպես ել բժշկված լինի նա անցյալում, վոչ մի դեպքում նա չի կարող պետքական

լինել փոխներարկման համար, վորովհետև նրա  
 սպիրոխետների թագ կացած ըները հանկար-  
 ծակի և անսպասելի կերպով կարող են ներ-  
 գործոն դառնալ: Այս զգուշությունը ձեզ հա-  
 մար ավելի յեփս հասկանալի կլինի, յեթե  
 մատնանշեմ ձեզ, վոր սիֆիլիսոտների արյունը  
 կենդանիներին փորձնական պատվաստման  
 դեպքում, տվել եղբական հետեւվանք, Վասսեր  
 մանի դրական ռեակցիայից և նույնիսկ կոչտ  
 շանկրի յերեվալուց շատ ու շատ առաջ: Մի  
 բան ես չպետք եմուանաք, վոր, ինչպես իր  
 կատարած փորձերի հիման վրա, կարծում ե  
 Մյուլցերը, արյան թունալիության և Վ. Ռ.  
 միջև վոչ մի միակերպություն չկա, վոր Վաս-  
 սերմանի բացասական ռեակցիա ունեցող ար-  
 յունը կարող ե պարունակել սպիրոխետներ:  
 Մ. Յավորսկին գնում ե ավելի հեռուն: Հենց  
 այս քանի որը նա գրել եր, վոր վոչ շիճուկա-  
 բանական, վոչ ել կլինիկական հետազոտու-  
 թյունները վստահություն տալ չեն կարող,  
 վոր արյունատվի արյունը չի վարակի սիֆիլի-  
 սով. Երա համար նա առաջարկում ե ավե-  
 լացնել արյանը ցիանատ մնդիկ՝ մարդու համար  
 վոչ թունալոր չափով, նրա կարծիքով արյան  
 յուրաքանչյուր 10 խոր. սանտիմետրին վեր-  
 ցրած մեկ սանտիմետր (0,01) ցիանատ մնդի-  
 կը սպանում ե բոլոր պարագիտներին, ինչպես  
 այդ ապացուցված ե ճաղարների վրա կատա-  
 րած փորձերով:

Անմիջապես արյան հոսանքի մեջ պատ-

վաստված սիֆիլիսն ընթանում ե բոլորվին  
 տարբեր ձեւով, քան վարակման սովորական  
 պայմաններում: Այստեղ պետք ե նշել, վոր  
 նման ձեռվ վարակման դեպքում, կոչտ շանկր  
 չի լինում և սովորաբար հիվանդությունն աբ-  
 ահայտվում ե, ինչպես նկարագրում են, վա-  
 րակումից մեկ ու կես-Չ ամիս անց. Հիվանդի  
 ջերմությունը բարձրանում է, մաշկի վրա յե-  
 րեան են գալիս յերկրորդական շրջանի ընդհա-  
 նուր ցաներ — ամենից հաճախ վարդացան:  
 Հին ժամանակները շատ ելին վկնում, կա-  
 րող ե արդյոք լինել սիֆիլիս առանց կոչտ շան-  
 կրի: Շատերը կարծում ելին, վոր առանց շան-  
 կրի սիֆիլիս են ընդունել այն դեպքերը, յերբ  
 շանկրը չեն նկատել, աչքաթող են արել: Շատ  
 հաճախ կոչտ շանկրը, մանավանդ այսպես կոչ-  
 ված թղուկ շանկրը, յերեան ե գալիս այնպիսի  
 ծածկված տեղերում, որինակ նշագեղձերի վրա,  
 կանանց սեռական շրթունքների ծալքերում, առ  
 պանդի վզիկի կամ տեսնելու համար անմատչե-  
 լի լորձաթաղանթի վրա, վոր իրոք շատ հեշ-  
 տությամբ կարող են նրան աչքաթող անել վոչ  
 միայն հիվանդները, այլև բժիշկները: Հոչա-  
 կավոր Ռիկորը շատ անգամ ե հայտաբերել նը-  
 ման թագկացած շանկրներ և դրանով ցրել ե ան-  
 շանկր սիֆիլիսի մասին յեղած կարծիքը: Սա-  
 շանկր սիֆիլիսի մասին յեղած կարծիքը: Սա-  
 կայն մի շարք հաջորդ դիտողություններ ան-  
 տարակուսելիորեն հաստատեցին, վոր կարե-  
 լի յե վարակվել սիֆիլիսով և առանց կոչտ  
 շանկրի: Յես թույլ եմ տալիս բերել ձեզ մի

քանի դեպք. 1901թ. Ժուլիյենը հաղորդեց մի հետաքրքրական դիտողություն մեկ խիրուրդի վերաբերյալ, վորը յերկրորդական սիֆիլիս ունեցող կնոջն ոպերացիա անելիս, ասեղով վերավորել իր մատը. մատի ծակած տեղն առողջ ջացավ 3-4-րդ որը առանց շանկրի. մատը ծակելուց քսանվեց որ անց Խիրուրդի ջերմությունը բարձրացավ մինչև յերեսունինը աստիճան, իսկ յերեսուներորդ որը հայտնվեց վարդացանը: Միևնույն բանը յեղավ և խիրուրդի ոգնականի հետ, վորը նույնպես ծակել եր մատը. 30-րդ որը ջերմությունը բարձրացավ, իսկ 33-րդ որը հայտնեց վարդացանը:

Նման դեպքեր շատ են նկարագրած: Արյան ներարկումից սիֆիլիսով վարակվելը ակնհայտ ապացուցել ե, վոր անշանկը սիֆիլիսը հնարավոր բան է:

Վերջապես հոգուտ դրա յեն խոսում նաև փորձնական տվյալները: Բրովն-ը և Պեարց-ը, ճագարի սեռական գործարանների լորձաթաղանթին վարակը քսելով, ստացան սիֆիլիսի ուշ յերեսութներ առանց շանկրի:

Ինչպես ցույց են տվել Նեյսերի, Ռուենհուտի, Կոլեյի և այլոց փորձերը, կենդանիների վերաբերյալ անտարակույս ապացուցված ե, վոր կարող են նրանք սիֆիլիսով վարակվել վոչ միայն առանց շանկրի, այլ և առանց ցանի, այսինքն սիֆիլիսի թույնը թափանցում ե մաշկով որդանիզմի մեջ առանց մի վորեն նշանի, իսկ Ալբերտին ապացուցեց վոր ճագարները կարող են վարակել «անախ-

տանիշ»սիֆիլիսով նաև կոխուս-ի ժամանակ: Գուցե մարդկանց մեջ ել զոյլություն ունի (ի հարկե սակավաթիվ դեպքերում) նման համը վարակում, վորը գերմանացիք անվանել են շտումմինֆեկցիոն: Ակներե ե, վոր նման դեպքում տեղի յե ունենում սպիրոխետային սեպտիցիմիա (համեմատեցեք այդ բնածին սիֆիլիսի հետ):

Այն սիֆիլիսը, վորն արտահայտվում ե առանց կոչտ շանկրի, կարծես, մեկեն, հանկարծակի և անսպասելի յերկրորդական յերեսութներով, սիֆիլիդներով, Փրանսիացիք անվանում են սիֆիլիս դամբրի՝ կամ սիֆիլիս դեկապիտե (դիմատած սիֆիլիս): Զեր այն հարցին, թե վորքան կլինեն անշանկը վարակումների դեպքերը, դժվար ե պատասխանել, վորովհեկ վիճակագրական ճշգրիտ տեղեկություններ չկան: Կան հեղինակներ, վորոնք պնդում են, թե վարակման բոլոր դեպքերի համարյա կեսը նման ձևով ե ընթանում, ուրիշները, վորոնց հետ յես համաձայն եմ, այդ թիվն իշեցնում են նվազագույն չափի:

#### XIV. ՎԱՅՍԵՐՄԱՆԻ ՌԵԱԿՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ Թանկագին ընկեր

Իհարկե, հնարավոր չե կարճ նամակում պատասխանել Վասսերմանի մասին ձեր տված բոլոր հարցերին, բայց կաշխատեմ, ինչպես արել եմ իմ բոլոր նամակներում, տալ ձեզ մի քանի զուտ գործնական խորհուրդներ:

Մենք անկասկած պետք եւ վասսերմանի ոե-  
 ակցիան սպեցիֆիկ համարենք սիֆիլիսի հա-  
 մար: Իհարկե, ուռը արդարացի եք այն հար-  
 ցում, վոր ուեակցիայի դրական արդյունք  
 ստացվում եւ մի շարք ուրիշ հիվանդություն-  
 ների դեպքում, որինակ՝ Փրամբեղիայի, արե-  
 պանոգոչիազիսի, քութեշի, լեթարզիական ու-  
 ղեղատապի, բորի, մալարիայի, հետադարձ տի-  
 ֆի և ուրիշ շատ հիվանդությունների դեպ-  
 քում: Բայց այդ հիվանդություններից մի մա-  
 սը մեր կլիմայում չի լինում, ուստի գործնա-  
 կանում կարելի յեւ ուշադրության չառնել,  
 մյուս մասն ունի իրեն բավականին հատուկ  
 ախտանիշերը, վորոնք հնարավորություն են  
 տալիս տարբերել սիֆիլիսից, ուստի և, չեմ  
 կարծում, վոր սիֆիլիսի դեպքում վասսեր-  
 մանի ուակցիայի արժեքը կարող եւ պակասել:  
 Պետք եւ ավելացնել և այն, վոր վերը հիշած  
 հիվանդությունների ժամանակ դրական ար-  
 դյունքը կայուն չեւ և, սովորաբար, ուժեղ ար-  
 տահայտված չի լինում: Նկատի առնելով այս  
 կարելի յեւ առել, վոր այս ուեակցիան սպեցի-  
 ֆիկ եւ սիֆիլիսի համար: Մեր գործնական  
 նպատակների համար մենք շատ ենք ոգտվում  
 նրանով. ավելին կասեմ, մենք չենք կարող  
 պատկերացնել մեր աշխատանքն առանց Վ. Թ. Ռ.  
 Բայց կարգին ոգտվելու համար պետք եւ գի-  
 տենալ այդ ուեակցիայի մի քանի առանձնա-  
 հատկությունները, նրա «քմահաճույքները»:

Նրա յուրահատուկ տատանումները և այն,  
 վորպեսզի սխալանքի մեջ չընկնենք:

Նախ և առաջ պետք եւ լավ հիշել, վոր  
 ուեակցիայի դրական արդյունքը միշտ ել ան-  
 կասկածելիորեն ցույց չի տալիս, վոր կա սիֆի  
 լիս, առավել ևս բացասական արդյունքը  
 միշտ ել ցույց չի տալիս, վոր չկա սիֆիլիս:  
 Սոսենք ուեակցիայի արդյունքների մասին:  
 Ինչպես գիտեք, այդ արդյունքները հատ  
 են՝ դրական, բացասական և անորոշ(կասկածե-  
 լի): Առաջինը պլյուսներով (+) ենք նշանակում,  
 առվորաբար մեկից մինչեւ չորս, յերկրորդը  
 մինուսով (-) և յերրորդը այսպես՝ պլյուս մի  
 նուս (+): Դրական արդյուքը մի քանի ա-  
 ռանձնահատկություններ ունի: Մի վորոշ հի-  
 վանդների մեջ, թեև սակավաթիվ են նման  
 դեպքերը, այդ արդյունքը, չնայած յեռան-  
 դուն բուժման, միշտ ել մնում եւ անփոփոխ. 1-2  
 տարվա ընթացքում, յերբեմն և ել ավելի,  
 դուք շարունակ կարող եք ստանալ միենույն  
 պլյուսները, վորոնք նիստ ընկճում են թե  
 հիվանդներին և թե բժշկին:

Նման դեպքերում պետք եւ հիշել, վոր այդ-  
 պիսի կայուն դրական վասսերմանը միշտ ել  
 նշան չի հիվանդության ծանրության կամ  
 չի նախազուշակում հիվանդին վորեվե սպառ-  
 նալիք մոտ ապագայում: Այս խոսքերը գրելիս,  
 ակամա հիշում եմ իմ պրակտիկայիս մեջ յե-  
 ղած նման դեպքերը... Միտ բերենք այժմ մեկ  
 հիվանդի, վորն ուներ բազմաթիվ ճարպու-

ռունցքներ, սիրված ամբողջ մարմնի վրա, և  
վորը, նախքան ինձ դիմելը բավականին տո-  
կուն կերպով, 8 տարվա ընթացքում բժշկվել  
եր սիֆիլիսից:

Այդ ժամանակամիջոցում վոչ մի ռեցի-  
դիվ չեր յեղել, բայց Վասոնը ամեն ան-  
դամ անփոփոխ կերպով տվել եր 4 պլյուս:  
Նման դեպքերում հաճախ ստիպված ես լինում  
սպեցիֆիկ բուժումից անցնել վոչ սպեցիֆիկի՝  
ծծմբային վանաներ, կաթնաբուժում, արեա-  
բուժում, կուրորտային բուժում և այլն, և  
միշտ ել հարկ չկա անզատնառ աշխատել ստա-  
նալ բացասական արդյունք միմիայն սպեցի-  
ֆիկ դեղերից: Բուժման համառ կերպով չեն-  
թարկվող դրական արդունքի նման, պատա-  
հում և նաև բացահայտ սիֆիլիսութիւն համառ  
բացասականը: Կան հիվանդներ, վորոնց դրա-  
կան Վասոնը յերբեմն համեմատաբար ան-  
նշան բուժման աղդեցությունից դառնում ե բա-  
ցասական և այդ դբության մեջ մնում ե յերկար  
ժամանակ: Կարելի յե արդյո՞ք նման հիվանդ-  
ներին հաշվել վերջնականապես առողջացած:  
Իհարկե, վոչ: Այստեղ, յեզրակացություն հա-  
նելիս, պետք ե զգույշ լինել, վորովհետեւ վըս-  
տահ չենք, վոր այդ բացասական արդյունքը  
մի դեղեցիկ որ չի դառնա դրական: Յերբեմն  
հիվանդի բացասական արդյունքը կարճ ժամա-  
նակով տալիս ե պլյուսներ և հետո նորից դառ-  
նում բացասական յերկար ժամանակով. նորյա-  
պես ել դրականը կարող ե տալ նման թոփչքներ

դառնալ բացասական, իսկ մի առ ժամանակից  
հետո նորից դառնալ կայուն դրական: Առհա-  
սարակ պետք ե հիշել, վոր սիֆիլիսը, մինչեւ  
անդամ նկատի չառած բուժումը, զանազան  
շրջաններում տարբեր արդյունքներ ե տալիս.  
Վաղ շրջանում դրական արդյունքի տոկոսն ա-  
վելի բարձր ե, քան ավելի ուշ շրջանում: Յեթե  
բոլոր սիֆիլիսունները, վորոնք ունեն ծաղկած  
վիճակի վարդացան և պապուլաներ, տան դը-  
րական Վասոնը ան, գումմող շրջանում նրան-  
ցից յերկուսից մեկը կտա դրական: Վերջապես  
դեղերն ել են տարբեր կերպով աղդում ռեակ-  
ցիայի արդյունքներին: Մկնդեղի, բիսմուտի  
կամ սնդիկի աղդեցությունը միատեսակ չե:  
Վերջապես, նկարագրված են դեպքեր, յերբ  
միենույն հիվանդի շիճուկը տարվա զանազան  
յեղանակներին տվել ե տարբեր արդյունք: Իհար  
կե, ամեն անդամ ել հնարավոր չի նման յերե-  
վույթները բավարար չափով բացատրել,  
բայց այս բոլորը պետք ե հիշել: Ել չեմ ասում,  
վոր ձեր հիվանդի բացասական արդյունքը սի-  
ֆիլիսի մի վորես նոր բռնկումից կարող ե դառ-  
նալ դրական—դա հասկանալի յե և կարելի յե  
բացատրել: Անորոշ արդյունքները միշտ ել  
պետք ե կրկնակի ստուգել: Յերբեմն նրանց  
պատճառը լարորատորիայի տեխնիկական թե-  
րություններն են լինում: Իսկ յեթե միենույն  
հիվանդի շիճուկը լավ սարքավորված լաբորա-  
տորիայում, հմուտ շիճուկաբանի անբասիր

քննությամբ, մի քանի անդամ շարունակ անվտա  
փոխս կերպով տալիս և անորոշ արդյունք (ողլ-  
յուս մինուս), ավելի լավ և նման պատասխանն  
ընդունել, վորպես դրական:

Ի՞նչ են ցույց տալիս իմ ասածները: Այն,  
վոր ռեակցիան մեզ կլինիցիստներիս համար  
հարյուր տոկոսով բավարար պատասխան չի-  
տալիս, վոր չի կարելի կուրորեն և անվիճելի-  
որեն ողավել ռեակցիայով և վոր նրա տված  
յուրաքանչյուր արդյունք պետք է լավ ուսում-  
նասիրել և քննել բոլոր ուրիշ տվյալների հետ  
միասին վերցրած և վոչ առանձին: Պետք է լավ  
հիշել այս կարեոր կանոնը, վորովհետեւ Վ. Ռ.  
Հաճախ ողտվում եք ախտորոշման և նախա-  
զգուշացման համար: Բայց չպետք է միայն  
վասսերմանի ռեակցիայի հիման վրա, ինչ  
պես մենք բազմիցս ձեզ խորհուրդ ենք տվել,  
վճռել ախտորոշման ու նախազգուշացման  
խնդիրները: Հիշումեք, մենք սովորեցրել ենք  
ձեզ, ոիֆիլիսի ախտորոշումը մի դրեք միմիայն  
մի վորեվեն նշանի, հիվանդության ախտանի-  
շի, այլ հիվանդի բոլոր յերեւութների միահա-  
մուռ խմբի հիման վրա, որինակի համար, տե-  
սել եք վարդացան, մի շտապեցեք դատավճիռ  
կայտնել, այլ վնատոեցեք լորձաթաղանթնե-  
րի վրա յերեվույթներ, շոշափեցեք գեղձերը,  
յեթե հնարավոր ե, գտեք շանկրի մնացորդնե-  
րը, հետազոտեցեք դիլի մազածածկ մասը,  
վնատոեցեք լեյկոպերման (սպիտակ բծեր մաշ  
կի վրա), պարզեցեք ճիշտ անամնեսը և

այլն... Յես չատ կցանկանայի, վոր դուք  
վասսերման ռեակցիայի արդյունքին-դրա-  
կան կամ բացասական-նայելիք, վորպես սի-  
ֆիլիսի նշաններից մեկին, նրա ախտանիշերից  
մեկին-և ավելի վոչինչ: Գուցե չափաղանց կա-  
րեվոր ախտանիշ և այն, բայց միայն ախտա-  
նիշ ե:

Շատ հաճախ յերիտասարդ բժիշկները  
գոեհկացնում են ռեակցիայի հասկացողությու-  
նը և միմիայն նրա հիման վրա աշխատում են  
առանց կլինիկայի ողնության, ախտորոշել  
և բժշկել հիվանդներին: Դա անկարելի յե:  
Կլինիկայի և լաբորատորիայի համագործակ-  
ցությունը մեր աշխատանքի մեջ պարտադիր  
է: Վերջիվերջո լաբորատորիան միայն կլի-  
նիկայի ողնականն է: Վճռական խոսքը միշտ ել  
կլինիկային և պատկանում: Եեթե այս բոլոր  
իմ ասածները-ռեակցիայի մասին - հայվի առ-  
նեք, բացառեք բոլոր այն հիվանդություննե-  
րը, վորոնք բացի սիֆիլիսից, յերբեմն արգելա-  
կում են հեմոլիդը, յեթե հաշվի առնեք տեխ-  
նիկական հավանական՝ թերությունները և,  
վորքան հնարավոր ե, ռեակցիայի տատանում-  
ները, նրա «քմահաճույքները»; դուք չուտ  
կհամողվեք, վոր դրական արդյունքը մեծ մա-  
սամբ հաստատում ե սիֆիլիս:

Զանազան հիվանդություններ բացառելիս,  
մեզ մոտ պետք է առանձնապես զգույշ լինել  
մալարիայի վերաբերյալ: Ինչպես գիտքե, մեր  
մի քանի ուայոններում նա չատ խիստ ե տա-

բածված։ Թեև ընդունված է, վոր դրական արդյունքն ստացվում է մալարիայի սուր տեսակի գեպօւմ, բայց անկասկած պետք է յենթադրել, վոր մալարիայի խրոնիկ տեսակները, փորոնք մեր ազգաբնակության մեջ ավելի հաճախ են պատահում, կարող են ազդել ռեակցիայի արդյունքներին և այլպիսով մոլորության մեջ գցել բժշկին։

Ինքնըստինքյան հասկանալի յեւ, վոր ռեակցիայի դրական արդյունքը յերբեք իրավունք չի տալիս ձեզ հիվանդի բոլոր յերեվույթներն ընդունել իրեն սիֆիլիսի նշան։ Սիֆիլիսոտն «ունի իրավունք» հիվանդանալ վոչ միայն սիֆիլիսով, և նրա յուրաքանչյուր ցավը միմիայն դրական արդյունքի հիման վրա գրոշմել «սիֆիլիսով»—դա կլինի կոպիտ և վնասակար սխալ։ Ինչո՞ւ յեմ գրում նման ակսիոմաներ; Նրա համար, վոր կյանքի մեջ նման «թյուրիմացություններ» շատ են պատահում։ Մի քանի ամիս սրանից առաջ մեզ դիմեց մի հիվանդ, վորն ուներ վարդագույն պիտիրիալիս (ժիրերի)։ Մեր հիմնարկության յերիտասարդ բժիշկներից մեկը, վորը վոչ բավարար չափով եր քըննել հիվանդին, կասկածելով սիֆիլիսի վարդացան, վերցնում ե արյունը Վ. Ռ. Համար։ Պատասխանը խիստ դրական (+++) դուրս յեկավ։ Բժիշկը ձեռնամուխ ե լինում սպեցիֆիկ բուժման։ Վորքան մեծ ե յեղել նրա զարմանքը, յերբ նա որեցոր համոզվում եր, վոր «վարդացանը» վոչ մի կերպ չի յենթարկվում

բուժման։ Հետո սլարդվեց, վոր հիվանդը մոտավորապես մեկ տարի տառապում է սիֆիլիսով և բժշկվում է ինչ վոր մասնավոր բժշկի մոտ։ յանը յերեալուց հետո հիվանդը ոեցիդիվ կասկածելով թողնում է իր բժշկին և դիմում մեղ խորհուրդ և ոգնություն ստանալու համար։ Մաշկի ցանը յերեվացել եր մեզ դիմելուց 3—4 որ առաջ։

Ներկա դեպքում Վ. Ռ. ճիշտ պատասխան է տվել— հիվանդը սիֆիլիս ուներ (ԱՌ զաղտ.), բայց ցանը, վորի համար նա դիմեց մեզ, վոչ մի աւնչություն չուներ սիֆիլիսի նշանների հետ։ Բժշկի սխալն այն եր, վոր նա մանրակրկիս անամնես չեր ժողովել (չեր սլարդել, վոր հիվանդն անցյալում ունեցել ե սիֆիլիս), ծանոթ չեր կվինիկային (շփոթել եր մաշկի սովորական հիվանդությունը վարդացանի հետ), ախտորոշումը կայացրել եր միայն սիֆիլիսի մեկ յերեվակայական նշանի հիման վրա (միայն «վարդացանի» հիման վրա) և ռեակցիայի դրական արդյունքը սխալ եր լուսաբանել։

Ներկա դեպքում մեծ փորձանք չկար— հիվանդը սիֆիլիս ուներ և առհասարակ հարկավոր եր նրան բժշկել, իսկ յեթե նա սիֆիլիս չունենա՞ր, յեթե սիֆիլիսոտը հիվանդանա դայլուկով, պարիազով, եկզեմայով, քոռով և այլն, և, նրա արյան շիճուկը հետազոտելիս, տա դրական պատասխան, միթե՝ պիտք գայլուկը, քոռը և այլն ընդունեք սի-

Փիլիսի նշան: Ուեակցիայի արդյունքների սը-  
խալ մեկնաբանումը կարող է միշտ ել սխալ  
յեզրակացություններ տալ:

Բացասական պատասխանը իրավունք չի  
տալիս բացասել նիֆիլիսը: Միշտ անհրա-  
ժեշտ ե մանրակրկիտ կերպով ուսումնասիրել  
հիվանդին, կրկնակի հետազոտության յեն-  
թարկել շիճուկը, մանավանդ յերբ հետա-  
զոտովողը մի ժամանակ հիվանդ ե յեղել սի-  
Փիլիսով: Վերջին դեպքում պետք ե նկատի  
առնել անամնեսը, հիվանդության յերկարա-  
տելությունը, կատարած բուժումը, իսկ յե-  
թե հիվանդը ընտանիք ունի, պարզել նրա  
կնոջ ու յերեխաների առողջության դրու-  
թյունը, իմանալ չե՞ն յեղել վիճումներ, մե-  
ռած ծննդած յերեխաներ, վաղաժամ մեռած  
յերեխաներ և այլն...

Հիվանդի կրկնակի հետազոտություննե-  
րը, նրա արյան, վողնուղեղի հեղուկի քննու-  
թյունը, գրգռիչ բուժման կուրսը և այս...  
այս բոլորը պետք ե ողտագործել: Յենթա-  
գրել և պնդել, վոր հիվանդը բուրուզին ա-  
ռողջացել ե, կարելի յե միայն այն ժամանակ,  
յերբ խնամքով կատարած բուժումից,  
արյան շիճուկն ու վողնուղեղի հեղուկը 1 և  
կես — 2 տարվա ընթացքում մի քանի անգամ  
հետազոտելուց հետո տալիս են կալուն բազա-  
սական արդյունք, և յերբ չկան վորհե ուեցի-  
դիմներ: Զեմ ցանկանում կրկնել ձեզ կոշտ  
շանկը շիճուկ բացասական փուլը, յերբ բա-

ցասական վասսերմանը չատ չուտ դառնում ե  
դրական — յես այդ դրել եմ ձեզ:

Դուք հարց եք տալիս՝ ունի արդյո՞ք  
պլյուսների թիվը վորեկ նշանակություն նա-  
խագուշակման համար:

Զեմ կարծում: Միևնույն շիճուկը, մա-  
նավանդ, յերբ ուեակցիան կատարում են գա-  
նազան լաբորատորիաներում, կարող ե տալ  
մերթ մեկ, մերթ յերկու, մերթ յերեք, մերթ  
• Ծրս պլյուս:

Պլյուսներից վոչ պետք ե հուսահատվել,  
վոչ ել փայտիայել իրեն մխիթարական հույ-  
սերով. վորոշ պայմաններում այստեղ ել խո-  
րամիտ մոտեցումը կարող ե վորոշ ուղղու-  
թյուն տալ բուժման: Յերբ հիվանդին բժշկե-  
լուց հետո չորս պլյուսը աստիճանաբար դառ-  
նում ե 3, հետո 2 և 1 պլյուս, այդ քիչ թե  
շատ ուրախացնում ե մեզ, մենք՝ ընդունում  
ենք, վոր բուժման ուղղությունը ճիշտ ե,  
զեղը ճիշտ ե ընտրված, թեպետ և ապահով-  
ված չենք անակընկալություններից — այ-  
սորվա 2 + մեկ չարաթից հետո կարող ե  
դառնալ 3 պլյուս կամ չորս: Բայց այդ այն  
ժամանակ, յերբ մեզ մոտ ե, յերբ մեզ լավ  
հայտնի յեն ուեակցիայի համար գործադրվող  
ուեպենաները, յերբ գիտենք ուեակցիան զնե-  
լու յեղանակն ու նրա ընթացքը, գիտենք ան-  
տիզենի քանակն ու հատկությունը և այլն:  
Բացի այդ, պետք ե ասել նաև, գիտենք մեր  
շիճուկաբանին, գիտենք, թե մեր լաբորատո-

բիայում պլյուսների այս կամ այն թվով ինչ-  
պիսի արդյունքներն են նշանակվում: Ինչպես  
դուք տեսնում եք, այս բոլորը վերջ ի վերջո  
վորոշվում են չափազանց անհատականորեն,  
մեկի յերեք պլյուսով նշանակվածը կարող է  
մյուսի յերկու պլյուսով նշանակվել:

Ուեակցիայի արդյունքները քննարկելիս,  
միշտ պետք է նկատի ունենալ, թե հետազոտ-  
վողը սիֆիլիսի վոր շրջանումն է դանվում,  
վերջին բուժումից հետո վորքան ժամանակ ե-  
անցել, ինչպիսի բուժում է յեղել: Սովորաբար,  
յերբ կամենում ենք վորոշել կատարած բուժ-  
ման արդյունքը, հիվանդի արյունը վերցնում  
ենք բուժումից հետո 5—6 շաբաթից վոյ շուտ,  
թողնելով հիվանդին այդ ժամանակի ընթաց-  
քում առանց բուժման: Բայց, իհարկե, նայած  
բժշկի դրած նպատակներին ու խնդիրներին,  
հետազոտության համար արյուն վերցնելու  
ժամանակը պետք է լինի տարբեր: Արտունո  
վերցնելու համար հիվանդը մեղ մոտ անոթի  
յի գալիս:

Կարդացեք, պրոֆ. Յու. Ա. Ֆինկեյշոնյան,  
սիֆիլիսի, վեներական և մաշկի հիվանդությունների շիճուկ-  
ախտորոշությունը և նրանց իմունաբուժությունը:

## XV. ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ. ՏԱԿՈՒՆՔԱՅԻՆ ՌԵԱԿՑԻԱՆԵՐ

Թամկագին ընկեր

Ես այսոր ցանկանում եմ շարունակել նա-  
խորդ նամակս, թեև փոքր ինչ յերկարեց նա:

Զե վոր հարցը Վասսերմանի ուեակցիայի մա-  
սին ե, մի հարց, վոր բժիշկների մեջ զանազան  
կարծիքներ ե առաջացնում: Կան բժիշկներ,  
վորոնք այն համարում են անթերի, նրանք այդ  
ուեակցիան աշխատանքի հենակետ են համա-  
րում, անառարկելիորեն վստահանում են, իսկ,  
ընդհակառակը, կան և այնպիսի բժիշկներ, վո-  
րոնք ընդունում են, վոր այդ ուեակցիան վոչ  
մի նոր բան չի մուծել բժշկականության մեջ,  
անվստահությամբ են վերաբերվում և արհա-  
մարհում են այն:

Մինչեւ որս ել վերջնականապես պարզա-  
բանված չե ուեակցիայի եյությունը: Սկզբում,  
յերբ Վասսերմանը, վորպես անտիգեն, գործ եր  
ածում նորածին սիֆիլիսուների լյարդը, վորն  
ահադին քանակությամբ սպիրոխետներ ե պա-  
ռունակում, բոլորն ել համարյա միաձայն ըն-  
դունում ենին ուեակցիայի սպեցիֆիկ հատկու-  
թյունը:

Այն որից, յերբ վորպես անտիգեն սկսե-  
ցին գործածել մարդու և կենդանիների զանա-  
զան գործարանները (նորմալ լյարդ, ծովա-  
խոզուկի սիրտ, յեղի սիրտ և այլն ու վերջա-  
պես մի շաբաթ «արհեստական» անտիգեններ —  
լեցիտին, խոլեստերին, լեղիաթթվի աղեր  
և այլն), այլև գժվար և ընդունել ուեակցիայի  
սպեցիֆիկ հատկությունը, կենսաբանական  
մտքով հասկացած, թեև, ինչպես գրել եմ ձեզ  
անցյալ նամակումս, ուեակցիան կլինիկայի և

մեր գործնական նպատակների համար համդեսանում ե սպեցիֆիկ:

Փորձերը ցույց են տվել, վոր անտիգենը ճարպանման նյութերին ե պատկանում, դրանից յենթադրում են, վոր կոմպլիմենտի կապումը, վորը տեղի յե ունենում վաստերմանի ռեակցիայում, պայմանավորվում ե մի կողմից անտիգենի ճարպանման նյութերով, մյուս կողմից սիֆիլիսոտների արյան մեջ գորշող ճարպանման նյութերով։ Սիֆիլիսոտների արյան մեջ ճարպանման նյութեր և դլորուլիններ գոյանում են նորմայից ավելի մեծ քանակությամբ։ բացի այդ նման նյութերը յենթարկվում են առանձին, գեռևս չպարզաբանված բրնությութերով, փոփոխությունների, իբրև հետեւանք այս բոլորի, պակասում ե նրանց կայունությունը, և նրանք ընդունակ են դառնում կազմել Փլոկուլյացիա, այսինքն շատ մանր քուլաներ։

Ինչպես տեսաք իմ դրածից, ռեակցիայի ցուցմունքները միշտ ել չեն համապատասխանում կլինիկայի տվյալներին։ Յերբեմն կլինիկան հաստատում ե սիֆիլիս, իսկ վաստերմանի ռեակցիան կարող ե տալ բացասական արդյունք և ընդհակառակը։ Այս բոլորը, իհարկե, «անհարմար» ե, մենք ներկայում ա չենք կարող հույս զնել, վոր լաբորատորիայի պատասխանը ամեն դեպքերում ել բացարձակապես համապատասխան կլինիկական տվյալներին։ Կա-

րելի յե բացասական պատասխան ստանալ յերրորդական ներվային և նույնիսկ, թեև վորպես բացառություն, յերկրորդական սիֆիլիսի ժամանակ՝ որինակ, այսպես ասած վաղ չարվորակ սիֆիլիսի ժամանակ (սիֆիլիս մալիգնա) հաճախ բացասական ե լինում, և այդ բացասական արդյունքին շատ հեղինակներ մի առանձին արժեք են տալիս։ Վերջապես ռեակցիայի գորեղությունը (+-ների թվի շատությունը) միշտ ել ցույց չի տալիս, թե հիվանդությունը ծանր ե։ Կարծ ասած, արյան (Վ.Ռ.) և ամբողջ որգանիզմի սիֆիլիսի մեջ միակերպություն չկա։ Այս բոլորը պարտավորեցնում ե բժշկին առանձնապես լրջորեն վերաբերվել ռեակցիայի արդյունքներին և աշխատել ամեն անդամ ըմբռնել կլինիկայի և լաբորատորիայի տարածայնությունները։ Մեկ անգամ ել եմ կրկնում — նայեցեք Վ. Ռ.-ին, վորպես սիֆիլիսի ախտանիշերից մեկին։ Ուրիշ տվյալների կապակցությամբ ռեակցիան վիթխարի հենակետ ե սիֆիլիսի ախտորոշության, նաև սպուշակման և բուժման համար։ Առանց այդ կապակցության ռեակցիան չի կարող ձեր ցանկալի ոգնությունը տալ։ Մի՞թե այդ բոլորից հետո պարզ չե, վոր այնքան ել հասարակ բան չե վաստերմանի ռեակցիայի արդյունքների բժբռնում, վոր դա անդամ անդրագետի համար հասկանալի խաչիկներն ու գծերը չե, և վոր ռեակցիայի խելացի մեկնարանումը մատչելի յե սիֆիլիսի կլինիկային ծանոթ հմուտ

բժշկին: Նույնակես պարզ է, վոր այդ ռեակտ ցիան մեր գործնական աշխատանքից դուրս ձգել չենք կարող և չպետք է ձգենք: Դիտության այս արժեքավոր նվաճումը մենք պետք է պահպանենք, ըմբռնենք և չնորհալի կերպով սդումնենք մեր հիվանդի բարորության համար:

Այս բանը համարյա բոլորն են հասկացել — և վոչ մի սիֆիլիսաբան առանց նրա չի կարող մնալ. վեներաբանական վոչ մի խոշոր հիմնարկություն չի կարող իր նպատակների համար չունենալ լաբորատորիա, վորտեղ կարելի լինի կատարել վասսերմանյան ռեակցիան:

Ֆրանսիական բժիշկ Սաբուրոն մոտ որերս այսպես ե արտահայտվել՝ «Վասսերմանյան ռեակցիան անհրաժեշտ ե սիֆիլիսաբանի համար այնպես, ինչպես կողմնացույցը ծովագնացի համար. ճիշտ ե՞մի ժամանակ նավորդում ելին առանց կողմնացույցի, բայց նրա գյուտից հետո հազիվ գտնվի մի քաջ, վոր համարձակվի առանց կողմնացույցի բաց ծով դուրս բերել իր նավը»:

Շատ փորձեր են կատարվել վասսերմանի բարդ ու դժվար ռեակցիան հասարակացնելու համար. վաղուց են արդեն յերեվան յեկել հեշտացնելու և ավելի մատչելի դարձնելու այսպես կոչված տակունքի ռեակցիաներ՝ քույավորում, պղտորում և ողակային ռեակցիաների թիվը չափազանց մեծ է: Թվարկելու

կարիք չկա — նրանցից մի քանիսն այժմ միայն պատմական հետաքրքրություն են ներկայացնում, մի քանիսը հիմնավորապես մոռացված են, հարյուրներով նկարագրածներից միայն աննշան մասն ե ստացել քաղաքացիական երավունք և ընդհանուր լայն կիրառում:

Նման ռեակցիաներից գլխավորներն են՝ Զակս-Գեորգիյի, Մեյնիկեյի, Կանի, Բրուկի, Հեխտի, Դոյլդայի և այլն:

Տակունքային այս կամ այն ռեակցիայի ողետքական լինելը զործնականում վորոշվում է նրանով, թե վորքան այդ ռեակցիայի ցուցմունքները զուգադիպում են Վասսերմանի կասսիկ ռեակցիայի ցուցմունքներին: Հիշած ռեակցիաներից Զակս-Գեորգիյի և Կանի ռեակցիաները զուգադիպման շատ մեծ տոկոս են տալիս — 94—98 տոկոս և այդպիսով իրոք կարող են ոգտագործվել ամենորյա գործնական աշխատանքի մեջ: Այս կամ այն ռեակցիան զանազան յերկրներում տարբեր ժողովրդականություն ե վայելում: Ամերիկայում շատ ժողովրդականացած ե կանի ռեակցիան, մինչդեռ Գերմանիայում նա վոչ մի համակրություն չունի, Ֆրանսիայում սիրում են Հեխտի, Դեռմուլիյերի և Վերնի ռեակցիաները: Մեր Միավորյան մեջ ավելի ընդունված ե Զակս-Գեօրգիյի և Մեյնիկեյի ռեակցիաները, չնորհիվ նրանց հատուկ յեղանակի և տված լավ արդյունքների:

Սովորաբար տակունքային մեկ ռեակցիա-

յով չեն բավականանում, այլ կատարում են մի քանիսը, և նրանք բոլորն ել կարծես լրացնում են Վասսերմանի ռեակցիան: Այսպիսով Վ. Ռ. Հետ միաժամանակ կատարում են և Կանի, Զակս Գեորգիյի, Մեյնիկեյի և այլոց ռեակցիաները: Այս բոլորը հանդիսանում են սիֆիլիոի այս պիս կոչված կոմպլեկսային շիճուկախտորոշման մշակման անդամները, իսկ զլխավոր զերը պատկանում է Վասսերմանի ռեակցիային: Մեծ լաբորատորիաներում այս կոմպլեկսային շիճուկախտորոշումով են ոգտվում: Յերբ Վասսերմանի և տակունքային այս կամ այն ռեակցիայի արդյունքները զուգադիպում են, իհարկե, նրանց մեկնաբանումը սովորաբար տարակուսանքներ չեն հարուցում: Բայց ի՞նչպես վերաբերվել վոչ համաձայնեցված արդյունքներին, որինակի համար ասած, յերբ Վ. Ռ. տվել ե բացասական իսկ տակունքայինը դրական պատասխան կամ ընդհակառակը:

Սովորաբար, նախազդուշությունից դըրդ ված մենք նման զետքերում ալելի չուտ դրականն ենք ընդունում, քան բացասականը, բայց, իհարկե, վոչ միշտ:

Այստեղ ևս ամեն ինչ մնում է այսպես, ինչպես ասել ենք կլինիկայի, կրկնակի ռեակցիանների, լաբորատորային տեխնիկական թերությունների և այլոց վերաբերյալ:

Վերն-ի սիֆիլիմետրիան, վորի մասին

դուք հարց եք տալիս, նույնպես պատկանում է տակունքային ռեակցիաներին, ինչպես և, ի գեղ ասած, Վասսերմանյան ռեակցիան, բայց նա պահանջում է բարդ ու թանկարժեք ապարատներ և, մեր կարծիքով, վոչ մի առավել լություն չունի Վասսերմանի ռեակցիայի համեմատությամբ: Սիֆիլիմետրիան ինքնին, վորը ներկայացնում է սիֆիլիսի վարակի ռուբեղության չափելու շիճուկաբանական մեթոդը, վորը, նրա հեղինակի կարծիքով, պետք է դուրս մղեր սիֆիլիսի զուտ կլինիկական ախորոշումը և դառնար սիֆիլիսի բուժման զլխավոր չափանիշը — դժվար թե, արդի մեր ունեցած գիտելիքների հիման վրա, ի վիճակի մինի ընդունելություն ձեռք բերել:

Մեր ինստիտուտի նախկին շիճուկաբան բժ. Ա. Վ. Ալանակյանի կատարած աշխատանքըն ակնհայտ կերպով ապացուցեց այդ:

Իբրև յեղբափակում, ասեմ ևս մի քանի խոսք սիֆիլիսի ախտորոշման մասին վոչ թե արյան շիճուկի, այլ արյան ձեփարանական տարրերի այս կամ այն փոփոխության հետազոտության հիման վրա: Շատ վաղուց ե նկարագրած արյան ձեփարանական տարրերի զանազան փոփոխությունները, բայց այդ բոլորը սիֆիլիսին հատուկ վոչ մի սպեցիֆիկ բան չեն ներկայացնում և այդ պատճառով ել չեյին կարող ախտորոշական նշան ընդունվել:

1929 թ. մերթին, Թրանսուխական հորս հեղինակներ՝ Գուենը, Բիանվենուն, Դոլան և Պե-

ըեն հրապարակեցին՝ իբր թե սիֆիլիսոտների արյունը հակասիֆիլիսային դեղեր (բիսմուտ, սնդիկ, նեռ) կամ հենց սեփական արյուն (ինքնարյունաբուժում) սրսկելուց հետո յուրահատուկ ռեակցիա յէ տալիս:

Հեղինակները մտանանչում են՝ յեթե սիֆիլիսոտին սրսկեն իր արյունից 5.խոր.սանտիմ., կամ վերը հիշած դեղերից սովորական բուժիչ քանակով, յեյլոցիտների թիվը 2 ժամից հետո կավելանա, մինչդեռ առողջ մարդունո, ընդհակառակը, կը պակասի:

Այդ վաղ դերւելիոցիտոզը հեղինակները համարում են սիֆիլիսի համար սպեցիֆիկ, այդ պատճառով ել կարող է ունենալ ախտորոշման համար կարևոր նշանակություն :

Գուշենի ռեակցիան շատ հասարակ է. հարկավոր է հաշվել քննվողի անոթի ժամանակ մատից վերցրած արյուն մի կաթիլի մեջ յեղած յեյլոցիտների քանակը, հետո սոսկեւ, գրանից 2 ժամ հետո յերկրորդ անգամ հաշվել յեյլոցիտները, ստացած թվերի համեմատությունը ցույց կտա, վոր յեմոցիտները կամ սպերմատի: Ամենազման դեպքում գերիելիոցիտոզ է, հեղինակների կարծիքով, դա կնյանակի, վոր հիվանդն ունի սիֆիլիս, պակասելու դեպքում — յեյլոպակներ, կնյանակի, վոր քննության յենթարկվողը առողջ է:

Զեղ չհոդնեցնելու համար յերկար կանգ չեմ առնում այս ռեակցիայի վրա: Մեր ինս-

տիտուտում այդ ուղղությամբ աշխատանք եկատարված, և այդ աշխատանքի արդյունքները տպագրված են «Բժշկականությունը ի սպաս սոց-շինարարության» հանդիսի 1933 թ. 3-րդ գրքում: Կարդացեք, յեթե հետաքրքրվում եք այդ հարցով:

## XVI. ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ ԲՆԱՄԻՆ ՍԻՖԻԼԻՏԻ ԾԱԳՍԱՆ ՄԱՍԻՆ

Թանկագին ընկեր

Զեր շոշափած թերեւտիկ խնդիրները գործ նականում չափազանց հետաքրքրական են և կրակոր: Ճիշտ և այդ խնդիրները, կարծես, մի կողմ եյին դրած, իբր այնպիսի խնդիրներ, վորոնք ուսումնասիրություն և քննարկում չեյին պաահնջում, և թվում եր, թե դրանք արդեն ըստացել են իրենց վերջնական լուծումը: Դըժույն սպիրոխետի գյուտից և Վասսերմանյան ռեակցիայի հրապարակումից հետո բնածին սիֆիլիսի վերաբերյալ հաստատվեց վերը չիշած դրությունը և հաստատվեց, ինչպես շատերն եյին կարծում, ամուր կերպով: Սակայն հետազոտությունները ցույց տվեցին, վոր դեռ ևս կան շատ անորոշ կետեր ու հակասություններ: Խոսքս բնածին սիֆիլիսի ախտածազման մասին ե:

Նախ և առաջ զուք հարց եք տալիս, ինչու յենք բնածին ասում և վոչ ժառանգական սիֆիլիս, և դնում եք մի շարք հարցեր: Վորքան

Հնարքոր ե, կաշխատեմ, ուժերիս ներածին չափ, բացատրել ձեզ իմ այսորվա նամակում: Ինչպես ձեզ հայտնի յե, «Ժառանդական» սիֆիլիսի ծագման վերաբերյալ կա յերկու ընկերած ընկերած ին: Ըստ առաջերիս՝ ընկերած և սաղմային: Ըստ առաջերիս՝ սաղմային թիջները—ձուն և ջին թեորիայի—սաղմային թիջները—ձուն և սերմնակները—վարակ չեն պարունակում, և սիֆիլիսի յե ունենում ընկերածի արյան վարակումը տեղի յե ունենում ընկերածի արյան շրջանառության միջոցով, ըեղմնավորելուց հետո, պտղի միջարգանդային կյանքի ընթացքում:

Վարակման նման ձեր ապացուումած ե, առ վարակիչ հիվանդությունների, ի թիվս վորոց վարակիչ մեխանիզմը: Այժմ վիճելի չե, այդ և սիֆիլիսի վերաբերյալ: Այժմ վիճելի չե, այդ ինքան հնքյան հասկանալի յե, վոր վարակիչներն ըստ ինքյան հասկանալի յե, վոր մայրն ման մեխանիզմը զահանջում ե, վոր մայրն անպատճառ հիվանդ ինի. Հիվանդ հայրը մոռը վարակում է սիֆիլիսով. մայրը ընկերածի արյան շրջանառության միջոցով վարակը տալիս ե պտղին:

Ըստ յերկրորդ թեորիայի—սաղմայինի—վարակը սաղմային թիջների ձմեռ կամ սեռմաղարակը սաղմային թիջների միաժամանակ: Այդ նյակի հետ անցնում ե միաժամանակ: Այդ գեղքում վորակը հանդիսանում ե սաղմային: Այս գեղքում, զուցե կարելի ինի ասել «Ժառանդական» սիֆիլիս, թեև կան մեծ առարկություններ: Զե վոր աւտեղ խոսքո վառակման մասին ե և վոչ ընածին պահասությունների, ուրինակ՝ մարդու ոնդունակությունների, հոգեկան վորեւ առանձնահատկության ե առհասա-

րակ այն նշանների, վորոնք տեղի ունեն հենց բնութագործան ժամանակ և հանդիսանում են խրոմատինի Փունկցիայի արդյունք: Հավանական ե, հիշում եք, վոր վարակման ժամանակ խրոմատինը վոչ մի մասնակցություն չի ունենում, վոչ մի դեր չի խաղում, այդ պատճառով ել ճիշտ չի լինի անվանել վորեւ վարակիչ հիվանդություն ժառանդական: Ահա թե ինչու մենք առում ենք ընածին և վոչ ժառանդական սիֆիլիս:

Ինչպես առացի, սիֆիլիսի ընկերքային յեղանակով տարափոխումը մորից պտղին այժմ վիճելի չե, յերկրորդ յեղանակի, սաղմային ձեռվ տարափոխման մասին, այդ չի կարելի ասել:

Հին հեղինակներ՝ Թիկորը, Ռոլեն, Մորիակը, Ֆուրնիյե և շատ ուրիշները հնարավորելին համարում հորից, սերմի միջոցով ծագութ ընածին սիֆիլիսը:

Բոմեկոլիսի և Պրոֆեյի որենքները, վորոնք ներկայումս մեզ համար բոլորովին կորցրել են իրենց արթեքը, հնարավոր ելին համարում այդ և այն ժամանակին համապատասխան (1840–1865). գիտական բացատրություն ելին տալիս այդ հնարավորությանը: Բոմեկոլիսի որենքն պսում եր՝ մայրը կարող է ծնել սիֆիլիսով հիվանդ յերեխա, իսկ ինքը կարող է մնալ վոչ միայն առողջ, այսինքն՝ առանց սիֆիլիսի վորեւ նշանի, այլ մինչև անդամ և վարակամերժ, նա այլեվս ընդու-

նակ չե վարակվելու սիֆիլիսով։ Պրոֆեյթ որ  
ենքն ասում եր հակառակը՝ սիֆիլիսով հիվանդ  
կինը կարող ե ծնել առողջ յերեխա, վորը մը-  
նում ե հանդեպ սիֆիլիսի վարակամերժ, նա  
այլեվս չի վարակվի սիֆիլիսով, և այդ ախտ-  
անընդունակությունը մնում ե նրա մեջ դոնե  
մինչև սեռական հասունությունը։

Այս յերկու որենքը ներկայումս հերքված  
են. Վասսերմանի ոեակցիան առանց բացառու-  
թյան հայտաբերում ե այսպես կոչված «կոլես  
յան» մայրերի գաղտնի մնացած սիֆիլիսը  
(ըստ Ռիտչելի 96 տոկոսով), ըստ Զենդերի  
99 տոկոսով, իսկ ըստ Բրուկի, Ենդելմանի և  
այլոց հարյուր տոկոսով. այդ ոեակցիան  
հայտաբերում ե սիֆիլիս այն յերեխաների  
մեջ, վորոնք ծնվել են սիֆիլիսով հիվանդ մո-  
րից և, յերեւյթներ չունենալու պատճառով,  
թվում եյին առողջ։

Բայց նայած մոր վարակման յերկարա-  
տեսության, կարող են ծնվել և առողջ յերեխա-  
ներ։ Վորքան շատ ժամանակ ե անցել մոր վար-  
ակման և բեղմնավորության միջև, այնքան  
շատ հնարավոր ե առողջ յերեխայի ծնունդը։  
Մորից պտղին բնածին սիֆիլիսի տարափոխ-  
ման զորությունը ժամանակի ընթացքում աս-  
տիճանարար թուլանում ե։ Դա ե հենց կասովի  
չի դեռևս 1878 թվին առաջարկած տիրահանչակ  
որենքը (Ֆելլդմանը իրավացի հետեւյալ գնա-  
հատությունն ե տալիս - այդ վոչ թե որենք  
ե, այլ ավելի շուտ նկրտում-տեսնդենցիա)։

Այսպիսով վարակամերժման մասին վոչ մի  
խոսք լինել չի կարող, սիֆիլիսով հիվանդ յե-  
րեխա ծնող մայրը, ինչպես և սիֆիլիսով հի-  
վանդ մորից ծնված յերեխան սիֆիլիսով չեն  
վարակվում այն պատճառով միայն, վոր նը-  
րանք ունեն գաղտնի սիֆիլիս, այսինքն՝ ար-  
տաքուստ չարտահայտվող սիֆիլիս։

Ահա թե ինչու արդի ուսմունքը ընդունում  
ե բնածին սիֆիլիսի միայն մեկ տեսակը՝ բնա-  
տուր (կոնդենիտալ) սիֆիլիս։

Վենայի ականավոր սիֆիլիսաբան Մաց-  
նառերը 1903 թ. Վենայի բժշկական ընկեր.  
կայացած նիստին, հենվելով իր նշանավոր  
աշխատություների վրա, վորոնք հաստատում  
են բնածին սիֆիլիսի տարափոխման միայն ըն-  
կերքային ձեռ, հետեւյալ խոսքերով ձեվակեր-  
պեց այդ. «չկա բնածին սիֆիլիսով հիվանդ  
յերեխա առանց սիֆիլիսոտ մոր»։

Չնայած ընկերքային թեորիան, կարծես,  
ամուր տեղ ե դրավել բժիշկների հասկացողու-  
թյան մեջ և միակ ընդունելին եր համարվում,  
այնուամենայնիվ սաղմային թեորիայի աննր-  
շան թվով կողմնակիցները շարունակում են  
պնդել, վոր սիֆիլիսը կարող ե անցնել և ասղ-  
մային ձեռով։ Այդ թեորիայի նշանավոր պաշտ-  
պաններն են Վենայի անվանի (սիֆիլիսաբան  
և հայտնի մանկաբան Ֆինդերը և Հոշինդերը։

Մի քանի տարի առաջ վերջին հեղինակը  
մի գիրք եր լույս ընծայել, վորտեղ նա դարձ-  
յալ պաշտպանում ե սաղմային թեորիան, վորը

պաշտպանել եր մի քանի տասնյակ տարի առջ:

Սաղմային թեորիայի ապացույցները, վորոնցով նրանք աշխատում են համոզել իրենց հակառակորդներին, և ընկերքային թեորիան ընդունողների առարկությունները շատ հետաքրքրական են և ուսուցանելի, ուստի մի քանի բան կպատմեմ ձեզ նրանց մասին։ Իհարքանի բան կարող սպառիչ կերպով գրել ձեզ կե, յես չեմ կարող սպառիչ կերպով գրել ձեզ այդ յերկու թեորիայի բոլոր թեր ու դեմ տվյալները - դա չափազանց բարդ հարց ե, բայց կաշխատեմ ասել ամենաելականը։ Սաղմային թեորիայի կարևոր հետակետներն են բոմեթերի որենքի այսպես կոչված բացառություններն այն են, թյունները։ Այդ բացառություններն այն են, վոր սիֆիլիսոտ յերեխա ծնող մայրը, վորն այդ որենքի համաձայն պետք ե մնար առողջ, և նույնիսկ վարակամերժ, յերբեմն վարակվում է թարմ սիֆիլիսով։ Սաղմային թեորիայի կողմնակիցները դրանից յեղրակացնում են, կողմնակիցները առողջ են, իսկ սիֆիլիսով հիվանդ յեղապես առողջ են, իսկ սիֆիլիսով հիվանդ յերեխայի ծնունդը բացատրում են նրանով, վոր վարակն անցել ե հոր սերմի միջոցով։ Այդ վարակն անցել ե հոր սերմի միջոցով։ Այդ եպատճառը, բացատրում են նրանք, վոր նըման մայրերի մի մասի Վ.Ռ. Համառըեն բացասական ելինում, և դրանք իրենց ամբողջ կանքի ընթացքում սիֆիլիսի նշան չեն ունենում։ Բայց սաղմային թեորիայի կողմնակիցների այդ սաղմային թեորիայի կողմնակիցները, շարունակելով իրենց պնդումները, առում են՝ «Կոլեսյան» մայրերի մեծ մասի դրական վաստերմանը ամենալին չի ծխտում սաղմային թեորիան՝ հարկավոր չե, վոր մայրը վարակվի «սովորական» ձեռվ, վարակը կարող ե անցնել նրան և վարակված ձվից, այսինքն՝ այն ձեռվ, վորը Ֆրանսիացիք անվանում են՝ հետաղարձ հարված։ Կարճ ասած, յերբ մայրը առողջ ե, իսկ յերեխան հիվանդ, գրանով բացատրվում ե այն, վոր ձվի վարակումը հորից ե, այսինքն վարակն անցել ե սաղմային ձեռվ։ Սաղմային թեորիայի կողմնակիցները, իբրև ապացույց բերում են հանրածանոթ փաստեր, այն դեպքերը, վորոնք նկարագրել են ֆուրնիեն, Զելենեվը, Տերլեցկին, և այլն։

Ֆուրնիեն նկարագրել ե սիֆիլիսով հիվանդ յերեք բժշկի հիվանդության պատմությունը. այդ հիվանդ բժիշկները շատ խնամքով հետևել են իրենց ամուսիններին և սիֆիլիսի վոչ մի նշան նրանց մեջ չեն հայտաբերել, բայց յերեխանները հիվանդ ելին ծնվում։ Պրոֆ. Զելենեվը նկարագրել ե «Ժառանգական» սիֆիլիսոտի կողջ դեպք, յերբ կինը ծնել ե սիֆիլիսով հիվանդ յերեխա ու ինքը վարակվել ե իր յերեխային կերպակրելուց (կրծքի պտկի կոշտ շանկը)։

Տերլեցկին նկարագրել ե մի դեպք, յերբ մայրը ծնել ե հիվանդ յերեխա, վորի Վ.Ռ. յերկար ժամանակ և համառ կերպով դրական

Եր, մինչդեռ մոր ուեակցիան ամբողջ ժամանակ լացակացասական եր:

Այս կինը ամուսնանում ե յերկրորդ ամ-  
գամ առողջ տղամարդու հետ և ծնում նրանից  
բոլորովին առողջ յերեխա, վորի վասսերմանը  
բացասական եր:

բացասական եր:

Վորպեսզի հետագայում այլևս չվերա-  
դառնանք պատճառաբանությունների այս կե-  
տին, միայն մի բան կասեմ, վոր բոլոր վերը  
նշած դեպքերը այնքան ել անթերի չեն, հի-  
վանդների ու առողջների մասին յեղած տեղե-  
կությունները ճիշտ չեն, և վոր այդ յերեսույթ-  
ներից մի քանիսը կարելի յե ընդունել և ա-  
ռանց սաղմային թեորիայի: Սաղմային թեո-  
րիայի պաշտպանների մյուս փաստարկումն  
այն ե, վոր անախտանիշ սիֆիլիս ունեցող կինը  
կարող ե ծնել առողջ յերեխա, յերբ դադունի  
սիֆիլիս ունեցող ամուսինը բժշկվում ե: Ըն-  
կերքի միջոցով սիֆիլիսի տարափոխման ժա-  
մանակ սիֆիլիսով հիվանդ յերեխա ծնող  
մայրը, անկախ նրանից, թե հայրը հի-  
վանդ ե կամ առողջ, պետք ե բացառապես  
ծնի հիվանդ յերեխաներ, վորոհետեւ ինքը հի-  
վանդ ե սիֆիլիսով: Մինչդեռ կան փաստեր,  
վոր ծնվել են առողջ յերեխաներ, յերբ բժշկ-  
վում եր միայն հայրը, իսկ մայրը չեր բժշկ-  
վում:

Նման տվյալների հիման վրա Հոշինդերը  
պնդում է, վոր «կոլեսյան» մայրերը միշտ ել  
հիփանդ չեն սիփիթիլիսով, վոր Վ. Ռ. սպեցիֆիկ չե

և այլն: Սյս կիաստարկմանը նրա հակառակորդ-ները շատ խելացի կերպով առաքելում են, վոր գժված ե զրականության մեջ գտնել անբասիր շատ գիտողություններ, յերբ միայն հոր բժրշկությունը նպաստավոր եր յերեխայի ծնվելուն, բացի այդ, աչքի առաջ չեն ունեցել այն ժամանակամիջոցը, վորը տեսել է մոր վարակման և բեղմնավորման միջև, իսկ դա կարող է կարելոր գործոն լինել, մի գործոն, վոր թուլացաւում սիֆիլիսային վարակի ուժը (Կաստովիչի որենքը): Բացի այդ սաղմային թեորիայի կողմնակիցները բերում են ևս մի շարք պատճառաբաննություններ, վորոնցից միայն մի քանիսը կը երեմ. ընդունում են, վոր սպիրոխետն ունի հատիկավոր փուլ (ընդունեմ ընկերքային թեորիայի կողմնակիցների առարկության՝ թե սպիրոխետը յերեք անդամ մեծ ե սերմնյակի գրեթիկից, ուստի նրա մեջ տեղավորվել չի կարող). մի քանի կենդանիների և թռչունների ձվի ըջիջներում գտել են սպիրոխետների թիվն ավելի շատ ե, քան մոր մասի մեջ մասի մեջ (մի հանգամանք, վորն իբր թե ցույց ե տալիս սպիրոխետների ուղղությունը պատճեց դեպի մայրը), հիվանդ յերեխաներից մոր վարակումը (Դյուրինգի, Ջլենովի և այլոց նկարագրած դեպքերը):

1926թվին Շվեյցարական մաշկաբան. ընկ. Համադումարում սաղմային թեորիայի պաշտպան դուրս յեկավ Գոլեն, վորը ընկերքային

թեորիայի կողմնակիցների բոլոր հիմնական առարկությունների դեմ աշխատում եր սպառիչ բացատրություններ տալ և հաստատել նույնիսկ այն տարրերությունը, վոր կա ընկերքային և սաղմային ձեռվ տարափոխած բընածին սիֆիլիսի կլինիկական պատկերի մեջ. նրա ասելով իրը թե սովորական ձեռվ վարակված մայրը սակավ գեպքերում և վաղաժամ ծընունդ ունենում և մեծ մասամբ պտուղը հասցնում ե մինչև վերջ, իսկ պտղից վարակված հղությունը միշտ վերջանում ե վիժումով, չնայած մոր առողջ տեսքին:

Յես դիտմամբ բերեցի այս դատողությունները, վորպեսզի դուք չկարծեք, թե այս ամբողջ վեճի մեջ ցանկություն ունեմ պաշտպանել այս կամ այն թեորիան, վեճի բռնվածների համառությունը կամ նրանց յերեակայությունները: Անտարակույս սաղմային թեորիայի կողմնակիցները չառ տվյալներ ունեն, վորոնք իրավունք են տալիս նրանց պնդելու և հաստատելու հորից ծագած բնածին սիֆիլիսը: Անտարակույս և և այն, վոր նրանց բոլոր ապացույցները հիմնավորապես և լիակատար հեղինակավոր կերպով ջախջախում են ընկերքային թեորիայի կողմնակիցները: Բայց այս վերջինը վերջնական չե և վոչ ել բացարձակ: Վերը նշած Գոլեն այսպես ձեվակերպեց իր յեղբակակման խոսքը. «Ներկայումս հորից անցնող սիֆիլիսի բացարձակ ապացույցներ

չկան, կլինիկայում կատարած գիտողությունները «ընդունում են» դրա հնարավորությունը: Դրա պատճառն այն է, վոր մինչեւ այժմ մենք լավ չենալու կերպությունը կենսաբանաչափ չենք ուսումնասիրել սպիրոխետի կենսաբանությունը և դեռևս անկարող ենք կլինիկակայից ստացած փաստերը ճիշտ և բացարձակ կերպով հաստատել լարորատորիայով: Քանի վոր այդ չկա, սաղմային թեորիայի հարցը վերջնականապես լուծել չի կարելի»:

Գործնական բժիշկն ի՞նչ յեղբակացություն կարող է հանել սրանից:

Կարդացեք ուսուերեն յենդով:

Գրոֆ. Ն. Ռ. Եփսոն, Բասմին սիֆիլիսի տարտիւման միանիդը (Յերեխաների գեներական հիվանդ ձեռարկ բժ. չեների և ուսասողների համար-պր. Բունակը խթադրություն Պրոֆ. Ի. Շապուրա Յերեխաների սիֆիլիսը: Պրեվ. Գոց. Մ. Մ. Բայց Բասմին սրբալլս, 1927 թ.:

## • XVII. ՇԱՐՈՒԽԱԿՈՒԹՅՈՒՆ

Թանկագին ընկեր

Գործնական աեսակետից պետք ե նշել այն, վոր, ինչպես ցույց են տալիս տվյալները, մայրերի ահագին մեծամասնությունը 80—95 առկոսը (Մեյեր, Շահլ, Լեյ), վորոնք բացահայտ սիֆիլիսոտ յերեխաներ են ծնում, հիվանդ են անախտանիշ, գաղտնի սիֆիլիսով: Միայն վոքրամասնությունն ունի արտահայտված սիֆիլիս: Յերբեմն թե արյան և թե վողնուղեղի հեղուկի Վ. Ռ. կարող ե տալ բա-

յասական արդյունք, իսկ ինքը կինը կտրող և  
ծնել հիվանդ յերեխու կամ, շատ տարրիներ հե-  
տո, հիվանդանալ ուշ ներվային սիֆիլիսով։  
Եթերեմն կնոջ կլինիկական և շիճուկաբանա-  
կան տեսակետից անախտանիշ ընթացող սի-  
ֆիլիսի միակ նշանն է հանդիսանում հիվանդ  
սերունդը՝ վիժումները, վաղաժամ ծնունդ-  
ները, յերեխաների վաղահաս մահը և այլն։

Ակնհայտ ե, պետք ե յենթաղըել, վոր կը-  
նո՞ց, մահավանդ հղի, սիֆիլիսի յուրահատուկ  
ընթացքն ունի ինչ վոր առանձին, գեռես  
վերջնականապես չպարզաբանված պայման-  
ներ։

Սիֆիլիսի նման ընթացքը միշտ ել չի կա-  
րելի բացատրել նրանով, վոր չեն նկատել  
կոչտ շանկրը, վոր հիվանդները կամ բժիշկը  
աչքաթող են արել տկարությունը։ Կարելի յե,  
այստեղ գեր ե խողում նաև այն՝ թե ինչ ձեռ-  
վում ե անցել սպիրոխետը հետոցի կամ ար-  
գանդի լորձաթաղանթից։ Այսուեղ սպիրո-  
խետի բազմանալու համար պարմանները վատ  
են, և, զուցե հակամարմինների առատ և արակ  
զուգման շնորհիմ, սիֆիլիսի ընթացքն ըն-  
դունում է ամելի թեթև բնուրթ, և հիվանդու-  
թյունը յետեր ժամանակ անախտանիշ, և ըն-  
թանում։ Քանի վոր սիֆիլիսի տարափոխումը  
հորից չի առաջուղական, մենք աետք ե անմի-  
ջեւ ընդունենք ընկերային ձեվր և ընտծին  
սիֆիլիսի ախտածաղմանը պետք ե նայենք։

վոր զես սիֆիլիսային սովորական վարակման,  
անցած ընկերքի արյան շրջանառության մի-  
ջոցով հիվանդ մորից պտղին։

Պտղի ախտահարության աստիճանը կա-  
խում ունի մոր ախտահարության աստիճանից  
և յերկարատելվությունից։ յերկրորդական  
հրանքի սկզբում սովորաբար ծնվում են հի-  
վանդ յերեխաներ, ավելի ուշ—ավելի հաճախ  
են առողջ ծնվում, իսկ յերրորդական շրջա-  
նում ավելի ևս հաճախ են առողջ ծնվում։

Հետո պետք ե հիշել, վոր մինչեւ ընկերքի  
արյան շրջանառության կանոնավորվելը, այ-  
սինքն՝ հղիության առաջին յերեք ամսվա ըն-  
թացքում, սպիրոխետներ սաղմի մեջ չեն լի-  
նում։

Այս և սոտորեկ բերածս տվյալներից յերե-  
կում ե, թե ինչպես պետք ե վերաբերվի բը-  
ժիշկը սիֆիլիսով հիվանդ տղամարդուն և կր-  
նողը ընածին սիֆիլիսի կանխման նպատակով։

1. Յուրաքանչյուր հղի կին պետք ե ման-  
րակրկիտ քննության յենթարկվի սիֆիլիսի  
վերաբերյալ (հղի կանանդ կոնսուլտացիա)։  
Պետք ե կատարել թե կլինիկական և թե շի-  
ճուկաբանական հետազոտություն և այն ել  
շատ մանրակրկիտ կերպով։ Մի շարք հեղի-  
շատ մանրակրկիտ կերպով։ Մի շարք հեղի-  
նակներ (Ֆորդից և այլն) նկարագրել են մայ-  
ուկան ընկերքի մեջ դուծ սպիրոխետներ,  
բական ընկերքի մեջ դուծ սպիրոխետներ,  
յերբ արյան Վ. Ռ. յեղել ե բացասական։ Նր-  
ան հետազոտությունները պետք ե կատարեն  
վորակյալ մասնագետները։

2) Յերբ հղի կինն ունի սիֆիլիս, անհրաժեշտ է յեռանդուն կերպով բժշկել նրան (մասնավանդ առաջին 3—4 ամիսը) բոլոր հակասիֆիլիսային դեղերով — նեո, բիսմուտ, սրնդիկ, յոդ—և բուժումը կատարել ամբողջ հղիության ընթացքում:

3) Սիֆիլիսով հիվանդ յերեխային պետք է կերակրի մայրը, վորովհետև, յեթե հիվանդ է յերեխան, ուրեմն հիվանդ է և մայրը. այսպես պետք է վարվել, յերբ յերեխան ծնվել են բնածին սիֆիլիսի յերեվույթներով. նույնպես պետք է վարվել այն ժամանակ, յերբ վոչ մայրը, վոչ ել յերեխան սիֆիլիսի նշաններ չունեն: Յեթե մոտ ապագայում յերեխայի վրա յերեվան գան բնածին սիֆիլիսի նշաններ, դրանք մոր համար վտանգավոր չեն, վորովհետեւ դա ապացույց է, վոր մայրն ինքն ել և սիֆիլիսով հիվանդ, ուստի և կերակրելուց նա վարակվել չի կարող:

4) Յեթե մայրը հիվանդ է, իսկ յերեխան առողջ (առանց յերեվույթների, Վ. Ռ. բազասկան եւ այլն), կերակրելու հարցն ամեն անգամ պետք է լուծել, նայած հանգամանքներին (մոր վարակման յերկարատեփությունո, նշաբուժումը, շիճուկաբանական նշանները և այլն): Հիվանդ մորից առողջ յերեխաների վարակման դեպքեր բազմից նկարագրել են Ֆինդերը, Դյուրինգը, Զլենովը, Գալսունդը, Վան-Դելլերը և այլն...

5) Քանի վոր բնածին սիֆիլիսոտի հիվան-

դության նշանները հայտաբերվում են ծնվելուց հետո, մեծ մասամբ շաբաթից մինչև 2 կես ամիս, անհրաժեշտ է այդ ժամանակամիջոցում ուշադրությամբ հսկել սիֆիլիսով հիվանդ կամ այդ մտքով կասկածելի մայրերի յերեխանների վրա (մոռւր ընդունելիս և այլն):

6) Բնածին սիֆիլիսի կանխման հարցում, բացի բուժումից նշանակություն ունի և սիֆիլիսով հիվանդների ամուսնանալու ժամանակը: Բազմից ձեզ ասած իմ խոսքերից պարզ եւ վոր սիֆիլիսով հիվանդները վարակումից եւ վորքան ուշ տան սերունդ, այնքան լավ է սերունդի համար: Բայց այդ, նրանց բուժումը գերակշռող դեր է խաղում: Առաջին տեղը պատկանում է այրի (տղամարդու) բուժմանը (ինչպես կ կնոջ, յեթե նա վարակվել եւ մինչեւ ամուսնությունը): Բուժումը պետք է լինի յերկար ու յեռանդուն և պետք է տեսի այնքան, վոր վերջնականապես բացասել սիֆիլիսի վարակելիությունը: Բնածին սիֆիլիսի կանխման համար անհրաժեշտ է հիմնավորապես բժշկել ծնողներին մինչև ամուսնությունը, ինչպես և վաղ ու յեռանդուն կերպով բժշկել հիվանդ հղի կնոջը: Բացի այդ, խիստ մեծ նշանակություն ունի ազգաբնակության բոլոր խավերի մեջ ունի ազգաբնակության ծավալուն աշկատարած սան-կանխիչ լայն ծավալուն աշկատանքը՝ հանրամատչելի գրականություն, խատանքը՝ հանրամատչելի գրականություն, միմնարկության մեջ կատարած այս աշխատանքը գրավել է մեծ թվով սիֆիլիսով հիվանդների վրա (մոռւր ընդունելիս և այլն):

վանդ հղի կանանց և, չնորհիվ բուժման, շառ  
կյանքեր են փրկել:

Յեղափակման համար թույլ տվեք մի  
քանի թվեր բերեմ. Գերմանիայում, ըստ Ցալ-  
պերտի, կրծքի յերեխաների մեջ սիֆիլիսը պա-  
տահում է 2—4 տոկոս, Համբուրգի վորք յե-  
րեխաների մեջ համառ է 4,1 տոկոսի. Հյու-  
սիսային Ամերիկայում բնածին սիֆիլիսը  
կազմում է 3,3 տոկոս (Շուրշիլ, Ոստեն).  
Ֆրանսիայում, Մարֆանի վորոշմամբ, տոկո-  
սը շատ մեծ է. Փարիզում կոնսուլտացիա այ-  
ցելող յերեխաներից 16 տոկոսը ունի սիֆիլիսի  
բացահայտ նշաններ, այդքան ել դադանի սի-  
ֆիլիս ունեն:

Մեր Միության մեջ, ըստ Սպերանսկու,  
Յելլցինայի, Դրոշեմկու, Գայլպերինի ու ի-  
սակի և այլոց տվյալների, բնածին սիֆիլիսու  
ների տոկոսը տատանվում է զանազան տեղե-  
րում 0,4-ից (Լենինգրադ) — 5,5 տոկ. (Մոսկ-  
վայի մարզը) և մինչեւ 10 տոկոսը այն յերե-  
խաների մեջ, վորոնք ցուցակագրված են դիս-  
պանսերներում:

Ահա մի քանի այլ թվեր. Ռունդեն յեն-  
թաղրում է, վոր բոլոր վիճումների և վաղա-  
ժամ ծնունդների 53 տոկոսն ընկնում է սիֆիլի-  
սին: Վինկելը կարծում է, վոր սիֆիլիսունե-  
րի յերեխաների 60 տոկոսը մեռնում են նախ-  
քան ծնվելը. Կաստովիչի կարծիքով, այդ տո-

կոսը հայտառար է 80-ի, իսկ Ռիշինգի կարծի-  
քով՝ 91-ի (Ռայց):

### XVIII. ՄՐՖԻԼԻՍՈՎ ԿՐԿՆԱՎԱՐԱԿՄԱՆ ՅԵՎ ՎԵՐԱ- ՎԱՐԱԿՄԱՆ ՍԱՍԻՆ

Թանգագին ընկեր

Կրկնավարակման (ռեխնֆեկցիա) և վերա-  
վարակման (սուպերինֆեկցիա) մասին քիչ  
բան ունեմ ասելու ձեզ — ժամանակակից դա-  
սպերֆերում դրանց մասին քիչ թե շատ ման-  
րամասնորեն դրած է. Խոսենք հիմնականի  
մասին: Այս յերկու դրությունը շաղկապված  
են սիֆիլիսի վարակամերժման (իմմունիտետ)  
հարցի հետ: Դուք գիտեք — ներկայումս վա-  
րակամերժում մենք չենք ընդունում: Սիֆիլի-  
սով հիվանդացածը վարակամերժում ձեռք չի  
բերում, և Ռիկորի հին կանոնը, թե սիֆիլիսով  
յերկու անգամ չեն հիվանդանում, արդեն  
չերքված ե:

Սիֆիլիսից բժշկվածը ապահովված չե,  
վոր նա նորից չի վարակվի, նույնիսկ և յեր-  
րորդ անգամ: Հին սիֆիլիսաբանները նկարա-  
գրել են նման դեպքեր, իսկ ժամանակակից-  
ներն ավելի շատ:

Սիֆիլիսով կրկնակի վարակման դեպ-  
քեր առանձնապես շատ են հրապարակված  
սալվարսանի գյուղից և աբորտիվ բուժման  
մեթոդի կիրառումից հետո: Հիվանդի առաջին  
սիֆիլիսից առողջացումից հետո սիֆի-  
լիֆիլիսից առողջացումից հետո սիֆի-

կրկնավարակում — ռեինֆեկցիա: Ռեինֆեկ-  
ցիան մի կողմից հաստատում ե, վոր սիֆիլի-  
սըն ընդհանրապես լիովին բժշկվել ե, իսկ  
մյուս կողմից — վոր սիֆիլիսը վարակամեր-  
ժում չի տալիս, ինչպես մենք տեսնում ենք մի  
քանի ուրիշ վարակիչ հիվանդությունների  
դեպքում — բծավոր տիֆ, քութեց, կարմը-  
րուկ, ծաղիկ և այլն:

Ինչպես ասացի, կրկնավարակման շատ  
դեպքեր են նկարագրված: Թվարկել նրանց հը-  
նարավոր չե, պետք ել չե: Մանրամասնորեն  
ուսումնասիրելով այդ դեպքերը, պետք ե նը-  
րանց ուղիղ կեսը, յեթե վոչ ավելին, դեն ձգել  
— նկարագրած բոլոր դեպքերն ել իսկական,  
անտարակույս կրկնավարակումներ չեն: Դա  
բացատրվում ե նրանով, վոր կրկնավարակման  
հետ միասին կարող ե, ինչպես այդ ձգրիտ ա-  
սկացուցված ե, լինել նաև նոր վարակման ու-  
րիշ տեսակը — վերավարակում (սուպերին-  
ֆեկցիա), այսինքն՝ սիֆիլիսով հիվանդ որ-  
դանիզմը, դեռևս բոլորովին չաղատված սի-  
ֆիլիսային վարակից, կարող ե դարձյալ դրա-  
կան կերպով հակազդել դժգույն սպիրոխետի  
նորից ներս թափանցելուն:

Հին հեղինակներ՝ Բերենսպուրդը, Պֆայ-  
ցյան Անտանունը, Ռոլլեն, Մորիկան, Դյուրին-  
դը և այլն, յենթագրում ելին, վոր կոչտ շանկ-  
րի յերեվալուց հետո նոր շանկրի պատվառ-  
տումը բացարձակապես կամ համարյա բա-  
ցարձակապես անհնար ե: Բայց դեռևս Ֆուր-

նիյեն ընդունում եր, վոր կոչտ շանկրով հի-  
վանդների մեկ տոկոսը կարող են կրկին անդամ  
վարակվել և այդպիսով հին շանկրի հետ միա-  
սին ունենալ նաև նորը:

Շատ սիֆիլիսարաններ (Քիրատը և ուրիշ-  
ները) պարզաբանել են իրենց աշխատություն-  
ներում, վոր կոչտ շանկրի յերեվալուց հետո  
մինչեվ 11—14 որ դեռևս կարելի յե դրական  
արդյունք ստանալ, յեթե կատարեն սեփական  
վարակի ինքնաստվաստում, իսկ նրանց հա-  
ջորդող հեղինակները հաստատեցին, վոր բա-  
ցառիկ դեպքերում պատվաստումը հնարավոր  
ե և մինչեվ 31-րդ որը:

Պատվաստումը հնարավոր ե սիֆիլիսի և  
հաջորդ շրջաններում, յեթե սիֆիլիսոտին  
պատվաստել յերկրորդ շրջանի սիֆիլիս, նա  
հակազդում ե յերկրորդական յերեվույթներով  
— պապուլայով, շիթով, յեթե յերրորդ շրո-  
ջանի բլթակով (պրոգրեսսիվ պարալիպի  
և վողնուղեղի չորուկի դեպքում, խնդիրը քիչ  
այլ ձեվ ե բնդունում): Այս հին փորձեցր ներ-  
կայումս կենդանիների վրա (վորոշ առանձնա-  
հատկություններով) փորձնական ձեվով հաս-  
տատված են:

Այսպիսով յերբ դրական արդյունք ե ըս-  
տադվում պատվաստումից (կրկնակի մարակ-  
ման դեպքում), միշտ ել տի կարեւի մեկնարա-  
ներ, վոր կրկնավարակում ե, առ կարող ե պա-  
տահել, վոր տեղի ունի վերավարակում այ-

սինքն՝ որդանիզմի մեջ մտել ե սիՓէլիսային  
նոր վարակ հին վարակի ներկայությամբ:

Իսկ կրկնավարակում, ինչպես ասացի,  
ընդունում ենք միայն այն ժամանակ, յերբ  
առաջին վարակման հետք ու մնացորդ չկա,  
յերբ հիվանդն առողացջել ե իր նախկին սիփի-  
լիսից վերջնականապես: Այստեղ պեսք ե հի-  
շեցնել, վոր, յերբեմն նախկին կոչտ շանկրի  
տեղում շատ ժամանակ անց, կարող ե քոյանալ  
նոր կոշտագում (շանկր ուեղու — վերադարձած  
շանկր) և վոր նման վերադարձած շանկրը կա-  
րող ձևանալ վորպես թե կրկնավարակում և  
թե վերավարակում: Վերջապես նախկին շան-  
կրի տեղում սիփիլիսը կարող ե տար պապու-  
լայի նման ուեցիդիվ (մենառեցիդիվ — մոնո-  
ուեցիդիվ) և այլն:

Այս բոյորը դժվարացնում ե իսկական  
կրկնավարակում հաստատելու, ահա թե ինչու-  
ինչպես ասացի, գրականության մեջ շատ նր-  
կարագրած դեպքեր, ուշադրությամ ու ուսում-  
նասիրությունից հետո, դեն ձգվեցին: Նկարա-  
գրած յերեվութները բացատրվում են նրա-  
նով, վոր սիփիլիսի դեպքում, ինչպես այդ  
յերեվում ե նրա ահտաբանությունից, վարա-  
կամերժման հետ միասին տեղի ունի և ախտ-  
ընդունելիություն: Սիփիլիսի զառողացումը  
ընորոշվում ե այդ յերկու յերեվութների միա-  
տեղ առկայություն, բնդ վորում մերթ մեկն  
ե գերակշռում, մերթ մուտք: Հիմանության  
վորոշ փուլերում առաջին տեղը բռնում ե ախտ-

ընդունելիությունը, մի այլ փուլերում վարա-  
կամերժումը: Որինակ՝ հիվանդի յերկրորդա-  
կան սիփիլիսի գաղտնի փուլում գերակշռում  
ե վարակամերժումը, իսկ ախտընդունելիու-  
թյունը թույլ ե, բայց յերրորդական սիփի-  
լիսի ժամանակ ախտընդունելիությունը վո-  
րոշ չափով բարձրացած ե. ի միջի այլոց դրա-  
նով ե բացատրվում այն, վոր յերկրորդական  
զրջանի յերեւութները մակերեսային են, իսկ  
յերրորդականի — խորը և ծանր:

Վերտվարակման դեպքում, նոր վարակի  
ներս մտնելուն զանազան որդանիզմներ տար-  
բեր են հակազդում: Լինիկական յերևույթ-  
ներն ել չափազանց բազմազան են լինում: Այդ  
ուսակցիան շատ զանազան աստիճանների ար-  
տահայտություններ ե ունենում: Յերբեմն գո-  
յանում և իսկական կոչտ շանկր, վորը, կարծես,  
հենց առաջին անգամն ե դուրս գալիս առողջի  
վրա և վորից հանու առաջանում են սիփիլիսի  
հաջորդ նշանները, յերբեմն յերեվույթները,  
կարծես, աբորտիվ բնույթ են ստանում, իսկ  
յերբեմն ել նրանք նմանվում են մաշկի սովո-  
րական ալլերգիկ յերեւույթներին:

Իհարկե, չպետք ե յենթադրել, վոր սիփի-  
լիսութը, ամեն անդամ նորից վարակվելիս,  
պետք ե հակազդի այդ վարակմանը տեսանելի  
նշաններով: Ամենեվին վոչ: Սովորաբար նա  
դրան չի հակազդում, և այդ վիճակը կոչվում  
ե աներգիկ. մինչդեռ վերավարակման յերե-

վույթներ ունեցող վիճակը կոչվում է ալեր-  
դիկ:

Հույսով եմ, վոր այս ասածից յերեվում  
ե, թե յերեմն վորքան հեշտ ե վերավարակ-  
ման յերեվույթներն ընդունել կրկնավարակ-  
ման տեղ, և սիֆիլիսի հին վարակի ներկայու-  
թյունը որդանիզմի մեջ ընդունել վորպես նոր  
վարակի մուծում:

Շատ հեղինակներ ներկայումս մշակել են  
այնպիսի պայմաններ, վորոնց ներկայության  
դեպքում միայն կարելի յե անկասկածելի հա-  
մարել կրկնավարակումը:

Պրոֆ. Պ. Ս. Գրիգորյավի ձեռնարկի մեջ  
բերած են այդ պայմանները. ահա նրանք.

1. Խոցը տեղավորված ե առաջին վարակ-  
ման շանկրից ավելի հեռու, ուրիշ տեղում.

2. տեղի ունի նոր զարդացած առաջնակի  
սիֆիլոմի կրկնիկական տիպիկ պատկեր.

3. դժգույն սպիրոխետի առկայությունը.

4. սկզբում Վասներմանի ռեակցիան ունի  
բացասական արդյունք, վորը յերկրորդական  
դադանի շրջանի յերկրորդ կիսին փոխվում ե  
դրականի.

5. ռւզեկտից թարմ բուրոյի զարգացումը.  
6. առաջին վարակումը հաստատուած է,  
անցյալում կատարված ե հիմնավոր բուժում  
և Վասներմանի ռեակցիան կայուն բացասա-  
կան է յեղել.

7. ռեցիդիվ բնույթ կրող ցաների բացա-  
կայությունը:

Ինչպես տեսնում եք պահանջները  
խիստ են: Իհարկե, նրանց կարելի յե ա-  
վելացնել և մի շարք ուրիշները, որինակ՝ վա-  
րակման աղբյուրի ստուգումը, ռեցիդիվների  
յերկար ժամանակ բացակայությունը և այլն:

Կրկնավարակումն ընդունելով պարմաննե-  
րի պահանջները վորքան ել խիստ լինեն, (իսկ  
այդ պայմանները պետք ե վորոշակի և ճշոր-  
տորեն դրսեվորեն, թե հիվանդն իր նախկին ա-  
ռաջնակի վարակումից վերջնականապես բժըշկ  
վել), վերավարակման և կրկնավարակման  
յերեվույթների միջեվ ճիշտ ու խիստ սահման  
դել անկարելի յե : Քանի վոր բացարձակ  
ճիշտ մաթեմատիկական չափ չկա վորոշելու  
հիվանդի առողջացումը, առայժմ, ինչպես ա-  
սում ե Տրուֆֆին, գժվար ե ճիշտ վորոյել՝  
վորտեղ ե վերջանում վերավարակումը և վոր-  
տեղ սկսվում կրկնավարակումը: Պետք ե յեն-  
թաղուել, վոր առ խնդիրները կարող ե լուծել  
վորձնական սիֆիլիսաբանությունը:

## XIX. ԱՆՁԱԿԱՆ ՆԱԽԱԶԳՈՒՇՈՒԹՅՈՒՆ

Թանկագին ընկեր

Պակաս էարեւոր խնդիր չե անձնական նա-  
խազգուշությունը վեներական հիվանդու-  
թյունների ժամանակ: Յուրաքանչյուր վենե-  
րաբան նույնիսկ, կասեմ յես, յուրաքանչյուր  
բժիշկ պարաւագոր ե ծանոթ լինել դրան: Անց-  
յալում այդ խնդրին շատ բժիշկների փափկա-  
նկատ վերաբերմունքը պետք ե դեն ձգել և ըզ-

գաստ դիտել իրերը։ Կա արդյո՞ք սիՓիլիսով  
սեռական վարակում։ Կա։ Ունի արդյո՞ք բժշ-  
կականությունը վորեւ նախազգուշացան մի-  
ջոցներ։ Ունի։ Ապա ինչու չկիրառել այդպի-  
սիք և ինչու զեռևս մի քանի բժիշկներ, ինչ-  
պես իրենք են արտահայտվում, այդ միջոցնե-  
րըն առաջարկելիս, մի տեսակ հանհարմարու-  
թյուն են զգում»։

Խորհրդային յուրաքանչյուր բժշիկ համար  
պարզ ե, վոր, իհարկե, չի կարելի կենտրոնա-  
նալ անհատական նախազգուշության վրա և  
յենթաղրել, թե նման միջոցառումներով  
մասսաների վարակումը կարելի յէ կանխել։  
Հարկավոր են սոցիալ-տնտեսական, սանլու-  
սավորական միջոցառումներ, անհրաժեշտ  
և մասսաների սեռական դաստիարակություն,  
վերացնել հին ժառանգություն — ուսուկու-  
թյունը, հարբեցողությունը և այլն։ Միե-  
նույն ժամանակ մենք ձեռքից չպետք ե թող-  
նենք անգամ ամենաննշան միջոցառում, վոր  
կարող ե հնարավորություն տալ պաշտպանե-  
լու վարակումից։ Մեր նպատակն ե՝ առող-  
ջացնել մասսաները։ Յեթե այդ դործում ան-  
հատական նախազգուշությունն ոգնում ե,  
մենք պարտավոր ենք ոգտվել նրանից։ Պետք  
ե գեն ձգել գործի համար վնասակար փափ-  
կանկատ վերաբերմունքը գեպի նախաղգու-  
շությունը։ Այս ե իմ կարծիքը։ Կան տեղեկու-  
թյուններ, վոր մեր թվականից 150 տարի ա-  
ռաջ գոյություն ունեին առանձին արհեստա-

կան թաղանթներ վարակումից տղամարդ-  
կանց սլաշտպանության համար։ 16-րդ դա-  
րում ֆալլոպիուսը յերկար ժամանակ զբաղ-  
ված եր առանձին տոպրակներ հնարելու գա-  
ղափարով։ այդ տոպրակները ներկայումս կոչ-  
վում են կոնդոմ կամ պրեզերվատիվ (Պրիկոն-  
սկի), իսկ կայումելի ոճանակն առաջարկել ե  
Մեչնիկովը 1903 թ., կապիկներին սիՓիլիսի  
պատվաստման վորձեր կատարելիս։ Դուք  
տեսնում եք, այս հարցը նոր չե։

Նախազգուշական բոլոր միջոցառումները  
պետք ե իրագործել սեռական հարաբերությու-  
նից առաջ և հետո։ Այստեղ մենք խոսելու յենք  
գերազանցապես սիՓիլիսի վարակման դեմ մի-  
ջոցառումների մասին։ Այս միջոցները գործա-  
դրում ե կամ ինքը հիվանդը, կամ, ավելի լավ  
ե, բժշկը կամ ընդհանրապես բուժպերսոնա-  
լը։ Վերջին դեպքում ավելի լավ ե գործադրել  
այդպիսիք վորոն հիմնարկություններում, վո-  
րոնք կոչվում են պրոՓիլակտորիում, նախա-  
զգուշական կայան, անձնական նախազգուշու-  
թյան առանձնասենյակ և այլն։ Մեծ քաղաք-  
ներում կան նման հիմնարկներ, վորոնք գոր-  
ծում են թե ցերեկը և թե գիշերը։ Մեզ մոտ  
դրանք գոյություն ունեն մի փորեկ բուժական  
հիմնարկության կից։ Այս հիմնարկության  
կարող ե դիմել նա, ով ունեցել ե կասկածելի  
սեռական մերձեցում։ այստեղ վարակումը  
կանխելու համար կատարում են այս կամ այն  
դործողությունները։ Նման պրոՓիլակտորի-  
ական 167

ում (դիշերային), հավանական ե դիտեք, կա և  
մեր վենիստիտուտներում։ Տարաբախտաբար  
պետք ե արձանագրենք, վոր հաճախորդները  
շատ քիչ են։ Աղջաբնակության անշարժու-  
թյունը շատ մեծ է, և նա, չնայած մեր տա-  
րած պրոպագանդին, դեռ չի ընտելացել նման  
հիմնարկության։

Ի՞նչ պետք ե անել պրոֆիլակտորիումին դի-  
մող այցելու տղամարդուն և կնոջու։ Յես այս-  
տեղ կը երեմ թուապսեյի կայանի բժ։ Բեր-  
նյեյի գործողությունների մանրամասն նկա-  
րագրությունը, վոր շատ լավ գրած է։ Վորոշ  
պրոֆիլակտորիումներում գործ են ածում մի-  
զուկի մոմ, մյուսում արոտարդու են սրսկում,  
մի այլ տեսում Նետերի ոծանակը՝ այս բո-  
լորու մերջիվեռջո հարեւոր չե։

Միջոպառումների յերկու սխեմա կա—տղա-  
մարդկանց և կանանու։

Տղամարդկանց համար

1. Հաճախորդին առաջարկում են մի-  
զել։

2. Հաճախորդը պետք ե խնամքով լվանա-  
ձեռքերը սալունով և իջեցնի վարտիկն ու ան-  
դրավարտիկը ծնկներից ցածր։

3. Հետ քաշել այցելվի թլիպը։ Ջրով թրջել  
սեռական գործարանները, շեքը, փորի ստորին  
մասը և աղդրերի ներսի մակերեվութը։

4. Լավ սապոնել վերը թվարկած տեղերը  
տաք ջրով լվանալ և սրբել սրբիչով, վորն այլ-  
եկս չգործածել ու ձգել թասի մեջ։

5. Վերը հիշած տեղերը խնամքով չորաց-  
նելուց հետո, յերեք բոպե լավանալ սուլեմի  
լուծույթով 1:1000։

6. Բուժակը, նախորոք ձեռքերը մաքրե-  
լուց հետո, լվանում ե միզուկի առաջին մա-  
սը, ըստ Փանեյի, մարդանային կալիոնի  
1:5000 լուծույթով։

7. Բուժակը դրանից հետո սրսկում ե նա-  
վաճե փոսիկի մեջ 5 տոկ. պլրոտարդովից 2—3  
կաթիլ, վոր հաճախորդը պետք ե պահի 3—5  
բոպե, փակելով միզուկի անցքը մատով։

8. Հաճախորդին բուժակը տալիս ե 5—8 գը-  
րամ կալոմելի ոծանակ, վոր պետք ե նա քսի  
իր անդամի ծեփուկին, սանձին, թլիպի ներսի  
մակերեւույթին, անդամի մաշկին, ածուկների  
մարդին, շեքին և ազդրերի ներսի մակերեւույ-  
թին, ոծանակի քսելը պետք ե տևի 5—8 բոպե։  
Յեթե անկարելի յե թլիպը հետ տանել, ան-  
հրաժեշտ ե ոծանակի մի կտոր դնել թլիպի  
և ծեփուկի միջեւ ու տրորելով թլիպի մա-  
կերեվույթը, աշխատել ոծանակը լավ տարա-  
ծել թլիպի տոպրակում։

9. Սեռական գործարանները փաթաթել  
մոմած թղթով կամ փաթաթանով, հավանա-  
կան վարակված սպիտակեղենի հետ շփումից  
խուսափելու համար։

10. Առաջարկել հաճախորդին, տուն գրնա-  
լուն պես փոխել սպիտակեղենը և գոնե 4—5 ժամ  
չմիզել։

## Կանանց համար

1. Առաջարկել միզել:
2. Լվանալ արտաքին սեռական գործարանները տաք ջրով և սապոնով հետո լվանալ հեշտոցը մարդանային կալիոնի 1:5000 լուծույթով:
3. Ռետինի փոքր սրսկիչով սրսկել միզուկի մեջ պրոտարգովի 5 տոկոսանոց լուծույթ:
4. Տալ 7-8 գրամ կալոմելի ոճանակ, վորը նա 5-8 րոպե քսելու յե սեռական գործարանների մաշկին, սեռական ծալքերին, շեքին, փոքրի ստորին մասերին և աղբերի ներսի մակերեսույթին:
5. Այցելուն ծածկում ե սեռական գործարանները մոմած թղթով կամ փաթաթանով. առաջարկվում ե նրան 3-4 ժամ չմիզել և չուտ փոխել սպիտակեղենը:

Այս կետերը ուշադրությամբ կարդալուց հետո, դուք, իհարկե, պարզ կերպով կտարբերեք, թե այս միջոցառումներից, վորոնք են գոնորըելից պաշտպանելու համար և վորոնք՝ սիֆիլիսից: Իհարկե, չպետք ե զատել նրանց: Պետք ե միաժամանակ կատարել այս միջոցառումները, վորոնք կարող են պաշտպանել յերկու հիվանդությունից:

Պրոֆիլակտորիումում հարցաթերթ են լրացնում, և այցելուին տալիս են մեկ բացիկ, խնդրելով հաղորդել հետագա իր դրության մասին, թե հիվանդացել ե արդյոք նա վենախտով, թե մնացել առողջ:

Իհարկե, այս բոլոր միջոցառումները նախազդուշության լիովին յերաշխիք տալ չեն կարող: Բացի այդ անպատճե կերպով հաճախակի քսել կալոմելի ոծանակ կամ սրսկել միզուկի մեջ այս կամ այն լուծույթներ չի կարելի. այս բոլորը կարող են գրգռել մաշկը, ինչպես և լորձաթաղանթները. բայց վոր այս միջոցառումների չնորհիվ, վորոշ տոկոսը պաշտպանվում ե, դա ցույց ե տալիս վիճակագրությունը: Ողեսայում 11091 այցելուներից ցուցակագրված են հիվանդության տաս դեպք, Սմոլենսկում 572 այցելուներից՝ հիվանդության յերկու դեպք, Թուապսեյում 284-ից 1 դեպք:

Յեթե նույնիսկ յենթադրենք, վոր հաճախորդների վորոշ մասը հիվանդության մասին չի հայտնել պրոֆիլակտորիումին, թվերը շարժյալ ցուցագրական են:

Վորոշ յերաշխիք են տալիս նաև սեռական հարաբերությունից առաջ ձեռնարկած միջոցները. հեշտոցի մեջ դնել ախտահանիչ լուծույթներով թղթած սպունդ, պրեզերվատիվ գործածել, սեռական մասերին ոծանակներ քսել: Կոնդոմները, յեթե չպատռվեն սեռական գործողության ժամանակ, գոնորըելից ավելի լավ են պաշտպանում (հասկանալի յե, թե ինչու), քան սիֆիլիսից, բայց նրանց հաճախակի գործածումը որդանիզմի վրա առանց հետքի չի մնում:

Յեթե սեռական մերձեցում ունեցողներից 161

մեկն ու մեկի սիֆիլիսի կասկած կա, պետք է,  
ինչպես մի անդամ՝ դրել եմ ձեզ, առող-  
ջին տալ ընդունելու համար արսով կամ կատա-  
րել նեոյի միջյերակային սովորական ներար-  
կում, այսինքն՝ սկսել կանխիչ բուժում։

Պրոֆ. Պ. Վ. Նիկոյլսկին առաջարկում ե-  
ճետևյալ պայմաններում նշանակել կանխիչ  
բուժումը։ 1) յերբ սեռական մերձեցում ունե-  
ցողների վրա կան տեղական վարակիչ յերե-  
վույթներ։ 2) յերբ մաշկի կամ լորձաթաղան-  
թի վրա կան քերծվածքներ կամ պլուզածք-  
ներ և այլ վիրավորված տեղեր, վորոնք կա-  
րող են վարակի համար մուտքի դռան դեռ  
խաղալ։ 3) յերբ հավանական վարակումից  
մինչև բուժման սկիզբը կարճ ժամանակ ե ան-  
ցել, 2 շաբաթից վոչ ավելի։

Իհարկե, բացի այդ անհրաժեշտ ե յերկար  
ժամանակով պահել հիվանդին հսկողության  
տակ – հետազոտել, արյունը քննել և այլն։

Պրոֆ. Նիկոյլսկին այդ ժամկետը 2 ամրի  
յե հաշվում։

Սիֆիլիսից անձնական նախադրուշության  
մասին ասածիցս պարզ է, վոր բոլոր այս ձեռ-  
նարկումները վարակումից լիովին յերաշխիք  
տալ չեն կարող, և բոլոր դեպքերում ել նրանց  
կիրառել, իհարկե, չի կարելի։ Վեներական բո-  
լոր հիվանդություններից սիֆիլիսը «ամենից  
քիչ ե վեներական» – ձեզ շատ լավ հայտնի յի-  
վոր սիֆիլիսը շատ սակավ դեպքերում ե անց-

նում միմիայն սեռական հարաբերության  
ժամանակ. ուստի և այս ձեռնարկումներին  
պետք ե նայել, վորպես «կիսամիջոցների», ա-  
մենևին մեծ հույսեր չդնելով նրանց վրա, բայց  
և բացարձակ կերպով չարհամարհել, ինչպես  
այդ անում են մի քանիսը։

Եւղրափակման համար գրում եմ ձեզ ոծա-  
նակների գեղատոմսերը։

Կալոմել	33,0
Լանոլին ամենամաքուրը	57,0
Վաղելին սպիտ. ամեր.	10,0

Մեչնիկովի ոնծակ	
Հիգր-բիլիուր. կորրոզիվ.	0,3
Նատր. խլորատ.	1,0
Տրագականթ	2,1
Ամիլ	4,0
Ժերատին	0,7
Գլիցերին	17,0
Ալկոհոլ	25,0
Ակվ. դեստիլ.	50,0

Նեյտր-Զիլբերի ոծանակ։

XX. ՅԵՐԵՎԱՆԻ ՄԱՇԿԱՎԵՆԵՐԱԲԱՆԱԿԱՆ  
ԻՆՍԻՏՈՒՏԻ ԵԲՍՊԵԴԻՑԻԱՆԵՐԸ  
Թանկագին ընկեր

1930 թ. ամրանը մեր ինստիտուտի աշխա-  
տակիցների հետ միասին եքսպեդիցիա կադ-  
րակերպեցինք դրսեվորելու Հայաստանի զա-  
նազան շրջանների սիֆիլիսն ու վեներական

ախտերը։ Եկսպեղիցիային մասնակցում եյին քսան մարդ։ աշխատանքը տեվեց չորսից հինգ ամիս։ հետազոտության յենթարկվեցին հինգ մըջան՝ Նոր-Բայազեթի, Դարալազյազի, Վերին և Ստորին Աղբարայի և Համամլիի։ Եքսպեղիցիան քառասուն հինգ գյուղ եր մտել, վորտեղ հետազոտության եր յենթարկել տնից տուն և ընտանիքներում, միջին հաշվով 37 հազար մարդ։ այս թիվը կազմում ե ընդհանուր քանակի 60 տոկոսը։

Ինչպես տեսնում եք, թվերը բավականին խոշոր են, մեր մասշտաբով վեցըրած։ ազգարնակության հետազոտմամբ բավականաչափ ընդրկումը հիմք ե տալիս եկսպեղիցիայի ձեռք բերած արդյունքները համարել իսկական դըրությանը մոտ։ Եքսպեղիցիան ի՞նչ հայտնաբերեց։ Նա դրսեվորեց հիվանդության այս կամ այն փուլի 459 մարդ, վորոնցից գաղտնի 423 և արտահայտված ընդամենը 36։ Յեթե ցանկանանք տոկոսների վեր ածել, այդ թիվը կտա մոտավորապես 1 տոկոս գաղտնի և 0,1 տոկոս արտահայտված սիֆիլիս։

Թվերը չափազանց ցածր են, ավելի ցածր քան մեր Միության ուրիշ շրջաններում ու մարզերում, վորոնք մեզ հետ միանման պայմաններում են գտնվում։ Թույլ տվելի համեմատել։ Հեղափոխությունից առաջ մեր մեջ Պորֆիրիեվի վիճակագրական տվյալներն ենին ամենաժողովրդականը։ Բայց այդ տվյալ-

ների, հինգ տարվա ընթացքում (1902-1907 թ.) նախկին Յեվրոպական Ռուսաստանում յուրաքանչյուր տաս հազար բնակչին գյուղերում ընկնում եր 70,5 սիֆիլիսոտ, իսկ քաղաքներում 215,3։ Հետո սիֆիլիսը, շատանալով իմպերիալիստական և քաղաքացիական պատերազմի ժամանակ, հասավ իր ամենաբարձր կետին։ Ճիշտ տեղեկություններ այդ ժամանակամիջոցի համար չկան, բայց սիֆիլիսի աճը իմպերիալիստական պատերազմի ժամանակ տագնապ առաջացրեց, և 1917 թ. հուլիսին հրավիրվեց բժիշկների Պիրովովյան հատուկ համագումար՝ սիֆիլիսոտների ավելի ու ավելի աճող զանդշածի դեմ պայքարի միջոցներ ճարելու համար։ Դուք գիտեք, վոր ցարական Ռուսաստանում ծայրամասերի ազգաբնակության մեջ սիֆիլիսը չափազանց ուժեղ եր տարածված։

Հոկտեմբերից շատ քիչ հետո զանազան վեն խմբերի հայտաբերած սիֆիլիսը զանազան տեղերում հասնում եր 5-25 և ել ավելի տոկոսների, իսկ գյուղական ազգաբնակության մեջ արտահայտված սիֆիլիսի տոկոսը մոտավորպես մեկ և կես տոկոսի յեր հասնում։

Բերում եմ մի քանի թվեր պատկերացման համար։

Ազգաբնակության սիֆիլիսոտների տոկոսը	Կարմիկների մարզում՝	14,5
Կազմակատանում		12,0

Այրաթիայում	11,0
Շորիյում (Տոմսկի քղան)	15,0
Դաղստանում	9,8
Ուշթիայում	10,0
Չեչնյայում	25,0
Բուրյատ-Մոնղոլիայում	42,0
Ռյալիստ կղզում (Բայկալի արեգ- մըտյան ափի մոտ)	61

(Բրոններ)

Հաշտարիսանում, Տաշքենդում, Ռուսու-  
գում Դոնի վրա և ուրիշ տեղերում, աղջաբնա-  
կության առանձին խմբերի հետազոտումը 25,  
26 և 27 թվերին նույնպես սիՓիլիսոտների ա-  
վելի բարձր % ե տվել, քան Հայաստանում:  
Ճիշտ ե այն, վոր Հաջորդ տարիներում սի-  
Փիլիսոտների թիվը սկսել ե խիստ ընկնել:  
Վեն, դիսպաններների և վեն, կայանների ցան-  
ցը, ան-լուսավորական հակայական աշխա-  
տանքը, բուժման ամենառաջինաւ մեթոդ-  
ների կիրառումը ե այն, և այն — այս բո-  
լորը ցույց տվեցին իրենց գորեղ ներգործու-  
թյունը, և խորհրդացին թժշկականությունը  
10—15 տարվա ընթացքում սիՓիլիսի դեմ  
սիՓիլիսի գործում արել ե անհամեմատ ա-  
վելի շատ, քան արված ե Ռուսաստանում, սի-  
Փիլիսի յերեվալու որից սկսած ամբողջ ժա-  
մանակամիջոցում (յենթաղրում են, վոր սի-  
Փիլիսը Ռուսաստան ե բերված 15-րդ դարի  
վերջին). բայց և այնպես, ինչպես ասացի,  
սիՓիլիսը ուրիշ տեղերում, ինչպես տեսնում

ենք վիճակադրական տեղեկություններից,  
ավելի ուժեղ ե տարածված, քան այդ գտանք  
մենք Հայաստանում:

Ինչո՞վ բացատրել մեր համեմատական  
բարորությունը:

Վոմանք արամագէիր են այդ բացատրելու  
մալարիայի ուժեղ տարածումով մեր մեջ:  
Երբ թե մալարիան սիՓիլիսի զարգացման  
համար անբարենպաստ պայմաններ ե ստեղ-  
ծում:

Դժվար ե համաձայնել դրան: Մենք շատ  
անցեր պիտենք, վորտեղ դաժան չափերի յե-  
հանում մալարիան և միենույն ժամանակ  
սիՓիլիսոտների թիվը շատ մեծ ե. Հաճախ  
միենույն հիվանդն ունենում ե յերկու հիվան-  
դությունը միասին. և, վերջապես, յեթե  
պատվաստած մալարիայով բուժումը բարե-  
նպաստ ե աղջում սիՓիլիսի ներվալին ուչ  
անսակներին, մենք գեռես վոչ մի դիտական-  
հիմնավոր տվյալներ չունենք, վոր ինքնա-  
րուղի մալարիան ես կարող ե նման աղջեցու-  
թյուն ունենալ սիՓիլիսի վաղ տեսակների վր-  
աս: Դրա մասին յես մի անդամ ել եմ գրել ձեզ,  
ուստի այլևս չեմ կրկնի:

Գուցե սիՓիլիսի աննշան տարածումը  
մեր մեջ կարելի լինի բացատրել հետազոտու-  
թյան ժամանակով: Յեվ իրոք վերջին տա-  
րիներս (1929—30 թվերին) սիՓիլիսի կորա-  
գիծը, վոր իմակերպիալիստական պատերազմից  
հետո խիստ բարձրացել եր, այժմ սկսել ե

Ընկնել դա ամենուրեք նկատված եւ ու արձանագրված:

Դժվար ե ընդունել և այդ յենթադրությունը: Հայաստանում սիֆիլիսը համեմատաբար շատ վաղուց չե ծաղած: Այս յերեվում է նրանից, վոր ուշ տեսակների քանակը աննշան է, բնածին սիֆիլիսով հիվանդների թիվը քիչ է, հետազոտված ազգաբնակության մեջ՝ որդանիղմի սնունդի սպեցիֆիկ բնույթի կրող խանգարումներ (դիստրոֆիա) չկան:

Այս բոլորը մեզ հիմք չի տալիս յենթադրելու, վոր սիֆիլիսը յերբեւ մեր մեջ շատ ե տարածված յեղել:

Սիֆիլիսի տարածման աննշան աստիճանը մեր մեջ մենք բացատրում ենք բացառապես սոցիալ-կենցաղային պայմաններով. մեր գյուղերի չափաղանց հեռու լինելը այն կենտրոններից, վորտեղ տարածված են յեղել պոռնը-կությունն ու վեն. հիվանդությունները, խորհրդայնացումից առաջ չեն յեղել խոչը արդյունաբերական գործարանային ու Փարբեկային շրջաններ, վորտեղ հենց կապիտալիստական յերկրներում զարգացած են ինում վեն հիվանդությունները, ազգաբնակության կրղութացած դրությունը, աղքաբտությունը. տեղական հահապետական ընտանիքան կենցաղը, յերկու սեռի փոխադարձ հարաբերության համեմատական մաքրությունը և այլն — առ սիֆիլիսի մեր մեջ աննշան տարածման

պատճառները: Այս տեսակետից սիֆիլիսից ավելի լավ ցուցանիշը գոնորեան է: Գյուղերում այդ համարյա չկա, դրանով հիվանդ են միայն այն միավորները, վորոնք յեղել են քաղաքներում և վորոնք չեն բժշկվել ժամանակին և մուծել են ընտանիքի մեջ:

1932 թ. ամրան նորից կազմակերպված եկամբեղիցիայի խմբերից մեկը մեկնեց զեպի բանվորական շրջան — Ղափան, վորտեղ հետազոտության յենթարկեց պղնձահանքերի 3500-ից ավելի բանվորներ: Հետազոտությունները չափազանց մանրակրկիտ եր, կատարված եր չափազանց մանրակրկիտ եր, կատարված եր արյան քննությունն ըստ վասսերմանի. հետազոտությունները ընդգրկել եր նաև մոտակա գյուղությունները: Ստացված արդերի ազգաբնակությունը: Ստացված արդյունքները նույնպես միավորական եյին-Ղափանի բանվորության մեջ սիֆիլիս համարյա չկա:

Շատերը նման բարորությունը ուրիշ կերպ են հասկացել: Յերբ մենք ասում եյինք, թե 1930 թ. եկամբեղիցիան դրսեորեց, վոր հետազոտված շրջանները բարեհաջող վիճակ ունեն, վոր մասսաների մեջ սիֆիլիսը քիչ ետարածված, վոր այն շրջանները, վորոնք տարիների ընթացքում սիֆիլիսոտի հոչակ եյին ընթացքում, ամենեվին այդպես չեն, այս մեր վայելում, ամենեվին այդպես չեն, այս մեր խոսքերից շատերը յեղբակացնում եյին, վոր մեր մեջ առհասարակ սիֆիլիս չկա:

Ճիշտ ե ընդհանուր մասսայի մեջ սիֆիլիսոտներ քիչ կան, բայց կան առանձին շրջան-

ներ և գյուղեր, վորոնք դեռ յերկար ժամանակ պետք է մնան վեր հսկողության տակ:

Լավ պատկերացնելու համար բերեմ հետեւալ որինակները. Ստորին Աղբաբայի շրջանը ընդհանուր առմամբ տվել է 1,9 տոկոս դաշտնի և արտահայտված սիֆիլիսոտներ (արտահայտված սիֆիլիսով միայն մի քանի մարդ). Դրանից մենք յեզրակացնում ենք, վոր ամբողջ ըրչանը չի կարելի հաշվել սիֆիլիսով բոնված, ինչպես այդ մինչև այժմ արել են: Բայց այդ ըրճանի Մարդարչուկ և Ղարաչանթա գյուղերում սիֆիլիսոտների թիվը բավականին մեծ է (Ղարաչանթայում — 5,3 տոկոս), ուստի և այդ գյուղերի հսկողությունը եկապեղիցիան հանձնեց Լենինականի վեն. Գիսպանսերին, վորին և հանձնված են բողոք հիվանդների ցուցակները, նշանակելով նրանց մեջ կատարած բռնժումը, հետազոտությունները և այլն:

Նույնը պետք է ասել և Դարալաղյաղի շրջանի մասին: Հետազոտված գյուղերի ազգարնակության սիֆիլիսը, ընդհանուր առմամ, կազմում է 2,3 տոկոս: Թվերը սպառնական չեն: Իսկ Գյուլլիդուզ (յայլաղը հետքերցրած), Զանի, Կարմրաշեն, Սալլի և Գյուղու գյուղերում տոկոսը բարձր է. այդ գյուղերի հսկողությունն անհրաժեշտ է: Եկապեղիցիայի աշխատողների ղեկուցման համաձայն, վորոշված և այդ շրջանում բաց անել մեկ շիկ մեն. կայան:

Այս բոլորը գրում եմ ձեզ նրա համար, վոր

ցանկանում եմ ներշնչել ձեզ, վորպեսզի դուք ել հսկողությունից վոչ մի սիֆիլիսոտի բաց չթողնեք, հոգատարություն ունենաք սիֆիլիսի մասին, անդամ յեթե ձեր շրջանը նրա տարածման տեսակետից համարվում է բարեհաջող: Պետք է դրսեվորել յուրաքանչյուր սիֆիլիսոտի, բժշկել նրան և յերկար ժամանակ խնամքով հսկել նրան:

Վորպեսզի պարզ լինի ձեր դերը վեն. Հիվանդությունների գիմ տարվելիք ընդհանուր պայքարում, վորին մենք բոլորս ել մասնակցելու յենք, յեզրափակման համար անհրաժեշտ եմ համարում բերել այստեղ մեր Միության մեջ վեներական հիմնարկությունների ցանցի նկարագրիրը:

«Ծրջանի կենտրոնում, նայած նրա տարածությանը, ազգաբնակության թվին ու վեն. Հիվանդություններով ախտահարությանը, պետք է կազմակերպել վեն. գիսպանսեր (շըրջանային միասնական գիսպանսերի վեն. բաժանմունք) կամ վենկայան: Պերփերիայի աշխատանքը կատարելու յեն շրջանային բժշկական հիմնարկությունները կամ շրջանի կենտրոնից ուղարկած ժամանակավոր խմբերը: Առջոր քաղաքներում և արդյունաբերական կենտրոններում գլխավորապես տեղական ազգաբնակության սպասարկման համար պետք է հիմնել վեն. գիսպանսերների վեն. բաժանմունք): Յերբ այս կենտրոնների ազգաբնակությու-

Նը զրված ե մեծ տարածության վրա, վորը  
մանավանդ տեղի ունի վիթխարի շինարարու-  
թյուններում, վեն. դիսպանսերները զանազան  
տեղերում բաժանմ ունքներ են բաց անում,  
վորպես ընդհանուր պոլիկլինիկաների մասնա-  
գիտական կամ միասնական դիսպանսերների  
վեներաբանական բաժանմ ունքներ։ Վոչ քա-  
ղաքային տիպի Փաբրիկ-գործարանային շեն-  
քերին կից պոլիկլինիկաներում պետք ե բաց  
անել վեն. կայաններ կամ մասնագիտական ա-  
ռանձնասենյակներ։ Յերկրային և մարզային  
կենտրոններում պետք ե հիմնել գիտահետա-  
զոտական վեներաբանական ինստիտուտներ,  
վորոնց վրա պետք ե գնել վեն. Հիվանդու-  
թյունների դեմ յերկրի և մարզի մասշտաբով  
պայքարի կազմակերպման պատասխանատը-  
վությունը։ Այս ինստիտուտներումն են կենտ-  
րոնացվում յերկրում կամ մարզում վեներա-  
կան ախտերով հիվանդների հաշվառումը, մը-  
շակման են յենթարկվում ստուգիչ թվերը,  
ընդլայնում են պերիֆերիայում գործող վե-  
ներական հիմնարկությունների ցանցի ծա-  
վալը. այստեղ շրջանային վեներաբանական  
հիմնարկությունների համար վեներաբաններ  
են պատրաստում։ Այս ինստիտուտների ուժե-  
րով են առողջապահության յերկրային և մար-  
զային բաժինները հրահանգում պերիֆերիա-  
յում գործող վեներաբանական հիմնարկու-  
թյուններին և ստուգում վեներաբանական


հիմնարկությունների ցանցի ընդլայնած ծա-  
վալի պլանի կատարումը։

Յերկրային և մարզային վեներաբանական  
ինստիտուտների աշխատանքի մեթոդաբանա-  
կան ղեկավարությունը պատկանում է հան-  
րապետական (կենտրոնական) վեներաբանա-  
կան ինստիտուտներին, վորոնք գտնվում են  
Առողջապահության Ժողովրդական Կոմիսա-  
րափառի իննամբ քի տակ։

Վեներական հիվանդությունների դեմ  
տարվելիք պայքարի կազմակերպչական հեր-  
թական խնդիրների մշակումը տեղի յե ունե-  
նում վեներաբանների յերկրային (մարզային)  
և հանրապետական խորհրդակցություննե-  
րում, ինչպես և վեներական հիվանդությունների դեմ սլայքարի համար պարբերաբար կա-  
յացող Համամիութենական համագումարնե-  
րում։ (Գայլպերեն)։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նամակ I.	Կոշտ շանկրի աղտօրոշման մասին	5
> II.	Սիֆիլիսի արորտիվ բուժումը	15
> III.	Բուժման խրոնիկ-ընդհատվող մեթոդը	2
> IV.	Սիֆիլիսի նախադրուշական բուժումը	40
> V.	Բուժման անընդհատ մեթոդը	48
> VI.	Ներքային համակարգության ուշ սիֆիլիսը	52
> VII.	Վողնուղեղի հեղուկի հետազոտությունը	62
> VIII.	Պրոցեսսից պարավիզի և տաքիսի բուժումը մալարիայով	70
> IX.	Սիֆիլիսի բուժելիության մասին	77
> X.	Ինչպես են բուժվում սիֆիլիսոտները	83
> XI.	Սիֆիլիսի անբավարար բուժման պատճառները	99
> XII.	Յարիշ-Հերցհեմիրի ռեակցիան	90
> XIII.	Արյան ներարկումից առաջացած սիֆիլիսը	104
> XIV.	Վասսերմանի ռեակցիալի մասին	113
> XV.	Շարունակություն, Տակունքային ռեակցիան	124
> XVI.	Մի քանի խոսք բնածին սիֆիլիսի ծագման մասին	133
> XVII.	Շարունակություն	143
> XVIII.	Սիֆիլիսով կրկնավարտկման և վերավարակման մասին	149
> XIX.	Անձնական նախադրուշություն	155
> XX.	Յերկանի Մաշկա-վեներաբանական ինստիտուտի վեճությունը	168



ՀԱՅՀ - ՀՀԳԲ

ՀՀ Ազգային գրադարան



NL0271863

7037

9162 2 д. 50 ч

Проф. Н. Р. Осипянц  
Письма врачу периферии  
ГИЗ ССР Армения Эривань